

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԴԱՍՏԱՆԱՐԱՆ

ՈՈՒԹԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԵԱԽՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՆ ՈՒ  
ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՎՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՌԸ  
ԹՈՒՐք ԲԱՐՁՐՎԱՇԻԵՎՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՈԱԶՄԱԿԱՆ  
ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

(XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ - XX ԴԱՐԻ ԿԵՆԵՐ)

9 (47.925)

վ-37

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՄԱՐԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

հ2

ՈՒԽԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ՆԱՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՆ ՈՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱԼՈՒԹՅԱՆ  
ԽՆԴՐԸ ԹՈՒՐՔ ԲԱՐՁՐԱՍԻՒՃԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ  
ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԽՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ  
(XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ - XX ԴԱՐԻ ԿԵՍԵՐ)

6496

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
2022



Գիրքը հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը:

Խմբագիր՝ բ.գ.թ. Էղզար Խաչատրյան  
Գրախոսներ՝ պ.գ.թ. Մինե Աբրահամյան  
բ.գ.թ. Անուշիկ Մարտիրոսյան

**Հետազոտություններ իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի  
ֆինանսական աջակցությամբ 15T-6A319 ծածկագրով գիտական  
թեմայի շրջանակում:**

### Մելքոնյան Ռուբեն, Պողոսյան Նաիրա

Ս 537 Հայկական հարցն ու Հայոց ցեղասպանության խնդիրը  
թուրք բարձրաստիճան քաղաքական և ռազմական գործիչ-  
ների հուշերում (XIX դարի վերջ-XX դարի կեսեր) / Ռ. Մել-  
քոնյան, Ն. Պողոսյան: Եր., ԵՊՀ հրատ., 2022, 110 էջ:

Գրքում ներկայացված են Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետու-  
թյան քաղաքական, ռազմական կյանքում XIX դարի վերջից մինչև XX դարի կե-  
սերը ակտիվ դերակատարում ունեցած գործիչների այն հուշերը, որոնք վերա-  
բերում են Հայոց ցեղասպանությանն ու Հայկական հարցին: Այդ հուշերը վերլու-  
ծության են ենթարկվել պատմական իրադարձությունների ու իրավական հա-  
մապատկերում, ընդգծվել են դրանցում առկա ռասխառական, ցեղասպան մտա-  
ծողության ցայտուն դրսնորումները: Գիրքը հասցեազրված է արեւալազետներին,  
պատմաբաններին, քաղաքագետներին ու ընթերցող լայն շրջանակին:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-5-8084-2588-0

© ԵՊՀ հրատ., 2022

© Մելքոնյան Ռ., Պողոսյան Ն., 2022

### ԱՌԱՋԱԲԱՆ

Պատմական իրադարձությունների ուսումնասիրության հա-  
մար, որպես կանոն, առաջնային կարևորություն ունեն փաս-  
տաթղթերն ու արխիվային նյութերը, ինչդրո առարկա թեմայի  
շուրջ ավելի վաղ իրականացված պատմագիտական հետազո-  
տությունները, ժամանակի մամուլի հրապարակումները և այլն:  
Սակայն ժամանակաշրջանի և կոնկրետ իրադարձության օբյեկ-  
տիվ պատկերն էլ ավելի ամբողջական դարձնելու հարցում ա-  
ռանձնահատուկ դեր ունեն ուսումնասիրվող ժամանակաշրջանի  
քաղաքական, ռազմական, հասարակական գործիչների հուշերը,  
օրագրերը, որոնք ուրույն սկզբնադրյուրային հենք են: Դրանցում  
հնարավոր է գտնել պաշտոնապես չլուսաբանված, փաստա-  
թղթերից, ելույթներից ու գրագրությունից դուրս մնացած դրվագ-  
ներ, յուրահատուկ տեղեկություններ, որոշակի մանրամասներ,  
որոնք թույլ են տալիս ոչ միայն առավել ամբողջական ներկայաց-  
նել պատմական դեպքերի ընթացքը, այլև տեսնել այդ ամենի ետ-  
նաբեմն ու իրական ենթատեսատը: Այս ամենով հանդերձ՝ պետք  
է փաստել նաև, որ հուշագրություններն ու օրագրերն ունեն  
սուրյեկտիվության որոշակի չափարաժին:

Օրագրեր, նոթեր, հուշագրություններ թողել են հայտնի  
գրողներ, դերասաններ, քաղաքական, հասարակական, ռազմա-  
կան գործիչներ: XIX դարի կեսերից հուշեր գրելու ավանդույթը  
տարածվել է նաև Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական  
վերնախավի, իսկ կայսրության անկումից ու Թուրքիայի Հանրա-  
պետության ձևավորումից հետո՝ իշխանության եկած նոր պաշ-  
տոնյանների ու գործիչների շրջանում: XIX դարի վերջի և XX դարի  
կեսերի Օսմանյան կայսրության/Թուրքիայի Հանրապետության  
հասարակական-քաղաքական և ռազմական զարգացումների կի-  
զակետում գտնվող գործիչների հուշերում քիչ չեն նաև հայերին,

Հայկական հարցին, Հայոց ցեղասպանությանը վերաբերող ուշագրավ անդրադարձներ:

Սույն ուսումնասիրության շրջանակում առանձնացրել ենք XIX դարի վերջի և XX դարի կեսերի թուրքական հասարակական-քաղաքական զարգացումներին ի մոտո ծանոթ կամ դրանց առաջնային դերակատարներ հանդիսացող գործիչների հուշերը, օրագրերը, որոնցում կան կարևոր տեղեկություններ Հայոց ցեղասպանության և ընդհանրապես հակահայկական քաղաքականության մասին, իսկ երբեմն է՝ ոճրագործների կատարված հանցանքի մասին ուղղակի կամ անուղղակի խոստովանություններ ու ինքնաբացահայտումներ: Հայկական հարցին ու Հայոց ցեղասպանությանը ուղղակիորեն ու անուղղակիորեն անդրադարձել են թե՛ սուլթան Աբդուլ Համիդ II-ը, թե՛ երիտրուրքական վերնախավի ներկայացուցիչները, այդ թվում՝ պարագլուխներ Թալեմարը, Զեմալը, թե՛ արդեն քեմալական/հանրապետական շրջանի գործիչներ Խամեթ Ինյոնյուն, Քյազըմ Քարաքերիրը և այլք:

Օսմանյան տարբեր պաշտոնյաների հուշերում հայկական թեմատիկայի առկայության ու դրանց ուսումնասիրության կարևորության մասին նշել են տարբեր մասնագետներ: Օրինակ՝ օսմանագետ Ավետիս Փափազյանը նկատել է. «...Առանձին հետաքրքրություն կարող են ներկայացնել տվյալ ժամանակաշրջանի թուրք պետական և մշակութային գործիչների հուշագրությում արևմտահայության վիճակի մասին տեղ գտած նկարագրություններն ու նրանց տեսակետները:...Չնայած նրանց տեսակետների արատավորությանը, դեպքերի նկարագրման ընթացքում ունեցած շահադիտական կողմին՝ նրանց հուշերում և մենագրություններում առկա է առաջարկ անդրադարձների համար»<sup>1</sup>:

Թյուններում պարունակվում են զգալի շափով կոնկրետ նյութեր»<sup>2</sup>:

Հայկական հարցին ու Հայոց ցեղասպանությանը ավելի վաղ շրջանի թուրք քաղաքական ու ուսումնասիր մեզանում որոշակիորեն ուսումնասիրված են<sup>2</sup>, սակայն հատկապես մինչև XX դարի կեսերն ընկած ժամանակահատվածի ընդգրկմամբ համապարփակ հետազոտություններ չկան: Մեր աշխատանքում տեղ են գտել ավելի վաղ շրջանի թուրք այն գործիչների հուշերը, որոնք կամ այլ գիտնականների կողմից չեն ուսումնասիրվել, կամ հետազայում տպագրվել են նրանց հուշագրությունների, օրագրերի առավել ամբողջական տարբերակները, և դրանցում կան կարևոր հատվածներ, որոնք նախորդ հրատարակություններում չեն եղել:

Ամփոփելով ասվածը՝ նշեմ, որ սույն աշխատանքի հիմնական ու առաջնային նպատակներից է, ուսումնասիրելով թուրքական քաղաքական, հասարակական ու ուսումնական գործիչների հուշերում տեղ գտած անդրադարձները Հայկական հարցին, Հայոց ցեղասպանությանը, երևան հանել թուրքական պետական և

<sup>1</sup> Փափազյան Ա., Թուրքական պետական և քաղաքական գործիչները արևմտահայության մասին, Մերձավոր և Միջին Արևելյան երկրներ և ժողովուրդներ, Երևան, 1985, հ. 12, էջ 80:

<sup>2</sup> Հայոց պատմության տարբեր փուլերի, Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական պատմագրության կերպիների մասին կան արժեքավոր ուսումնասիրություններ, որոնցից հարկ ենք համարում հատկապես առանձնացնել Ս. Զելյայանի, Ե. Սարգսյանի, Ռ. Սահակյանի, Ա. Փափազյանի կարևոր աշխատությունները Յուլայն Մ. Վորոս գրականության մեջ, Երևան, 1970, Սարգսյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենագիտուումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, Փափազյան Ա., Թուրքական պետական և քաղաքական գործիչները արևմտահայության մասին, Մերձավոր և Միջին Արևելյան երկրներ և ժողովուրդներ, Երևան, 1985, հ. 12, էջ 80-97: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնելու ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանի մենագրությունը՝ Սաֆրաստյան Ռ., Սուսրաֆան Քեմալ, պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Երևան, 2019:

հասարակական գերակա մտածողության կարևոր շերտերը: Այդ ամենը նաև լույս են սփռում Թուրքիայի Հանրապետությունում հայերի նկատմամբ վարվող քաղաքականության առանձնահատկությունների, հայտադրության ակունքների և թուրքական կեղծարարության ու ժխտողականության հիմքերի վրա: Կարծում ենք, որ ուսումնասիրությունը կարող է նաև նպաստել հայության դեմ իրականացված ոչիրի փաստական, պատմագիտական ու իրավական տվյալների բազայի համալրմանը: Հուսով ենք, որ աշխատանքում օսմանյան/թուրքական տարբեր գործիչների հուշերից թարգմանաբար ներկայացված ընդարձակ մեջբերումները, ինչպես նաև արված վերլուծություններն ու եզրահանգումները օգտակար կլինեն այլ մասնագետներին տարաբնույթ ուսումնասիրություններ կատարելիս:

*Ռուբեն Մելքոնյան,  
պ.դ., պրոֆեսոր*

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

#### 1.1. Գահընկեց սուլթանի կամ նրան վերագրվող հուշերը

Թուրքական պատմագիտական շրջանակում կա վարկած, որը սուլթան Աբդուլ-Համիդ Երկրորդ գահընկեցությունից հետո՝ 1909 թ., զրի է առել հուշեր իր կառավարման տարիների ու այդ ընթացքում տեղի ունեցած տարբեր իրադարձությունների մասին: Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ Աբդուլ Համիդի հուշերի<sup>3</sup>, մասնավորապես դրանց հավաստիության վերաբերյալ թուրքական պատմագրության մեջ կան լուրջ տարակարծություններ<sup>4</sup>: Այնուամենայնիվ, օսմանյան սուլթանի կամ նրան վերագրվող հուշերը, ըստ տարբեր կարծիքների, զրի են առնվել նրա գահից զրկվելուց հետո տնային կալանքի ժամանակ: Աբդուլ Համիդը նախ ներկայացնում է իր հուշեր զրելու շարժադիրը: «Ին կառավարման 33 տարիների ընթացքում կայսրությունում տեղի են ունեցել այնպիսի իրադարձություններ, որոնց մասին միայն ես գիտեմ և ինձ շրջապատող մի քանի մարդիկ: Եվ եթե այդ մասին ես չգրեմ, և նրանք ել չպատմեն, ապա այդ իրադարձությունները պատմությանն անհայտ կմնան... գտնում եմ, որ իմ հիշողությունները ոչ միայն իմն են, այլև պատմությանը»<sup>5</sup>:

Աբդուլ Համիդ Երկրորդն իր հուշերում որոշ անդրադարձներ է կատարել հայերին վերաբերող խնդիրներին, սակայն ակնհայտ

<sup>3</sup> Տե՛ս Bozdağ İ., Sultan Abdülhamid'in Hatıra Defteri, İstanbul, 1985:

<sup>4</sup> Տե՛ս Birinci A., Sultan Abdülhamid'in Hatıra Defteri, DİVÂN İlimi Araştırmaları, sy. 19 (2005/2), s. 177-194:

<sup>5</sup> Bozdağ İ., նշվ. աշխ., էջ 141:

է, որ նա փորձել է խեղաթյուրել պատմական իրողությունները, հայերի կոսորածները ներկայացնել ոչ թե որպես պետական մշակված քաղաքականության մաս, այլ՝ միջերնիկ բախումներ՝ դրանով քողարկելով իր վարած ցեղասպան քաղաքականությունը: Արդու Համիդը անդրադարձել է այն իրողությանը, որ Հայկական հարցը անդադար շրջանառվել է եվրոպական թերթերում, նաև այդ միջոցով եվրոպական հասարակությանը տրամադրել են իր դեմ: Իսկ հուշագրության «Կարմիր կենդանի» (Kızıl Hayvan-Bete Rouge) վերնագրված բաժնում նա գրում է, որ այդպես իրեն առաջին անգամ անվանել է ֆրանսիացի փիլիսոփա ու գրական գործիչ Պիեռ Քիառը, որը, 1893 թ. զալով Ստամբուլ, հայկական դպրոցներում «թշնամանք և երկպառակություն է սերմանել»: Արդու Համիդը Սասունում ու Զեյթոնում առաջացած խնդիրները կապում էր Քիառի անվան հետ՝ նրան մեղադրելով հայ ժողովրդի շրջանում հակասութանական ու ազատագրական քարոզություն ծավալելու համար<sup>6</sup>:

Ինչպես և կանխատեսելի էր, Արդու Համիդը հայ-թուրքական լարվածության զինավոր մեղավոր էր համարում Ռուսական կայսրությանը, որն էլ իբրև հրահրել է հայերին ապստամբել օսմանյան իշխանությունների դեմ: Միևնույն ժամանակ զահընկեց սուլթանը խոսում էր Սասունի հայերի ապստամբության և դրա ճնշման, ինչպես նաև 1905 թ. հայերի կողմից նրա դեմ կատարված մահափորձի մասին: Հետաքրքիր է, որ Արդու Համիդը մի առանձին բաժին է հատկացրել հայ քաղաքական գործիչների ու երիտրուրքերի համագործակցությանը:

Արդու Համիդի կամ նրան վերագրվող այս հուշերը, մեր կարծիքով, հատկապես Հայկական հարցի հետ կապված առանձնակի արժեք չեն ներկայացնում, իսկ ընդհանրապես օսմանյան

սուլթանի մոտեցումները, գնահատականները հայկական թեմատիկայի վերաբերյալ առանձնահատուկ հետաքրքիր են<sup>7</sup>, սակայն արտացոլված են ոչ թե իր, այլ զահընկեցությունից հետո իր անմիջական շրջապատում գտնված անձանց հուշերում:

## 1.2. Արդու Համիդ Երկրորդի անձնական գրագիր Թահսին փաշայի հուշերը

Արդու Համիդի անձնական գրագիր Թահսին փաշան իր հուշերում ներկայացնում է արդեն զահընկեց սուլթանի տեսակետները հայերի, Հայկական հարցի վերաբերյալ: Բացի դրանից՝ հենց ինքը՝ Թահսին փաշան, լինելով բարձրաստիճան պաշտոնյա, ներկայացնում է իր մոտեցումները հայերի մասին, որոնք կարելի է նաև համարել ընդհանուր օսմանյան պետական-պաշտոնական տեսակետի օրինակներ կամ գերակայող պետական մտածողության դրսնորումներ: Թահսին փաշան Արդու Համիդի զահընկեցությունից հետո մի շարք այլ քաղաքական գործիչների հետ աքսորվել է Խիոս կղզի: Աքսորից մի քանի տարի անց ներում ստանալով՝ Թահսինը վերադարձել է Ստամբուլ, սակայն այլևս պետական պաշտոն չի զբաղեցրել: Սահացել է 1930 թ.<sup>8</sup>, իսկ դրանից մեկ տարի անց՝ 1931 թ., թուրքական «Միլլիյեր» թերթում սկսել են հրապարակվել նրա հուշերը, որոնք ավելի ուշ

<sup>7</sup> Ընդհակապես Արդու Համիդ Երկրորդի կերպարի նկատմամբ թուրքական պատմագրության, մասնավորապես հայկական թեմատիկայի մասին մանրամասն տես՝ Հակոբյան Տ. Արդու Համիդ II-ի աքսորի տարիները Ժամանակակիցների հուշերում // «Հայագիտության հարցեր», 2018, 3 (15), էջ 97-107, Հակոբյան Տ. Հայկական թեմատիկան Արդու Համիդ 2-րդի հուշագրություններում // «Արևելագիտության հարցեր», Երևան, 2015, հ. 9, էջ 137-149:

<sup>8</sup> Թահսին փաշայի կենսագրությունը մանրամասն տես՝ ս [https://www.yeniakit.com.tr/kimdir/Tahsin\\_Pa%C5%9Fa](https://www.yeniakit.com.tr/kimdir/Tahsin_Pa%C5%9Fa):

տպագրվել են մեկ գրքով՝ «Արդու Համբդ. Յըլլըզի հուշեր»<sup>9</sup> վերնագրով:

Ավելորդ չէ նշել, որ թուրքական հասարակական-քաղաքական միջավայրում Թահիսին փաշան հայտնի է «Սուլթան Համբդի գաղտնընկեր» անունով, և այդ հանգամանքը ևս որոշակի կարևորություն է տալիս նրա հուշերին: Պետք է նկատել, որ այդ հուշերում ցայտուն դրսորված են հետազայում թուրքական պաշտոնական թեզի բաղադրիչներ դարձած հակահայկական հայտնի ու օբյեկտիվ իրականությանը որևէ առնչություն չունեցող դրույթներ: Գրքի առաջարանում Թահիսին փաշան նշում է. «Իմ նպատակն է ճշգրիտ ներկայացնել այն ժամանակաշրջանի դեպքերն ու իրադարձությունները, որոնց ականատեսն եմ եղել, և գոնե մի քիչ լուսավորել այն պատմաբաններին, որոնք ապագայում Արդու Համբդ Երկրորդի ժամանակաշրջանի ուսումնասիրությամբ են զբաղվելու»<sup>10</sup>:

Հայկական հարցը՝ որպես համբդյան շրջանի առավել նշանակալի խնդիրներից մեկը, իր ուրույն տեղին ունի Թահիսին փաշայի հուշերում: Նա, Հայկական հարցի տրամարանական ժամանակագրային շարադրումից խուսափելով, սահմանափակվում է զուտ դրվագային նկարագրություններով: Ուշագրավ է, որ հայերին շառնչվող գլուխները նա վերնագրում է «Առաջին հայկական դեպք», «Երկրորդ հայկական դեպք» և դրանց շարադրման համատեքստում հնարավորինս խուսափում կոնկրետ փաստերից, անուններից, բավարարվում ընդհանրական արտահայտություններով ու հակահայկական պնդումներով: Օսմանյան կայսրության տարածքում հայերի բնակության վայրերի, ունեցած դերի մասին Թահիսին փաշան, ի տարբերություն այլ օսմանյան գործիչների, չի խոսում: Նա նույնիսկ առաջ չի քաշում «դարավոր հայ-

թուրքական խաղաղ համակեցության» կամ «բարեկամության» թեզերը: Հայերի մասին առաջին հիշատակումն անելիս միայն նշում է, որ «հայերի ապստամբությունը վերջին հիսուն տարիների ամենակարևոր հեղափոխական գործողություններից էր»<sup>11</sup>: Իր շարադրանքի ողջ ընթացքում նա շեշտում է, որ «հայերը դրսից ստացած օգնության ու փողի միջոցով երկրում խառնակշություններ էին կազմակերպում՝ այսկերպ ցանկանալով օրինականացնել Եվրոպայի միջամտությունը օսմանյան գործերին»<sup>12</sup>:

Հատկանշական է, որ գրքի տարբեր հատվածներում հայերի մասին խոսելիս Թահիսին փաշան ներկայացնում է Արդու Համբդի վերաբերմունքը նրանց նկատմամբ: «Սուլթան Համբդը վստահ էր, որ հայերի նկատմամբ բարեգութ ու մեղմ վերաբերմունքը ոչ մի օգուտ չի տալու, և նման պահկածքը հայերի մոտ շնորհակալության կայծ իսկ չի արթնացնի»: Պատմելով հայերի հետ կապված այլ դրվագներ ևս ու կրկնելով թուրքական պաշտոնական թեզի տարբեր դրույթներ՝ Թահիսին փաշան եզրակացնում է. «Համբդը հայերին իսկապես ատում էր»<sup>13</sup>:

### 1.3. Արդու Համբդ Երկրորդի անձնական թժիշկ Աթրֆ Հուսեյն բեյի հուշերը

Արդու Համբդի անմիջական շրջապատի մյուս անձը, որի հուշերը առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում, սուլթանի գահընկեցությունից հետո արտորի տարիներին (1909-1918 թթ.) նախ Սալընիկում, ապա նաև Ստամբուլի Բեյլերբեյ պալատում նրա անձնական թժիշկ Աթրֆ Հուսեյն բեյն է: Թժշկի ու սուլ-

<sup>9</sup> Տե՛ս Tahsin Paşa, Yıldız hatıraları (hazırlayan: Ahmet Zeki İzgöer), İstanbul, 2015:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 69:

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 209:

թանի գրույցները ներկայացնող օրագրում<sup>14</sup> Առաջին համաշխարհային պատերազմի և Օսմանյան կայսրության ներքին իրավիճակի բննարկման համատեքստում անդրադարձ է կատարվում նաև հայերին:

Կայսրության ոչ մուտուլման ժողովուրդների մասին խոսելիս Արդու Համիդը կարծես թե առավելություն է տալիս հույներին՝ զարմանալիորեն շեշտելով, որ նրանք էին մի ժամանակ Ստամբուլի տերերը. «Մենք Ստամբուլը հույներից ենք գրավել: Գրավման օրը նրանք ուզում են սուզ պահել»<sup>15</sup>: Կամ էլ՝ «հոյների մղումները [ազատագրվելու] հասկանում եմ, քանի որ Ստամբուլը նրանցից ենք գրավել: Նեղանալու իրավունք ունեն»<sup>16</sup>: Հոյների ու բուլղարների՝ Օսմանյան կայսրությունից ազատագրվելու ցանկությունը սուլթանը, փաստորեն, արդարացնում է հունական ու բուլղարական պետականությունների գոյությամբ, դրան հակադրում հայերի պետականազուրկ լինելու հանգամանքը և այդու հայերի պետականություն ունենալու ցանկություններն անհիմն է համարում. «...Մենք ենք հայերին ընդունել: Նրանք պատմությունը սխալ են ներկայացնում: Իրանցիների պատմությունը փորձում են սեփականաշխորհել: Իրանից, Ռուսաստանից փախչելով՝ մեզնից ապաստան են խնդրել, մենք պաշտպանել ենք նրանց»<sup>17</sup>: Փաստորեն՝ Արդու Համիդը քաղաքական գործոն է համարում XV դարում Կոստանդնուպոլիս/Ստամբուլի բյուզանդական պատկանելությունը և այդպիսով հիմնավորում հույների անկախանալու իդաերը, իսկ հայկական պետականությունների (Անիի Բազրատունյաց, Կիլիկյան հայոց թագավորություններ) գոյության փաստը անտեսում կամ ներկայացնում որպես այլոց

<sup>14</sup> St. u Hülagü M., Sultan Abdülhamid'in sürgün günleri: Hususi doktoru Atif Hüsein beynin hatıraları, İstanbul, 2007:

<sup>15</sup> Նոյն տեղում, էջ 216:

<sup>16</sup> Նոյն տեղում, էջ 233:

<sup>17</sup> Նոյն տեղում:

պատմության սեփականաշխորհման օրինակ: Ի դեպ, այս թեզը ևս, թե հայոց պետականություններ երբեւ գոյություն չեն ունեցել, և Արտաշեսյանների, Արշակունինների պետությունները իրականում հայկական չեն եղել, այլ իրանական, նույնպես նորօրյա թուրքական պատմագրության մեջ բավական տարածված է, և, փաստորեն, դրանով ևս թուրք պատմակեղծարարները շարունակում են «արյունոտ սուլթանի» գործը: Այս և այլ անտրամաբանական թեզերով են սնվում թուրքական ու աղքաղչանական պաշտոնական խոսույթներն ու դրանք այդ երկրների դեկավարների հուտորաբանության անբաժանելի մասն են կազմում:

Բժիշկ ԱրքՓ Հուսեյն բեյի հուչերում նաև ներկայացված են գահընկեց սուլթան Արդու Համիդի տեսակետները Օսմանյան կայսրության տարբեր ոլորտներում հայերի ունեցած դերի մասին, բայց վերջինս դրանց անդրադառնում է կրկին հակահայկական շեշտադրումներով: Օրինակ՝ խոսելով իր հոր՝ սուլթան Արդու Մեջինի կառավարման ժամանակաշրջանից՝ նա նշում է, որ այդ տարիներին ամենավստահելի աշխատողները՝ պալատական խոհարարից ու սեղանապետից մինչև ոսկերիչներ, հայերն են եղել<sup>18</sup>: Սակայն հայերը, ըստ Արդու Համիդի, իրենց դիրքով չբավարարվելով, փորձել են հայկական նահանգների համար «անհեթեր» բարեկինուումներ պահանջել: Բժիշկ ԱրքՓ բեյի օրագրում 1911 թ. ապրիլի 12-ի թվագրմամբ ներկայացված է նրա ու գահընկեց սուլթանի հետևյալ գրույցը. «Արքին փաշան [արտաքին գործերի նախարարության խորհրդական] լավ ֆրանսերեն էր խոսում: Մի օր տեսակցություն խնդրեց: Զերքին ծրար կար: Ասաց, որ իրեն են ուղարկել, ինքն էլ ինձ է բերել: Անասոլիայի հայաբնակ տարածքներում ընդհանուր նահանգապետ նշանակելու և մի շարք բարեկինուումներ անելու վերաբերյալ էր: Լավ, ասացի, բեր կարդանք: Եթե իւլամիտ բան լինի, մի բան կանենք:

<sup>18</sup> St. u նոյն տեղում, էջ 153, 186:

Կարող եմ երդվել, որ զրոդն էլ անձամբ Արթին փաշան էր»<sup>19</sup>: Արդու Համիդը խիստ բացասական է ներկայացնում նախ Պոլս հայոց պատրիարք (1894-1896, 1908 թթ.), իսկ հետագայում՝ (1908-1910 թթ.) նաև Ամենայն հայոց կաթողիկոս Մատթևոս Բ Կոստանդնոպոլսեցուն. «Էջմիածնի կաթողիկոս Խզմիրյան էֆենդին հայերի առաջնորդն է: Հայկական դեպքերի ժամանակ ես նրան աքսորել էի: Նրան հայերը սուրբ են համարում... Ստամբուլում է ապրել: Ճանաչում եմ: Շատ խելացի մարդ է: Խսկական զիսացավանք»<sup>20</sup>:

Խուելով հայերի շրջանում իր հանդեա եղած բացասական տրամադրություններից՝ Արդու Համիդը հետևյալ տեսակետն է հայտնում իր բժշկին. «...Իմ դեմ ապստամբեցին, քանի որ ես իմ պարտականություններն են անում, հետո թշնամացան: Հայոնի է, թե ով կազմակերպեց պայթյունները»<sup>21</sup>: Այնուհետև չկարողանալով թաքցնել հայերի հանդեպ իր ատելությունը՝ զահընկեց սուլթանը նշում է. «Անիծյալ հայերն իրենց նպատակներին հասնելու համար ոչ թե բողոքական, այլ մուտուման էլ կդառնան»<sup>22</sup>: Ըստ նրա՝ Ստամբուլից ու «Անատոլիայից» ԱՄՆ մեկնած հայերն այնտեղ էլ շարունակել են իրենց հակաթուրքական գործունեությունը և ընդունելով բողոքականություն ու դառնալով ԱՄՆ քաղաքացի՝ վերադարձել են Օսմանյան կայսրություն և ամենուր ամերիկյան դպրոցներ բացել, ինչը կանխելու համար ինքն անձամբ միջոցներ է ձեռնարկել<sup>23</sup>:

Արդու Համիդի ծայրահեղ հայատյացությունը առավել խորությամբ ընկալելու տեսանկյունից բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում Հայոց ցեղասպանության տարիներին ԱրքՓ

թէի ու զահընկեց սուլթանի զրոյցները, որոնք տեղ են գտել բժշկի օրագրում: Դրանից պարզ է դառնում, որ տնային կալանքի մեջ գտնվող Արդու Համիդը հատուկ հետաքրքրվել է հայերի հանդեա իրականացվող պետական ցեղասպան քաղաքականությամբ՝ չթաքցնելով իր զիսանակությունը երիտթուրքերի գործողություններից: Այդ ընթացքում նա շարունակում է նաև ինքնագովեստով խոսել ժամանակին իր կողմից իրականացված հակահայկական քաղաքականության մասին: Ողջունելով երիտթուրքերի հակահայկական ու ցեղասպան քաղաքականությունը՝ զահընկեց սուլթանը բացեիրաց ցանկություն է հայտնում, որ հոյներն էլ արժանանան հայերի ճակատազրին. «Աստված տա՝ այնպես լինի հոյներին էլ այստեղից քշենք, զոնե այս խնդիրն էլ լուծենք: Փառք Աստծո, Զայկական հարց այլևս չկա...»: Այնուհետև համոզվելով համար հարցնում է ԱրքՓ բեյին. «Արդյո՞ք բոլոր հայերին են աքսորել»: «Այո՛, ասացի ես, – պատասխանում է բժիշկը, – նույնիսկ պատրիարքին են ուղարկել Երուսաղեմ»<sup>24</sup>: Փաստորեն՝ զահընկեց սուլթանը ամենայն ուշադրությամբ հետևել է Հայոց ցեղասպանության ընթացքին, և չի բացառվում, որ նաև խորհուրդներ տված լինի երիտթուրք պարագլուխներին, մանավանդ եթե հաշվի առնենք, որ տվյալ ժամանակաշրջանում Արդու Համիդին են այցելել և թալեաթը, և՝ էնվերը<sup>25</sup>:

Արդու Համիդը հետաքրքրվել է նաև Վանի հայերի ինքնապաշտպանության թեմայով և կրկին ինքնազովասանական շեշտադրումներ արել. «Թերթերում կարդացի, որ հայերը Վանում ուսւների հետ են դաշնակցում: Ես ճիշտ էի: Դավաճանները: Միայն թե այստեղ էլ [Ստամբուլում] ապստամբություն չանեն: Թերթերը սահմանադրության հոչակումից հետո հայերին կողմ էին, իսկ ինձ՝ դեմ: Այժմ ճշմարտությունն ի հայտ է զալիս: Եկեղե-

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 125:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 233:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 154:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 122:

ցիներում, պահեստներում ոռում, ատրճանակ, զենք էին պահում: Այս ամենից ես ավելի քան տեղյակ եմ»<sup>26</sup>:

Ըստ Արդուլ Համբիի անձնական թժկի՝ գահընկեց սուլթանը ակտիվորեն հետևել է նաև միջազգային դրույթյանը, աշխարհաքաղաքական զարգացումներին, հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին մոտ իր մտահոգությունները հայտնել Օսմանյան կայսրության ապագայի վերաբերյալ: Այդ մտահոգությունների ծիրում հայկական գործոնը կամ հայերը կրկին առաջնային տեղ են զբաղեցրել: Նա վստահ է եղել, որ մեծ տերությունները փորձելու են մասնատել Օսմանյան կայսրությունը. «Կարծում եմ՝ Անգլիան մեր երկրում Հայաստան, Քրդստան, Արաբստան կտտեղծի»<sup>27</sup>: Ըստ Սուլթանի՝ ԱՄՆ ևս անկախ Հայաստանի կողմնակից է՝ «...[Ամերիկան] ավանդաբար հայերի պաշտպանն է: Խաղաղության բանակցությունների ժամանակ էլ նրանց կօգնի: Հավանաբար անկախ Հայաստան ստեղծելու հարցում էլ կօգնի»<sup>28</sup>: Ապա ավելացնում է. «Եթե Հայաստան ստեղծվի, Անատոլիայում էլ հանգիստ չենք ունենա»<sup>29</sup>:

Սուլթան Արդուլ Համբիի վերը նշված հայացքները, զնահատականները փաստում են, որ ցեղասպան քաղաքականությունը թուրքական պետությունում ոչ թե այս կամ այն տիրակալին, վարչակարգին հատուկ երևույթ է, այլ պետական մտածողության դրսերում. ըստ այդմ՝ և Օսմանյան կայսրության, և Թուրքիայի Հանրապետության համար մասնագետների կողմից կիրառվող «ցեղասպան պետություն» եզրույթն ունի անառարկելի հիմնավորվածություն: Ցեղասպան մտածողությունն ու հայկական անկախ պետականության ձևափորվելու հանդեպ անհանգստությունը հստակորեն դրսերվում են Արդուլ Համբի-երիտրուրքեր-թեմալականներ շղթայում և նրանց գործողություններում:

<sup>26</sup> Hülagü M., Եշվ. աշխ., էջ 253:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 338:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 310:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 322:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԵՐԻՏԹՈՒՐՔ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀՈՒՇԵՐԸ

#### 2.1. ԶԵՄԱՎ ՓԱՇԱՋԻ ԻՆՉԵՐԸ

Երիտրուրքական իշխող եղյակի անդամ, ուզմածովային գործերի նախարար Զեմավ Փաշան հայերիս պատմության մեջ առանձնահատուկ դերակատարում է ունեցել: Սիրիայի նահանգապետի պաշտոնը զբաղեցնելով՝ նա անմիջականորեն տնօրինում էր անապատ արտրված հայերի ճակատագրերը: Զեմավի դաժանության մասին լեզենդներ են հյուսվել: Սիրիայում ու Լիբանանում ցանկացած անհնագանդություն արյան մեջ խեղդելու համար տեղի արաբների շրջանում, ինչպես նաև արաբական պատմագրության մեջ նա հիշատակվում է «արյունոտ մասգործ» անվամբ: Առաջին համաշխարհային պատերազմում պարտությունից հետո՝ 1919 թ. հուլիսի 5-ին, Կ. Պոլսում ուզմական արտակարգ ատյանի որոշմամբ Զեմավը հեռակա կարգով դատապարտվեց մահապատժի հայերի ու արաբների դեմ գործած հանցաների համար: Սակայն մինչ այդ դիմելով փախուստի՝ Զեմավը հնվերի ու Թալեարի հետ միասին ապաստան է գտել Եվրոպայում, որտեղից փորձել է միջնորդի դեր ստանձնել բոլշևիկյան ու քեմալական կառավարությունների միջև: Այս հարցով մի քանի անգամ եղել է Սոսկվայում, և հերթական այցի ժամանակ Թիֆլիսում սպանվել է հայ վրիժառուներ Պետրոս Տեր-Պողոսյանի, Արտաշես Գևորգյանի ու Ստեփան Շաղիկյանի կողմից:

Եվրոպա տեղափոխվելուց հետո Զեմավ փաշան սկսել է զրի առնել իր հուշերը: Ինքն անձամբ շեշտում է, որ այդ հուշերի նպատակն է, ոուս դիվանագետ Ա. Սանդելշտամի (1869-1949

թթ.)<sup>30</sup> ու ԱՄՆ դեսպան Հենրի Սորգենթաուի (1891-1967 թթ.)<sup>31</sup> գրքերին հակադրվելով, սեփական մեխնաբանությամբ ներկայացնել ՀՀ դարի սկզբի թուրքական իրականության, մասնավորապես Առաջին համաշխարհային պատերազմի տարիների իրադարձությունները: Հուշերն առաջին անգամ տպագրվել են 1919 թ. Բեռլինում գերմաներենով, 1922 թ. Կ. Պոլսում լույս է տեսել օսմաներեն, իսկ Թիֆլիսում՝ ռուսերեն տարբերակը: 1933 թ. տպագրվել է արդեն լատինատառ թուրքերեն տարբերակը: Ուշագրավ է, որ Թուրքիայում Զեմալ փաշայի հուշերը բազմից սրբագրվել են, և տարբեր տարիների հրատարակությունները էականորեն տարբերվում են իրարից: Մեր ուսումնասիրության համար մենք օգտագործել ենք երիտրուրք պարագլիի հուշերի առավել ընդգրկուն տարբերակը, որը նաև ներառում է հեղինակի կողմից վերջնական ձեռագրում չընդգրկված հատվածներ ու սևագրերը<sup>32</sup>:

Հուշագրության մեջ Զեմալ փաշան անդրադառնում է ՀՀ դարի սկզբի մի շարք կարևոր հարցերի՝ ներքին բյուրոկրատական խնդիրներից մինչև արտաքին քաղաքականություն. որոշակի տեղ է հատկացված նաև հայերին ու Հայկական հարցին: Հայերի մասին իր մտորումները Զեմալ փաշան սկսում է հետևյալ պնդմամբ. «Մենք հայերին և, հատկապես, հայ հեղափոխականներին հովաներից ու բոլորներից առավել ենք սիրում, քանի որ նրանք այդ երկուսից ավելի մարդկային ու հերոսական են: Երկերեւանի չեն: Ընկերների նկատմամբ հավատարիմ են, թշնամիների նկատմամբ՝ անբեկուն»: Հայերին նկարագրելով որպես «ամենահավատարիմ» ազգ՝ նա նշում է, որ մինչ XIX դարի կեսերը՝ Ղրիմի պատերազմից (1853-1856 թթ.) առաջ և նույնիսկ հետո,

«Անատոլիայում», Ռումելիայում ու Ստամբուլում հայերի ու բուրքերի միջև այնպիսի համախմբվածություն կար, որ օսմանյան պատմագրության մեջ Հայկական հարցի մասին հիշատակում անգամ չի գրանցվել<sup>33</sup>, այսինքն՝ այն գոյություն չի ունեցել: Շեշտելով, որ հայերը դարեր շարունակ պետականություն չեն ունեցել՝ Զեմալը թուրք-հայկական բարեկամության հիմք համարում է թուրք-օսմանների իբրև թե բարյացակամ վերաբերմունքը նվաճված ժողովուրդների նկատմամբ. «Եթե օսմանները հաղթեցին Քուրդիստանի բեյերին, նրանց իշխանության տակ գտնվող հայերը անկախ պետություն չունեին: Հայերը քուրդ բեյերի հալածանքներին էին ենթարկվում: Ինչ ուզում է ասի դեսպան Սորգենթաուն, որքան էլ փորձի ժխտել պատմական իրողությունները, օսմանցիների կողմից բարեկամաբար ընդունված հայերը նրանց շնորհակալ էին, իինչ դար հայ-թուրքական բախում չի եղել թուրքերեն շխտող ու թուրքական ավանդույթները չընդորինակած հայ չի եղել»<sup>34</sup>: Կրկնելով թուրքական պետական թեզը՝ Զեմալը նոյնպես հայերի ու թուրքերի միջև խնդիրներ ստեղծելու հիմնական մեղավոր համարում է Ռուսական կայսրությանը: Զնայած, ինչպես արդեն նշել ենք, Եվրոպա մեկնելուց հետո Զեմալը ակտիվ կապերի մեջ է եղել բոլշևիկների հետ, իր հուշերում երիտրուրք պարագլուխը հանդես է գալիս որպես մոլի ոռուսաց: «Ռուսաստանը, անկասկած, Թուրքիայի զիսավոր թշնամին էր, իսկ Ստամբուլի գրավումը՝ նրա ամենամեծ երազանքը»<sup>35</sup>: Համեմատություն տանելով ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի առաջ քաշած «վիորքամասնությունների իրավունքի պաշտպանության» սկզբունքի ու Օսմանյան կայսրությունում գործող միլերների համակարգի միջև՝ Զեմալը գրում է. «Եթե Եվրոպայում

<sup>30</sup> Տե՛ս Mandelstam A., *Le Sort de L'Empire Ottoman*, Paris, 1917:

<sup>31</sup> Տե՛ս Morgenthau H., *Ambassador Morgenthau's story*, New York, 1918:

<sup>32</sup> Տե՛ս Kabacalı A., *Cemal Paşa: Hatıralar*, İstanbul, 2015, s. 10-11:

<sup>33</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 361.

<sup>34</sup> Նոյն տեղում, էջ 362:

<sup>35</sup> Նոյն տեղում, էջ 135:

«փոքրամասնությունների իրավունքների» մասին չէին ել մտածում, դեռ 1453 թ. օսմանյան սուլթանը [Մեհմետ Երկրորդը] իր հզորության զագաթնակետին հուսական պատրիարքարանն իր տեղում է թողնում, հոյսներին ամուսնության, ժառանգության, կրթության իրավունքներ ու արտօնություններ շնորհում, անատոլիական քրդերի հարձակումների կիզակետում գտնվող մեկ այլ քրիստոնյա ազգի համար պատրիարքարան հիմնում և նրա իրավունքներն ել ճանաչում: Նման վերաբերմունքից հետո այսօր Մանդելշտամի պես մարդիկ անամոթաբար ատում են, թե մուսուլմանները քրիստոնյաների իրավունքներով գրաղվել չեն բարեհածել»<sup>36</sup>:

Խոսելով Օսմանյան կայսրությունում հայերի կարգավիճակի մասին՝ Զեմալն ընդգծում է պետական ապարատում ընդգրկված հայերի մեծ թիվը, իսկ հայերի նկատմամբ գերդրական վերաբերմունքի արտացոլում է համարում 1860 թ. ազգային սահմանադրության ընդունումը: Լոության մատնելով սահմանադրության նկատմամբ սուլթանական իշխանությունների բացասական վերաբերմունքը, դրա հաստատման միտումնավոր ձգձգումն ու սկզբնական տերսուի զգայի խմբագրումը՝ Զեմալը նշում է, որ հայերը չկարողացան գնահատել իրենց ունեցածն ու արդեն 1867 թ. Զեյթունում ապստամբություն բարձրացրին: Այն, ըստ երիտթուրք պարագլիի, առաջին անգամ ստիպեց թուրքական կառավարությանը հայերի նկատմամբ կասկածամիտ դառնալը: 1877-1878 թթ. ոռու-թուրքական պատերազմի ընթացքում հայերի կողմից ոռուներին աջակցություն ցուցաբերելով, հատկապես Ներսես պատրիարքի Սան Ստեֆանո գնալն ու ոռու ցարից հայերի անկախության համար օգնություն ու պաշտպանություն խնդրելը

վերջնականապես խաթարեցին «հավատարիմ միլլերի» ընկալումը՝ ստիպելով թուրքերին առավել զգուշավոր դառնալ:

Իր հուշագրության մեջ Զեմալ փաշան Հայկական հարցին նվիրված զիսում առանձին ենթագույններով ներկայացնում է 1894-1896 թթ. համբյան կոտորածները, 1909 թ. Կիլիկիայի շարդն ու 1915 թ. Հայոց ցեղասպանությունը: Այս դեպքերի միջև որևէ կապ չտեսնելով և զուգահեռներ չտանելով՝ Զեմալն անում է մի շարք շեշտադրումներ: Նախ նա պնդում է, որ թուրքերի կողմից բռնության կիրառումը միշտ պայմանավորված է եղել հայերի գործունեությամբ: Ըստ երիտթուրք պարագլիի՝ հայերն ամենուր ամենամեծ քաղաքներից մինչև ամենափոքր գյուղեր, ունեցել են հակառակական ու հակաքրդական տրամադրություններ տարածող հայկական կոմիտեներ: Այս կառույցների գործունեությունը ստիպել է մուսուլմաններին հայերին ոռուների կողմից ուղարկված «խառնակից օձ» համարել և նրանց դեմ միջոցներ ձեռնարկել: 1894-1896 թթ. հայերի իրար հետևող ապստամբությունները դադարեցնելու համար թուրքերն ու քրդերը ստիպված են եղել պաշտպանվել: Արդյունքում, ըստ Զեմալի, «հարյուրամյակներ շարունակ սիրով ապրող երեք ազգեր կարծես արյան ծարավ լինեին. հարձակվեցին իրար վրա՝ Անատոլիան ու նոյնիսկ Ստամբուլն արյան ծովի վերածելով»<sup>37</sup>: Լոության մատնելով համբյիկ գնդերի ստեղծումն ու գործունեությունը՝ Զեմալը առաջ է քաշում հետազոյւմ թուրքերի համար դասական դարձած թեգեր՝ երկուստեք զոհերի, դաժանությամբ իրար զգիշելու և որոշ թուրքերի կողմից հայերի նկատմամբ ցուցաբերված գրասրտության վերաբերյալ<sup>38</sup>: Նման ոգով է նկարագրվում նաև Աղանայի կոտորածը: Այս պարագայում Զեմալն առաջնային պլան է մղում տեղի մուսուլմանների հոգեբանական վիճակը, որոնք չեն

<sup>36</sup> Նոյն տեղում, էջ 362-363:

<sup>37</sup> Նոյն տեղում, էջ 367:

<sup>38</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 368:

կարողացել այլևս դիմանալ հայերի տարածած սարսափներին ու գործադրած հոգեբանական ձևավանը: Ըստ Զեմալի՝ 1894-1896 թթ. քախումները չեն հասել այս տարածաշրջան՝ Կիլիկիա, և մինչ սահմանադրության հոչակումը հայերն ու մյուս ժողովուրդները համերաշխ են ապրել: Սակայն 1908 թվականից հետո երկրի ազատականացման պայմաններում Մուշեղ քահանան<sup>39</sup> սկսել է հայերի շրջանում հակաբուրբական տրամադրություններ տարածել, ավելին՝ օգտվելով գենք ձեռք բերելու հնարավորությունից զինել հայերին եվրոպական հրացաններով ու ատրճանակներով: Վախի ու լարվածության մթնոլորտում հայերն իբրև թե նախահարձակ են եղել, ու սկսվել են արյունալի քախումները:

Գալով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և մասնավորապես պարտությունից հետո սկսված դատավարության ընթացքում իր հանդեպ կայացված մահապատժի դատավճռին՝ Զեմալը փորձում է արդարացնել ինքն իրեն՝ նշելով, թե իր նկատմամբ «Ստամբուլում նստած կառավարության տնօգի» կայացրած մահվան դատավճիռը ամոթալի է: Ըստ երիտթուրք պարագլիի՝ ինքը պատերազմի սկզբից մի քանի օր առաջ նշանակվել է օսմանյան չորրորդ քանակի դեկավար ու մեկնել Սիրիա, ուստի չի մասնակցել հայերի վերաբերյալ քննարկումներին ու որոշումների ընդունմանը: Այս պատճառով տեղահանության դրդապատճառներն իր համար անհայտ են: Նա պնդում է, որ հայերի տեղահանության հետ քանակը կապ չուներ, միայն քա-

<sup>39</sup> Խոսքը Մուշեղ Եպիսկոպոս Սերոբյանի մասին է (1869-1951 թթ.): Հայ հասարակական ու եկեղեցական գործից պատմարան, Ռամկալար ազատական կուսակցության հիմնադիրներից Մուշեղ Եպիսկոպոսը եղել է Արաքլիքի ու Արանայի հոգևոր առաջնորդ: 1910 թվականից ապրել է ԱՄՆ-ում: Բուստոնում հիմնել է թեև և ընտրվել հոգևոր հովիվ, նախատել է ՀՔԸ գործունեության աշխատանքանը: 1910 թ. Բուստոնում հրատարակել է «Առանայի ջարդը և պատասխանառությունը» աշխատությունը: Պատերազմից հետո աշխատել է Կիլիկիայում ու Կիպրոսում: Հրաժարվելով հոգևորականի կոչումից (արքեպիսկոպոս)՝ զրադի մանկավարժական, գիտական ու հրապարակախոսական գործունեությամբ:

դարացիական կառույցներն են զբաղվում այդ հարցով, սրանք էլ ինչ-ինչ պատճառներով չեն կարողանում ապահովել հայերի անվտանգ տեղափոխումը: Զեմալը նշում է, որ թեև ինքը գիտակցում է, որ հայերը ուստաների հարձակման գծում իրական վտանգ կարող էին ներկայացնել, ու նրանց տեղափոխումն անվտանգ վայր գուցե և տրամարանական էր, սակայն ինքը կնախընտրեր երանց տեղափոխել Անկարա, Էզմիր, Քարշամոնու, բայց ոչ Միջազգետք: Բացի այդ՝ շեշտում է, որ կտրականապես դեմ է եղել Աղանայի ու Հալեպի հայերի աքսորին, այդ մասին գրել Ստամբուլ, բայց ապարդյուն: Սիրիայի նահանգապետ լինելով՝ ստացել է հայերին հարձակումներից պաշտպանելու հստակ ցուցումներ և դրանք կատարել է, ինչպես պահանջում է ուսումնական ժամանակը՝ առանց ավելորդ քննարկումների<sup>40</sup>: Ուշազրավ է, որ Զեմալն իր համար փորձում էր ստեղծել հայերի բարեկամի կերպար. Աղանայի կոտորածի համատերսում շեշտում էր, որ 1909 թ. օգոստոսին Աղանայի նահանգապետ դառնալուն պես պատժել է քախումների մեղափոռներին՝ հատուկ նշելով, որ 37 մուտուման ու ընդամենը մեկ հայ է մահապատժի ենթարկվել: Ապա նկարագրում էր հայերի այրված տների վերականգնումը՝ շեշտելով, որ չորս ամսվա ընթացքում գրեթե վերականգնել է հրդեհված ու ավերված հայկական զուղերն ու քաղաքների հայկական թաղամասերը, հիմնել որբանոցներ:

Իր այս «հայանպատ» գործունեությունը Զեմալն իբրև թե շարունակել է նաև Հայոց ցեղասպանության տարիներին: Հալեպի ճանապարհին գտնվող քարավանների համար ուտելիք է բաժանել, իր մոտ աշխատող բժիշկներին պարտադրել բուժել հիվանդներին, նաև թույլ չի տվել, որ իրեն վստահված տարածքում հայերի անվտանգությունը խաթարվի: Ավելին, Միջազգետքի ա-

<sup>40</sup> Տե՛ս Կաբաչլ Ա., նշան. աշխատական էջ 408:

նապատներում սովի ու աղքատության շմատնվելու համար կենտրոնական իշխանություններից թույլտվություն է ստացել հայերին Բեյրութի ու Սիրիայի վիլայեթում տեղակայելու համար: Այստեղ հիմնել է որբանոցներ, կանանց օգնության տներ և այլն: Նշելով, որ մանրամասներ պատմել չի ուզում, որպեսզի իր արածի հոգեոր արժեքը չկորչի, Զեմալը նաև գրում է, որ հայերի նկատմամբ իր մեծահոգությունը հայտնի կդառնա տարիներ անց, եթե պատմական փաստաթղթերը զաղտանզերձվեն:

Այսպիսով՝ իր հուշերում Զեմալ փաշան, տալով իրականության խիստ սուբյեկտիվ ու իրականությունից բավական հեռու պատկեր, արդեն 1919 թ. ուրվագծում է թուրքական նոր պատմագրության, քարոզության ու Ժիտողականության հիմնական կետերը, որոնց վրա արդեն 1930-ական թթ. «Թուրքական պատմագիտական ընկերությունը» վերախմբագրելու էր Օսմանյան կայսրության պատմությունը:

## 2.2. Դիարքերի նահանգապետ դոկտոր Ռեշիդի բանտային օրագիրը

Երիտրուրքական ցեղասպան վարչախմբի կազմում Դիարքերի նահանգապետ ու մասնագիտությամբ բժիշկ Ռեշիդն ունի կարևոր տեղ: Նա Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից և իրականացնողներից է, ու պատահական չէ, որ Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո նա մեկն էր այն ոճագործ պաշտոնյաներից, որոնք կանգնեցին դատարանի առջև հայերի զանգվածային սպանդը իրականացնելու մեղադրանքով: Հայտնվելով բանտում՝ դոկտոր Ռեշիդը գրի է առել իր հուշերը, որոնք կարող ենք նաև անվանել բանտային օրագիր: Նրա գրառումները հատվածաբար հրապարակվել են ժամանակի թերթերում, իսկ հետո լուս են տե-

սել արդեն առանձին գրքի տեսքով<sup>41</sup>: Գիտակցելով, որ իր հանցանքների համար դատապարտվելու է մահապատժի՝ երիտրուր ոճագործը փախուստի է դիմել բանտից, սակայն հայտնվելով շրջապատման մեջ՝ ինքնասպան է եղել:

Դոկտոր Ռեշիդը հեղինակ է նաև իր նահանգապետության շրջանին վերաբերող հուշերի, սակայն խնդրո առարկայի տեսանկյունից մեզ հետաքրքիր են արդեն ձերբակալվելուց հետո «Մեմլեքեր» թերթում 1919 թ. փետրվարի 10-ից մարտի 14-ն ընկած ժամանակահատվածում հրապարակված «Դոկտոր Ռեշիդի հուշերը» վերտառությամբ հոդվածաշարը: 1918 թ. նոյեմբերին հայտնվելով անազատության մեջ որպես մեղադրյալ՝ երիտրուր ոճագործը փորձել է ինքնարդարացնող փաստեր գրել, անդրադառնալ իր հասցեին ներկայացվող մեղադրանքներին և ընդհանրապես Հայկական հարցին ու իր բնութագրմամբ «հայերի տեղահանությանը»: Որոշ թուրք հեղինակներ այդ հուշերում նկատում են դեպի ինքնասպանություն գնացող մարդու հոգեվիճակ, և պատահական չէ, որ արդեն ինքնասպանությունից հետո թուրքական «Ալեմդար» թերթում 1919 թ. փետրվարի 25-ից ապրիլի 7-ը հրապարակված նրա օրագրային գրառումները վերևագրված են «Զերբակալությունից մինչև ինքնասպանություն»: Սակայն մենք ուսումնասիրել ենք ամբողջական գրքով<sup>42</sup> տպագրված հուշերը, որտեղ իմի են բերված վերը նշված օրագրային գրառումները:

Իր գրառումների սկզբում Ռեշիդը անդրադառնում հետևյալ հարցերին. «Հայկական ներկա հարցը երկու ձևով պետք է մեկ-

<sup>41</sup> St. u. Sürgünden İntihara: Dr. Reşid Bey'in Hatıraları (Hazırlayan Ahmet Mehmetfendioğlu), İzmir, 1992:

<sup>42</sup> Այդ գրքում պահպանվել են 1918-1919 թթ. թուրքերենի՝ օսմաներենի բառապաշտը ու թերականական ձևերը, այն, ըստ եռլյան, լատինալստան օսմաներեն է, և այդ բարդ տեքստերը բարձմանելու հարցում մեզ օգնել է ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դասախոս Սարիամ Մելքոնյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը:

նաբանվի՝ 1. տեղահանություն, 2. տեղահանության ընթացքում կատարված հանցանքներ ու պաշտոնի չարաշահումներ: Արդյո՞ք կառավարությունը հայկական տեղահանության հարցում իրավացի էր: Եթե իրավացի էր, ապա պատճառները որո՞նք են: Տանը այս հարցերի պատասխանը»<sup>43</sup>: Այնուհետև սկսվում է թուրքական անհիմն ու դասական ժխտողական թեզերի ձանձրալի շարադրանք. «Բոլորին հայտնի է, թե հայերը եվրոպական կառավարությունների ու հատկապես ցարական կառավարության հսկողության ներքո ինչպես են աշխատել և ինչ ձևով են հասել իրենց նպատակին, որպեսզի գորահավաք հայտարարելուց առաջ մեզ ստիպեն ընդունել Արևելյան նահանգների իշխանության առանձնահատկությունը: Մինչդեռ հայերն այդ ժամանակ Արևելյան հարցն իրենց օգտին ու ցանկություններին համապատասխան լրիտերու նպատակով դառնում էին ցարականության գործիքը: Արևելյան նահանգներում հայերը երբեք չեն կազմում ընդհանուր ազգաբնակչության 1/3-ը և հնարավոր է նաև 1/4-ը: Այսինքն՝ բնակչության առումով որևէ իրավունք չունեին: Պատմության տեսանկյունից իրենց իրավունքները շատ կասկածելի, իսկ պնդումները անհիմն են»<sup>44</sup>:

Այնուհետև երիտրուրք նախկին պաշտոնյան եզրահանգման է գալիս, որ հայերն իրենց գործողություններում անցել են թուրքատրեխության սահմանը, ուստի անհրաժեշտ էր «այս հարցի դեմ անհապաղ գործողություններ ձեռնարկել», այլապես դա թուրքական պետության համար կիխներ կործանարար<sup>45</sup>: Դոկտոր Ռեշիդ Խոսում է նաև հայերի զինված կազմակերպություններից և ընդհանրապես հայության շրջանում զենք-զինամթերքի իրքն թե մեծ պաշարների մասին, որոնք միտված էին ծառայելու մեկ

միասնական նպատակի, որը երիտրուրք պաշտոնյան համարում է հայերի ազգային նախաձեռնություն, ընդ որում՝ «ազգային» բառը վերցնելով չակերտների մեջ<sup>46</sup>:

Իր օրագրային հուշերում դոկտոր Ռեշիդն անդրադառնում է նաև իր՝ որպես Դիարբեքիրի նահանգապետի գործունեությանը, մասնավորապես փորձում ոչ այնքան հերքել, որքան հիմնավորել այդ նահանգի հայերի սպանդի կազմակերպումն ու իրականացումը: Այսպես, ըստ նահանգապետ Ռեշիդի՝ հայերի տեղահանության, իսկ իրականում ցեղասպանության հարցում ինքը հաստատակամ է եղել. «Պետք է ասել, որ Հայկական հարցում դեկալավարությունն ու կառավարությունը չեն, որ ինձ և այդ ժամանակ նահանգներում աշխատող նահանգապետերին, զավառապետերին տեղահանության հրամանի հարցում հաստատակամ են դարձել, այլ հայերը, որոնք գորահավաքից առաջ և հետո թշնամու հետ համատեղ ավիրում էին զյուլերը, կոտորում մուտուլման ընակչությանը, մասնատում հայրենիքը»<sup>47</sup>: Այնուամենայնիվ, ոճաբարձի օրագրում հանդիպում ենք թերև ակնարկների, որ հայերի տեղահանության ժամանակ միզուցե կարող էին տեղ գտնել նաև սխալներ. «Դիարբեքիր նոր էի եկել: Պաշտոնյաներին և նահանգին մասին լավ զգիտեի: Դեռ ավելին՝ առկա էին այնպիսի լուրջ ինդիքներ...: Այս պատճառով հայկական տեղահանությունը կանոնակարգված չեղավ և չէր կարող լիներ»<sup>48</sup>:

Օրագրի վերջում երիտրուրք նախկին պաշտոնյան պատմում է բանտից իր փախուստի մասին, դժգոհում այդ պահին Օսմանյան կայսրության վիճակից և խոսում ինքնասպան լինելու մոազրության մասին. «Կառավարություն չկա, ազգ չկա: Եվրոպայի օկուպացիան գնալով ուժեղանում է: Արդեն այս պայման-

<sup>43</sup> Sürgünden İntihara: Dr. Reşid Bey'in Hatıraları, s. 26.

<sup>44</sup> Նոյն տեղում, էջ 30:

<sup>45</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 32:

<sup>46</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 36:

<sup>47</sup> Նոյն տեղում, էջ 38:

<sup>48</sup> Նոյն տեղում, էջ 42:

ներում ումի՞ց կարելի է արդարություն սպասել: Փախուստի դիմեցի: Բնավելու դեպքում մեռնելու ու չհանձնվելու մտադրությամբ փախա»<sup>49</sup>: Հազարավոր անմեր հայերի սպանդի մեղավորն ու պատասխանատուն՝ մասնագիտությամբ բժիշկ Ռեշիդը, նաև դժգոհում է իր չգնահատված լինելուց ու նրանից, որ իրեն ներկայացված մեղադրանքներում կան ֆինանսական չարաշահման մասին փաստեր, մինչդեռ, ըստ նրա, նա մեծ ներդրում ունի Հայկական հարցի, այսինքն՝ 1,5 միլիոն հայերին կոտորելու գործում. «Կյանքս նվիրել էի այս հայրենիքին ու ազգին և մինչ օրս պատրաստ եմ եղել ցանկացած զոհաբերության: Բայց ո՞վ գնահատեց: Զնայած նրան, որ հայտնի էր, թե Հայկական հարցում ինչ չափով եմ քաղաքացիական պարտավորությունն կատարել՝ իմ պատիվն ու արժանապատվությունը վիրավորեցին «հարյուրհազարավոր լիրա է գողացել, կերել» զրպարտանքներով»<sup>50</sup>:

### 2.3. Հայկական հարցը Միդիաթ Շյուքրյու Բլեդայի հուշերում

Երիտրուրք հայտնի կուսակցական գործիչներից Միդիաթ Շյուքրյու Բլեդան նույնպես իր գրի առած հուշերում որոշակի տեղ է տվել հայկական թեմատիկային: «Միություն և առաջադիմություն» կուսակցության հիմնադիր-անդամ, իսկ կայսրության անկումից հետո Թուրքիայի Հանրապետության Ազգային մեծ ժողովի պատգամավոր Բլեդայի «Կայսրության անկումը» կոչվող հուշերի ժողովածուն՝<sup>51</sup> առաջին անգամ տպագրվել է 1979 թ. նրա որդու՝ Թուրքուր Բլեդայի ջանքերով: Գրքի առաջարանում հեղինակի որդին նշում է, որ տեքստը իմաստային փոփոխության կամ վերածնակերպման չի ենթարկվել, միայն ընթերցողների համար

այն ավելի հասկանելի դարձնելու համար որոշ օսմաներեն բառներ ու արտահայտություններ փոխարինվել են ժամանակակից բառքերեն համարժեներով<sup>52</sup>:

Բլեդան Առաջին համաշխարհային պատերազմում պարագայունից հետո ձերբակալվել է և անզիացիների կողմից ուղարկվել Մալթա կղզի<sup>53</sup> որպես Հայոց ցեղասպանության կազմակերպիչ ու իրականացնող: Ուր ամիս անց վերադառնալով Թուրքիա՝ Սուլթանա Քեմալից ստացել է քաղաքականություն վերապատճենության առաջնական առաջարկ, բայց մերժել է այն և տեղափոխվել Իզմիր: 1926 թ. Սուլթանա Քեմալի դեմ մահափորձի՝ «Իզմիրի մահափորձի» դատավարության<sup>54</sup> շրջանակում ձերբակալվել է, սակայն կարճ ժամանակ հետո արդարացվել և բանտից դուրս եկել: 1930-ականներից վերադարձել է քաղաքական ասպարեզ և երեք անգամ ընտրվել Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր Սերաստիայից: Մահացել է 1956 թ. Ստամբուլում:

= Տե՛ս Նոյն տեղում, էջ 4:

= Մեծ Բրիտանիան, չխտահելով թուրքական զատարաններին ու մտադրություններեալով պատերազմական հանցարձներին զատապարտել անզիական դատարաններում, 1919 թ. մայիսի 28-ին 67 բանարկյալի «Բերիքադա բյուզանդական բանտից նավով տեղափոխում» է Մալթա կղզի: Ակզրում բրիտանացիները մտարված էին դատապարտել Մալթա աքսորված պատերազմական հանցարձներին, այդ թվում նաև՝ Հայոց ցեղասպանության պատասխանատուններին, սակայն հետազոտություն նրանց վճռականությունը հետզիտ քույլանում է, և Մեծ Բրիտանիան ցեղասպանության ոճրագործներին ի վերջ փոխանակում է անզիացի ռազմագերիների հետ:

= 1926 թ. հունիսի 14-ին մի խումբ նախկին նախարարներ, պատգամավորներ ու նախազապետներ պլանավորել էին Իզմիրի Քեմերալը թաղամասում Թուրքիայի նախագահ Սուլթանա Քեմալի դեմ մահափորձ կազմակերպելու: Սակայն Սուլթանա Քեմալը Բալլըքսիրում իր դեմ կազմակերպվող մահափորձը բացահայտող հետազիր է ստուգում: Արդյունքում ձերբակալվում, իսկ հետազոյում նաև նախապատժ է ենթարկվում մի շարք նախկին բարձրաստիճան պաշտոնակիր, այդ թվում՝ նաև դոկտոր Նազըմը: Այս մասին մասնամասն տե՛ս Măezzinoğlu E., İzmır Suikasti ve Ahmet Şükrü Bey, International Journal of Social Science, 2015, N: 38, p. 155-176:

<sup>49</sup> Նոյն տեղում, էջ 56:

<sup>50</sup> Նոյն տեղում, էջ 56:

<sup>51</sup> Տե՛ս Bleda M. S., İmparatorluğun çöküşü, İstanbul, 1973, s. 206:

Ս. Շ. Բլեղան իր հուշերում ժամանակագրական կարգով ներկայացնում է Օսմանյան կայսրության գոյության վերջին և Թուրքիայի Հանրապետության առաջին տարիների զարգացումների իր գնահատականներն ու վերլուծությունները: Բնական է, որ գրքի առանցքային թեմաներից է «Միություն և առաջադիմություն» կուսակցության գործունեությունը, ինչպես նաև մեծ տեղ է տրված Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին:

Բլեղան նույնպես Հայկական հարցը դիտարկում է «հայերի դավաճանության» կեղծ տեսության շրջանակներում: Ըստ որում, եթե այլ գործիչների հուշերում կան հայերի հավատարմության մասին երկար մտորումներ, ապա Բլեղան անցյալին առհասարակ չի անդրադառնում, Օսմանյան կայսրությունում հայերի ունեցած դերի մասին չի խոսում: Նրան ավելի շատ հետաքրքրում են հայերի, ինչպես նաև այլ ոչ մուսուլմանների գործողությունների ոչ թե դրդապատճառները, այլ հետևանքները: Բայց կա երկու հանգամանք, որոնք բավական հետաքրքիր են դարձնում խնդրին նրա նույնիսկ հպանցիկ անդրադարձները: Առաջինն այն է, որ Միության ամեն կերպ ցույց է տալիս, որ անձամբ ինքը որևէ կապ չի ունեցել հայերի տեղահանության հետ, ավելին՝ իբրև թե կենտրոնական իշխանությունները կտրականապես դեմ են եղել հայերի նկատմամբ կամայականություններին: Նա գրում է. «Արևելքում կրքերը բորբոքված էին, սահմանին ամեն տեսակ թուլության արտահայտումը կարող էր մեծ խնդիրների պատճառ դառնալ: Գիտեինք, որ հայերը արտաքին ազդեցությամբ ապատամբել են և արտասահմանց օգնություն են ստանում: Սա հաշվի առնելով՝ սահմանային քաղաքներից ու ավաններից որոշ կասկածելի հայերի դուրս էինք հանում: Այս հարցում իր ծայրահեղական դիրքորոշմամբ կենտրոնական իշխանության ուշադրությունը գրաված Բեհաեդին Շաքիրի մոտեցումն անհանգստություն առաջացրեց: Միության ու առաջադիմության

այս հզոր անդամն իրեն այնպիսի բաներ էր թույլ տալիս, որ ժամանակ առ ժամանակ նկատողության կարիք էր զգացվում: Հարմար գտանք վիճակն ավելի լավ ուսումնասիրելու և ճիշտ միջոցներ ձեռնարկելու համար արևելյան վիլայեթների նահանգապետերին նորերով փոխարինել: Նոր նահանգապետերին հրաման էր տրվել լսելու բողոքները և անհրաժեշտության դեպքում կտրուկ միջոցներ ձեռք առնելու»<sup>55</sup>: Հետագա շարադրանքում, սակայն ոչ գործադրված միջոցների, ոչ տեղահանված հայերի մասին, խոր չկա: Փոխարենը ներկայացվում է Դիարբեքիրի նախկին նահանգապետ դրկտոր Ռեշիդի հետ հեղինակի ունեցած խոսակցությունը, որը ցեղասպանության փաստի ու դրանում օսմանյան պաշտոնյաների բացահայտ ներգրավման անհերքելի ապացույց է. «Դեկտոր Ռեշիդ բեյը եկել էր կենտրոնական գրասենյակ և հայտնել, որ ուզում է ինձ հետ խոսել: Անմիջապես նրան ընդունեցի: Եթե նստեց դիմացի բազկարողին, ակնհայտ էր, որ երկուսս էլ նարդայնացած էինք: Շատ լուրջ տոնով նրան հարցը. «Դուք բժիշկ եք, հետևաբար պարտավոր եք փրկել մարդկանց: Ինչպես եղավ, որ աշք փակեցիք այդքան մարդու սպանության վրա»: Դեկտոր Ռեշիդ բեյը վրաս նայեց և կարճատև դադարից հետո ամենաքիչը իմ ձայնի չափ իմաստ տոնով ասաց. «Բժիշկ եմ, բայց չեմ կարող մոռանալ ազգությունս: Ռեշիդը, անշուշտ, բժիշկ է և ստիպված է իր մոտեցումները համապատասխանեցնել այս փաստին: Սակայն դեկտոր Ռեշիդն այս աշխարհ նախնառաջ որպես բուրք է եկել: Իմ ազգությունն ամեն ինչից կարևոր է: Եթե ինձ պես հնարավորություն ու առիթ ունենայիք տեսնելու, թե Դիարբեքիրում ինչպես են հայերը արտաքին ու ներքին օգնություն ստանում, ինչպես են իրենց տրված տարբեր խոստումներով խարվել, ինչպես են ստացած օգնությամբ բարօրության մեջ

= Emeda M. S., Խշկ. աշխ., էջ 56-57:

ապրում և արդյունքում երկրի ամբողջականության վրա ուսնագույշուն անում, այստեղ նման մեղադրանքներ չեն ներկայացնի: Արևելքում հայերը մեր դեմ այնպիսի ապստամբություն էին սկսել, որ եթե թույլ տայինք նրանց մնալ նույն տեղում, անհնարկդառնար այդ տարածքում մի կենդանի թուրք գտնել, մի մուտքան տեսնել: Դիարքերի քրություն գտնվելիս ուսումնասիրեցի նրանց անձնական գործերը, ծանոթացած ապրելակերպին, հասկացած մտածելակերպը: Նրանց տներում արված խուզարկությունները թույլ տվեցին ինձ միանշանակ հասկանալ նրանց նպատակները: Որոշ տներում գտնված զեկը-զինամթերքը բավարար էր՝ մի հսկայական բանակ մեկ վայրկյանում ոչնչացնելու համար: Սարսափելի ու հզոր կազմակերպություն ունեն ոչ միայն Արևելքում, այլ երկրի չորս կողմերում: Եթե ազատ թողնենք, շատ շուտով Անատոլիայում մոմով պետք է թուրք փնտրենք: Այսինքն՝ կա՛մ նրանք մեզ, կա՛մ մենք նրանց: Նրանց համար մեզ վերացնելը պարտադիր պայման է: Հասկանո՞ւմ եք, որ նրանք մեզ ստիպեցին անխուսափելի պաշտպանություն սկսել: Ես էլ մտածեցի. «Է հ, դոկտոր Ռեշիդ, երկու տարբերակ կա: Կա՛մ հայերն են թուրքերին ոչնչացնելով երկրի տեր դառնալու, կա՛մ թուրքերի կողմից ոչնչացվելու են: Երկու տարբերակի մեջ պետք է ընտրություն կատարեի և ընտրությունս արեցի: Թրբությունս հաղթեց բժշկությանը, այլ կերպ չէր կ կարող լինել և չեղավ»: Ես [Բլեղան] հարցրի. «Բժի՛շկ, Զեր խիլճը Ձեզ չի՞ տանջում»: Ռեշիդը պատասխանեց. «Ինչպե՞ս կարող է չտանջել: Սակայն ես սա չեմ արել՝ իմ անձնական հպարտությունը բավարարելու կամ զրապանս լցնելու համար: Տեսա, որ հայրենիք ձեռքից գնում է, ազգին բարեկեցության համար աշքերս փակեցի և առանց մտածելու առաջ նետվեցի»: «Իսկ պատմական պատասխանատվությունը»: «Եթե այս քայլերից հետո պատմության առաջ մեղավոր դուրս գամ, դա էլ ոչինչ: Ինձ բնավ չի հետաքրքրում, թե ուրիշ պետություններ

իմ մասին ինչ են զրում կամ զրելու»: Դոկտոր Ռեշիդը խոսքը վերջացրեց ու լոեց, ևս էլ լոեցի<sup>56</sup>: Այստեղ Բլեղան, ըստ հույսին, գործեր բացահայտ խոսում է Ռեշիդի իրականացրած ոճագործությունների մասին, բայց ամեն դեպքում նշում է, որ Ռեշիդը միամիտ ու իդեալիստ երիտասարդներից է, հայտնի իր պատաժությամբ, արդարամտությամբ, հավատարմությամբ ու մարդկայինությամբ<sup>57</sup>: Սակայն երկու երիտթուրքերի վերոբերյալ զրոյաց փաստորեն, ոճագործի ինքնախոսատովանությունն է առ այն, որ կազմակերպել և իրականացրել է Դիարքերի նահանգի հայության մասաւայական սպանդ:

Նկատելի է, որ Բլեղային շատ է անհանգստացնում իր անմեռայան հարցը, և դա դրսերված է նրա հուշերի տարբեր հատվածներում: Օրինակ՝ պատերազմից հետո Թալեաթի՝ Գերմանիա Փախուստի նախօրեն ներկայացնելիս նա կրկին անուղղակիութեն ընդգծում է, որ հայերի տեղահանության հետ կապ չունի: Բլեղան զրում է, որ մտերմությունից դրդված՝ պատրաստվում էր Փախստի Թալեաթի, Էնվերի ու Ջեմալի հետ: Մեկնելուն նախորդող երեկոյան Ինսան Նամըր Փորոյի տանը կազմակերպված ընթրիքին, սակայն, Բլեղայի կինը դիմում է Թալեաթին՝ խնդրելով պարզաբանել՝ արդյոք իր ամուսինը կապ ունի հայերի աքսութիւնը հետ: Թալեաթն էլ, ըստ Բլեղայի, պատասխանում է, որ Սիդիկ Շյուրքյուն երբեմն հայերի տեղահանության հետ կապ չի ունեցել, և թույլ է տալիս նրան մնալ Ստամբուլում<sup>58</sup>: Այս հարցը հետաքրքրի է նաև այն առումով, որ,, փաստորեն երիտթուրք պարագլուխների, գործիչների շրջանում և հենց իրենց կողմից հայերի տեղահանության մասնակցությունը ուղղակի կամ անուղղակի ընկալվել է որպես հանցանքի մասնակցություն, այ-

<sup>56</sup> Լոյն տեղում, էջ 57-59:

<sup>57</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 59:

<sup>58</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 124:

սինքն՝ սա ևս կարելի է համարել ոճրագործների որոշակի ինքնախտաստվանություն:

Իր անմեղության հարցը Բլեղան ևս մեկ անգամ բարձրաձայնում է Մալթայում անցկացրած արտօրի մասին խոսելիս: Նա զրում է, որ «Անատոլիայում» պահվող ռազմագերիների թվում էր նաև լորդ Քերգոնի եղբայրը: Անզիացիներն առաջարկեցին Քերգոնի եղբորը փոխանակել Մալթայում գտնվող գերիների հետ մի պայմանով, որ պետք է ընտրվեր հայկական կոտորածների հետ կապ չունեցող քան մարդ<sup>59</sup>: Իր անվան ընդգրկումն այդ ցուցակում Բլեղան համարում է անմեղության միանշանակ ապացուց:

#### **2.4. Երիտրուրք լրագրող և պատզամավոր Հուսեյին Զահիք Յալշրնի հուշերը**

Հուսեյին Զահիք Յալշրնը երիտրուրքական ժամանակաշրջանի հայտնի իշխանամետ լրագրող-հրապարակախոսներից է, որը «Միություն և առաջադիմություն» կուսակցության խոսափողն է, իսկ ավելի կոպիտ բնորշմամբ՝ նրանց զրչակը: Յալշրնը իշխող երիտրուրքական կուսակցության ցուցակով դարձել է նաև օսմանյան խորհրդարանի պատզամավոր, իսկ Առաջին համաշխարհային պատերազմում պարտությունից հետո այլ հանցագործների հետ աքսորվել է Մալթա: Լինելով քաղաքական իրադարձությունների կիզակետով՝ նա տիրապետել է բավական ուշագրավ փաստերի, որոնց մի մասը հետազոտմ էրատարակվել է հուշերի տեսքով. դրանցում կան անդրադարձներ նաև Հայոց ցեղասպանությանը:

Այսպես, խոսելով Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երկրի արտաքին ու ներքին քաղաքականության մեջ

<sup>59</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 134-135:

կարևոր տեղ զբաղեցրած Հայկական հարցից՝ Հուսեյին Զահիք Յալշրնը փոխանցում է երիտրուրք պարագլուխ Էնվերի հետ իր զրոյցները, որոնցում Էնվերը նշել է, թե հայերը թուրքական բանակին թիկունքից հարվածում են, օգնում են թշնամուն, լրտեսություն անում ուսւների օգտին, և այդ ամենին վերջ տալու համար արևելյան նահանգների բոլոր հայերին պետք է տեղահանել ու վերաբնակեցնել այլ Վայրերում<sup>60</sup>: Միևնույն ժամանակ երիտրուրք ոճրագործը Հուսեյին Զահիքին հայտնել է. «Այս հայերին ոչ մի վնաս չտալով՝ պետք է վերաբնակեցնել այն տարածքներում, որտեղ նրանք չեն կարող վնաս տալ»<sup>61</sup>: Ավելի ուշ Յալշրնը հանդիպում է օսմանյան պաշտոնյաներից մեկին, որին հայտնի երիտրուրք գործիչ դոկտոր Նազրմից տարբերելու համար իշխանական շրջանակներում անվանել են Քյուչուք (փոքր) Նազրմ: Այդ պաշտոնյան գործի բերումով եղել է արևելյան նահանգներում և հանդիպելով Զահիքին՝ պատմել է. «Աման, Զահիք, եթե իմանս, թե Անատոլիայում ինչեր են տեղի ունենում: Հայկական հարցը սարսափելի է...»<sup>62</sup>: Այնուհետ Նազրմը մանրամասներ է պատմել իր տեսածներից, և Զահիքը նշում է, որ այն, ինչ պատմում էր Նազրմը, և այն, ինչ խոստանում էր Էնվեր փաշան (հայերին վնաս չտալով վերաբնակեցնել), իրաք հետ ընդհանրապես չին համապատասխանում<sup>63</sup>:

Իր հուշերում Զահիքը պատմում է մի դրվագ՝ կապված օսմանյան խորհրդարանի հայազգի պատզամավորներ Գրիգոր Զոհրապի ու Վարդգեսի հետ. նրա մոտ է եկել Գրիգոր Զոհրապի կինը և խնդրել միասին գնալ Թալեաթի մոտ, որպեսզի խնդրեն ամուսնուն ու Վարդգեսին չուղարկել Դիարբեքիր՝ դատարանի

<sup>60</sup> Տե՛ս Hüseyin Cahit Yalçın, Siyasal Anılar, İstanbul, 1976, s. 233:

<sup>61</sup> Նոյն տեղում, էջ 233:

<sup>62</sup> Նոյն տեղում, էջ 234:

<sup>63</sup> Տե՛ս նոյն տեղում:

առջև կանգնելու համար, այլ թողնեն Ստամբուլում: Զահիթը այս խնդրանքն ու հայ պատգամավորների ձերքակալությունը հետևյալ կերպ է մեկնարանում. «Այս դեպքն իմ մեջ էլ ավելի մեծացրեց այն կասկածները, որ ունեի Հայկական հարցի վերաբերյալ՝ միևնույն ժամանակ նշելով, որ այդ ամենը զարմանալի էր նաև այն առումով, որ «Թալեաթը Վարդղեսին շատ էր սիրում»<sup>64</sup>: Զահիթը, չնայած զիտակցել է, որ դեպքերի նման զարգացման պարագայում այլևս անօգուտ է դիմել կառավարությանը և հայ պատգամավորների Դիարքերի ուղարկվելով նշանակում էր «այնտեղից այլևս չվերադառնալ», այնուամենայնիվ, չի մերժել Գրիգոր Զոհրապի կնոջը և համաձայնել է միասին գնալ Թալեաթի մոտ՝ նրա տուն: Թալեաթը նրանց ընդունել է իր տանը առավոտյան կանուխ, «համբերատար լսել Զոհրապի կնոջը» և հայտնել նրան, որ հնարավոր չէ չկատարել դատարանի պահանջը՝ հայ պատգամավորներին Դիարքերի ուղարկելու հետ կապված, սակայն միևնույն ժամանակ Զոհրապի կնոջը հորդորել է չանհանգստանալ և «նրան բարեհամբույր խոսքեր ասել»<sup>65</sup>: Յալընի նկարագրած այս դրվագը ուշագրավ է երկու առումով. նախ հուշերի հեղինակը դրանով փորձ է անում իրեն ներկայացնելու դրական լույսի ներքո և հնարավորինս ձերքագատվելու մեղագործի կերպարից: Երկրորդ՝ սրանում դրսերփում է երիտրուրք պարագլուխների՝ ոչ միայն որպես քաղաքական գործչի, այլև որպես մարդու բարոյական անկումը, երբ շատ լավ իմանալով, որ երկու հայ պատգամավորներին՝ իբրև թե իր կողմից «հարգելի, սիրելի» Վարդղեսին ու Գրիգոր Զոհրապին, ուղարկում է ստոյգ մահվան, Թալեաթը «բարեհամբույր ընդունում է» Զոհրապի կնոջը՝ խոստանալով, որ նրանց որևէ վատ բան չի սպառնում:

<sup>64</sup> Նոյն տեղում:

<sup>65</sup> Նոյն տեղում, էջ 235:

Ի դեպ, Գրիգոր Զոհրապի ու Վարդղեսի հետ կապված իր հուշերում հետաքրքիր մանրամասներ է փոխանցում նաև երիտրուրքերին մոտ կանգնած լրագրող Ֆալիհ Ռոֆքը Աթայը, որը Սիրիայում եղել է երիտրուրք պարագլուխ Զեմալ փաշայի անձնական քարտուղարը, իսկ արդեն Թուրքիայի Հանրապետությունում՝ նախազահ Մուսթաֆա Քեմալի գլխավոր ուժերենտը (speechwriter), այնուհետև՝ խորհրդարանի պատգամավոր իշխող կուսակցությունից: Ըստ Ֆալիհ Ռոֆքը Աթայի՝ Զեմալ փաշան մի քանի անգամ նամակներ է գրել Թալեաթին համոզելով նրան հայ պատգամավորներին չուղարկել Դիարքերի, սակայն Թալեաթը վատահեցրել է, թե նրանց ոչինչ չի սպառնում: Իսկ երբ «Բարոն» հյուրանոցում հայ պատգամավորներին ցոյց են տվել նրանց Դիարքերի դատարան ուղարկելու որոշումը, Գրիգոր Զոհրապը սկսել է լաց լինել, իսկ Վարդղեսը ասել է Ֆալիհ Ռոֆքըն. «Ես չցինչ, գոնե այս մարդուն (Գրիգոր Զոհրապին) չուղարկեն»<sup>66</sup>:

ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԲԱՆ ԱՀՍԵԹ ՌԵՖԻՔ ԱԼԹԸՆԱՅԻ  
ՃՈՒՇԵՐՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում հայերի տեղահանության, զանգվածային բռնությունների վերաբերյալ եղած հուշերի բվում յուրահատուկ են օսմանյան բանակի սպա ու պատմաբան Ահմեթ Ռեֆիք Ալթընայի (1881-1937 թթ.) փորբաժավալ երկու հուշագրական գրքույկները: Մինչ պատերազմը նա ռազմական լիցեյում աշխատել է իրքն պատմության, աշխարհագրության ու ֆրանսերենի ուսուցիչ և Թուրքիայում հայտնի է իր մի քանի հարյուրի հասնող պատմագիտական ուսումնասիրություններով<sup>67</sup>: Հարկ է նշել, որ թուրք գրող Փեյամի Սաֆայի կողմից «կայսրության վերջին ու հանրապետության առաջին պատմաբան»<sup>68</sup> որակումը ստացած Ա. Ռ. Ալթընայը անդամակցել է սովորան Մեհմեդ Ռեշարի հրամանով 1909 թ. հիմնադրված «Օսմանյան պատմության կոմիտեին» (Târihi-i Osmâni Encümeni), իսկ 1925 թ. որոշ ժամանակ նույնիսկ դեկավարել այն<sup>69</sup>: Հայտնի պատմաբան Հայիլ Ինալջըրը նրան համարում է հանրապետական Թուրքիայում ժողովրդական կամ հանրային պատմագրության հիմնադիրը<sup>70</sup>:

1919 թ. Ահմեթ Ռեֆիք Ալթընայի հրատարակած «Երկու կոմիտե երկու կոստորած» գրքույկում թերևս առաջին անգամ տեղ են գտնում այն տեսակետները, որոնց մի մասը հետազայում

դառնալու էր Թուրքիայի պաշտոնական թեզի հիմքը և շարունակվելու էր մինչ մեր օրերը: Ըստ Ալթընայի՝ զոհերը եղել են երկուստեր, և երկու կողմն էլ՝ և՝ հայերը, և՝ թուրքերը, հանցանք են գործել: Ալթընայը բացահայտորեն քննադատում է երիտրուրքերին, որոնց հանդեպ ընդգծված ատելություն ուներ: Փաստենք, որ Թուրքիայի Հանրապետությունում այդ գիրքը իշխանությունների կողմից ընկալվեց որպես թուրքական շահերին հակասող, «թշնամու ջրաղացին ջուր լցնող», և հեղինակի հանդեպ սկսվեց հալածանք, որը զիսավորեց անձամբ նախագահ Մուսաթաֆա Քեմալը. Ալթընայը հեռացվեց համալսարանից (որտեղ աշխատում էր), գիրքը ոչնչացվեց և վերահրատարակվեց միայն 1992 թ.:

Ա. Ռ. Ալթընայի գիրքն ընդգրկում է 1918 թ. «Իրդամ» թերթում նրա հրատարակած և տասներեք մասից բաղկացած հոդվածաշարը: Օսմաներենով լույս տեսած այս գիրքը հետազոյում տպագրվել է լատինատառ թուրքերենով, ապա՝ նաև թարգմանվել հայերեն ու անգլերեն<sup>71</sup>: Գիրքը վերնագրելով «Երկու կոմիտե՝ երկու ոճիր»՝ Ա. Ռ. Ալթընայը փորձում է հավասարության նշան դնել «Միություն և առաջադիմություն» կուսակցության ու «հայկական կոմիտեների»՝ կուսակցությունների գործունեության միջև: Նմանատիպ մոտեցում է ցուցաբերում նաև Ալթընայի հուշերի ուսումնասիրությամբ գրադադար թուրք գիտնական Քենան Օզքանը, որը երիտրուրքերի քննադատությունը համարում է ժամանակաշրջանի թելադրանք և հեղինակի անձնական կանխակալ վերաբերմունքի դրսուրում<sup>72</sup>:

<sup>67</sup> Տե՛ս Gökman M., Tarihi Sevdiren Adam: A. R. Altınay, İstanbul, 1978, s. 113-115:

<sup>68</sup> Տե՛ս İnalçık H., Türkiye'de modern tarihçiliğin kurucuları // "Muhabafakar düşünce", 2006, N 7, s. 9:

<sup>69</sup> Տե՛ս Türk dünyası edebiyatçılars ansiklopedisi, Ankara, 2002, s. 373:

<sup>70</sup> Տե՛ս İnalçık H., Yediylidiz B., Osmanlı araştırmaları, 12. Türk tarih kongresi 4-8 Ekim 1999, Kongreye sunulan bildiriler, Ankara, 2002, s. 90:

Գրքի սկզբում՝ 1919 թ. հունվարի 16-ով թվագրված հեղինակային առաջարկանում, նշվում է. «Հարյուր տարի անց պատմաբանի համար փաստաթուղթ ծառայելով՝ այս փոքրիկ գիրքը պատմելու է իրականության ամբողջ ողբերգականությունը»<sup>73</sup>: Ըստ Ալթընայի՝ դրա մեղավորները երիտթուրքերն են, որոնց անհաջող քաղաքականության պատճառով 600-ամյա Օսմանյան կայսրությունն անկում ապրեց: Նշելով Օսմանյան կայսրության տարածքում իբրև թե բոլոր ժողովուրդների, եթնիկ տարրերի համերաշխ ապրելու հանգամանքն ու հայերի՝ առավել վստահելի ազգերի շարքում գտնվելու փաստը՝ Ահմեդ Ռեֆիքը հայերի «անջատողականության» հարցում մեղադրում է մեծ տերություններին ու երիտթուրքերին: Սրա հետ մեկտեղ նա հայերին ևս մեղադրում է՝ անկախության համար պայքար ծավալելու համար<sup>74</sup>: Իսկ հետապնդերազմյան շրջանում Ստամբուլում դաշնակիցների գորքերի ներկայության կապակցությամբ նա գրում է. «Ստամբուլի քաղաքների իրական թշնամին ոչ թե քաղաքը գրավողներն են, այլ թուրքերի պարտությունը թշնամուց առավել փափագող հույներն ու հայերը, որոնք դարեր շարունակ օսմանյան իշխանությունների կողմից անարգանքի ու անտարբերության են արժանացել»<sup>75</sup>: Հետևելով պաշտոնական թեզին՝ Ալթընայը դատապարտում է «Վանի ապստամբությունը», սակայն նշում է, որ իշխանությունները պետք է պատժեին միայն մեղավորներին, այլ ոչ թե ընտրեին Արևելյան հարցի լուծման ամենահեշտ տարբերակը՝ մի ամբողջ ժողովրդի տեղահանությունը»<sup>76</sup>:

Տեսական բնույթի պատմագիտական մտորումներից զատ՝ գրքում կան աքսորյալ հայերի խմբերին առնչվող բազմաթիվ կոնկրետ նկարագրություններ: Օրինակ՝ Ալթընայը գրում է, որ Էսքիշեհիրում տեղահանվածների թվում էին նույնիսկ թոքախտավորները, մահացու հիվանդներն ու անդամալույնները<sup>77</sup>: Ըստ Ալթընայի՝ բոլորին օգնելն անհնար էր, ավելին՝ նրանց նկատմամբ «անարդար ճնշումն այնպիսի խոր ատելություն էր առաջացրել, որ նույնիսկ ամենաանօգնական միայնակ խեղճ կինը [եթե օգնություն առաջարկեիք] խստորեն կնայեր ձեր դեմքին և անվախ կքայլեր դեպի փորձանք, աղետ, սով ու մահ՝ տանելով իր քարացած սիրտն ու վիրավոր հոգին»<sup>78</sup>:

Աքսորյալ հայերի դրության նկարագրությունների տողատակում հետաքրքիր է օսմանյան պաշտոնյաների անձնական պատասխանատվության հարցի քննարկումը: Բազմիցս շեշտելով, որ ինքը տեղահանության հետ որեւէ կապ չի ունեցել՝ Ալթընայը պատմում է իր մարդասիրական վարքի մասին, օրինակ՝ հնգամյա հայ աղջնակի՝ կապուտայշ Սիրանույշի նկատմամբ: Եղբոր ու տատիկի հետ աքսորի ճանապարհ գնացող Սիրանույշի հայրը, պարզվում է, զինակոչվել էր բանակ ու սպանվել, իսկ մայրը մահացել էր տեղահանության ժամանակ: Ալթընայը հրամայում է կերակրել նրան, խոսում է աղջկա հետ, և նրանք կարծես թե ընկերանում են: Նա շեշտում է. «Սիրանույշը երբեք չէր ժամանում»<sup>79</sup>: Երբ քարավանը ստանում է առաջ շարժվելու հրաման, Ալթընայը Սիրանույշի տատին առաջարկում է իրեն տալ աղջնակին և խոստանում որդեգրել նրան: Կտրականապես մերժելով՝ ծեր կինը ասում է հետևյալը. «Մենք կգնանք միասին և

ESK%C4%B0% C5%9EEH%C4%BOR\_DEK%C4%BO\_ERMEN%C4%BO\_TEHC%C4%BO  
OR%C4%BONE\_DA%C4%BOR\_GER%C3%87EKLER (մուտք ամսաթիվ՝ 25.08.2019):

<sup>73</sup> Altıñay R. A., İki Komite İki Kitâl, İstanbul, 1999 (ed. Haluk Dursun), s. 10.

<sup>74</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 47:

<sup>75</sup> Նոյն տեղում, էջ 14:

<sup>76</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 27:

<sup>77</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 33:

<sup>78</sup> Նոյն տեղում, էջ 30:

<sup>79</sup> Նոյն տեղում:

կմեռնենք միասին: Ճանապարհին նրանց գետն եմ նետելու, ապա ինքս կնետվեմ ջուրը»<sup>80</sup>:

Ալթընայի հուշերում ևս անդրադարձ կա հայ պատգամափորներ Գրիգոր Զոհրապի ու Վարդգեսի աքսորման և սպանության հարցին: Զեմալ փաշայից հրաման ստանալով ձերբակալել հայերի հայտնի դահիճ Չերքեզ Ահմեթին՝ Ալթընայը որոշում է անձամբ խոսել նրա հետ ու հասկանալ մարդասպանի հոգեվիճակը: Նա ամբողջությամբ մեջքերում է այդ գրույցը. Չերքեզ Ահմեթը հպարտությամբ խոստովանում է, որ Դիարբեքիր տանող ճանապարհին իր մարդկանցով հարձակվել է և սպանել նախ Վարդգեսին, ապա քարով այնքան է խփել Զոհրապի գլխին, որ վերջինս մահացել է: Չերքեզ Ահմեթը, սակայն, իրեն մեղավոր չի համարել. «Եղքայր, սա նվաստացուցիչ է: Ես ծառայել եմ իմ հայրենիքին: Գնա՞ ու տե՛ս: Վանն ու շրջակայքը Քաարա լիճ եմ դարձել: Այսօր դու այնտեղ նույնիսկ մի հայ չես կարող գտնել: Ես ծառայել եմ հայրենիքիս, իսկ Թալեաթի նմանները Ստամբուլում նստած զարեցուր են խմում, մինչ ես կալանքի տակ եմ»<sup>81</sup>:

Գրքի երկրորդ մասի սկիզբը թվագրվում է 1918 թ. մայիսի 6-ով և սկսվում էրզրումի նկարագրությամբ: Հարկ է նշել, որ 1918 թ. ապրիլի 17-մայիսի 20 ժամանակահատվածում Ա. Ռ. Ալթընայը ուղեկցել է օտարերկրյա լրագրողների պատվիրակությանը, շրջել է Բարում, Տրապիզոն, Էրզրում, Էրզինջան (Երզնկա), Կարս, Արդահան, Արդվիլին քաղաքներում ու հարակից տարածքներում՝ հայերի «ոճրագործությունները» տեղում քննելու նպատակով: Այս ուղևորության որոշ նոթեր ներառված են նրա գրքի երկրորդ գլխում, իսկ «Կովկասի ճանապարհներին. հուշեր և հույզեր»<sup>82</sup> խորագիրը կրող նրա գրքուկը դրանց ամբողջական

արտացոլումն է, որը ևս առաջին անգամ արարատառ հրատարակվել է 1919 թ.: Հետազոյում ընդամենը 15 000 տպաքանակով դրա լատինատառ թուրքերենի տառադարձված տարբերակը լույս է տեսել նախ 1981 թ., ապա՝ 1986 թ., սակայն մեծ հետաքրքրության չի արժանացել:

«Կովկասի ճանապարհներին. հուշեր և հույզեր» գրքի շարադրանքը սկսվում է 1918 թ. ապրիլի 17-ից Տրապիզոնի ու նրա շրջակայքի հուզական նկարագրությամբ: Առհասարակ կիսառումանտիկ գեղումներն այս գրքում ավելի մեծ տեղ ունեն, քան փաստերի ու իրողությունների նկարագրությունները: Ի տարբերություն իթթիհաթականների հակահայկական գործունեությանը վերաբերող գրառումների՝ հայերի «կազմակերպած սպանությունների» նկարագրություններում որևէ փաստարկված հիմնավորում կամ հստակ տեղեկություն չկա: Հեղինակը սուսկ նկարագրում է իր այցելած քաղաքներում տիրող անմիտիքար իրավիճակը, որի համար մեղադրում է «հայկական կոմիտեներին»: Գրքում Ալթընայը երբեմն նույնիսկ հակասում է ինքն իրեն՝ հայերին մերթ արյունաբրու մարդասպաններ, մերթ թուրքերից փախչելով Ռուսաստանում ապաստան գտած փախստականներ ներկայացնելով:

Այսպիսով՝ Ահմեթ Ռեֆիք Ալթընայի հուշերը, որոնք իրենց ոճով փոքր-ինչ տարբերվում են Օսմանյան կայսրության գոյության վերջին շրջանի գործիչների հուշերից, այնուամենամեծ որոշակի օբյեկտիվ դատողությունների կողքին շրջանառության մեջ են դնում իբրև թե հայերի իրականացրած սպանդի մասին թեզերը և դրանով իիմք դնում կամ նպաստում ցեղասպանի ու զոհի միջն հավասարության նշան դնելու թուրքական քաղաքական քաղաքականությանը:

<sup>80</sup> Նոյն տեղում, էջ 36:

<sup>81</sup> Նոյն տեղում, էջ 41:

<sup>82</sup> Şahin Altınyay R. A., Kafkas Yollarında: Hâtıralar Ve Tahassüsler, İstanbul, 2001:

**ՀԱՅԵՐՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԹՈՒՐՔ ԿԻՆ ԳՐՈՂ  
ՀԱԼԻՄԵ ԷՌԻՓ ԱՌԵՎԱՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ**

XX դարասկզբի ամենահայտնի թուրք կին քաղաքական ու հասարակական գործիչներից գրող, ֆեմինիստական շարժման ակտիվ գործիչ Հալիմէ Էդիփը ամենահակասական նկարագիր ունեցող կերպարներից է: Առաջին համաշխարհայինի նախօրեին ու պատերազմի տարիներին Հ. Էդիփին ընդգրկված է եղել պանթուրքիստական շրջանակներում, մասնակցել է նրանց հավաքներին, շփվել Զիյա Գյորգալիի, Յուսուփ Աքշուրայի և այլ նշանավոր պանթուրքիստների հետ, ինչն անխուսափելիորեն ազդել է նրա քաղաքական ու գրական հայացքների վրա: 1916 թ. երիտթուրք պարագլուխ Զեմալ փաշայի հրավերով մեկնել է Սիրիա, ապա՝ Լիբանան, որտեղ զրադվել է որք մասցած երեխաների կրթության կազմակերպմամբ: Պետք է նշել, որ այս կազմակերպման անբաժանելի մասն են հանդիսացել հայ երեխաների թուրքացումն ու իսլամացումը: Սուսթաֆա Քեմալի ծավալած ազգայնամոլական շարժման տարիներին աջակցել է նրանց, սակայն ավելի ուշ Հալիմէ Էդիփի և նրա ամուսնու Աղնան Աղըվարի հարաբերությունները վատացել են Թուրքիայի նախագահ դարձած Մուսթաֆա Քեմալի հետ, և նրանք ստիպված են եղել լրել Թուրքիան: Աթաթուրքի մահից հետո Թուրքիա վերադառնալով՝ Հ. Էդիփը սկսել է գրականություն դասավանդել Ստամբուլի համալսարանում: 1950 թ. ընտրվել է Թուրքիայի Ազգային ժողովի Իզմիրի պատգամավոր «Ժողովրդավարական կուսակցությունից»: Նա բողել է բավական հարուստ գրական ժառանգություն վեպեր, պատվածքներ, պիեսներ:

1926 թ. ու 1928 թ. տպագրված իր հուշերում Հ. Էդիփն ամփոփել է մինչհանրապետական շրջակի իր քաղաքական ու հասարակական գործունեությունը: Անզերենով գրված այս գրքերի<sup>83</sup> թուրքերեն տարբերակները շրջանառության մեջ են դրվել 1960-ական թթ. սկզբին<sup>84</sup>: Ըստ որում, ինչպես թուրքերեն տարբերակի առաջարանում շեշտում է անձամբ հեղինակը, սրանք նախորդի պատճեն-թարգմանությունը չեն, այլ նույն իրադարձությունների մասին պատմող առանձին գրքեր<sup>85</sup>: Պետք է նշել, որ մեր աշխատանքում օգտվել ենք թե՛ անզերեն, թե՛ թուրքերեն տարբերակներից փորձելով կատարել համեմատական վերլուծություն: Տեսառում հղումները տրված են անզերեն գրքի թվայնացված տարբերակին, իսկ թուրքերեն տարբերակի էջերը նշված են միայն տարբերությունների կամ անհամապատասխանությունների դեպքում:

Ի տարբերություն այլ գործիչների՝ Հալիմէ Էդիփին իր հուշերում գրեթե չի անդրադառնում Օսմանյան կայսրությունում հայերի դերին կամ գործունեությանը: Օսմանյան Թուրքիայի նշանավոր հայերից Հ. Էդիփին առանձնացնում է միայն Հակոբ Վարդովյանին. «Գյուլլու Ազոփի տաղանդավոր հայ դերասանն իր թատերախմբով Թուրքիայում իսկապես հիմնադրեց թատրոնի ոռմանտիկ ուղղությունը՝ համապատասխանեցնելով ֆրանսերեն պիեսները տեղական պահանջներին»<sup>86</sup>: Սակայն թուրք զրոյի համար ամենակարևոր հայը, անշուշտ, Կոմիտասն է, որի կերպարը, ինչպես կերևա հաջորդիվ, առանձին տեղ ունի նրա հուշերում:

<sup>83</sup> Տե՛ս Halide Edib, Memoirs of Halide Edib, NY, 1926, Halide Edib, The Turkish Ordeal, NY, 1928:

<sup>84</sup> Տե՛ս Halide Edip Adıvar, Mor Salkımılı Ev, İstanbul, 2008, Halide Edip Adıvar, Türk'ün Ateşle İmtihanı, İstanbul, 2016:

<sup>85</sup> Տե՛ս Halide Edip Adıvar, Türk'ün Ateşle İmtihanı, s. 12:

<sup>86</sup> Halide Edib, Memoirs of Halide Edib, p. 123.

Հալիդէ Էղիփը քննադատաբար է մոտենում «Սիություն և առաջադիմություն» կուսակցության քաղաքականությանը<sup>87</sup>: Մրա հետ մեկտեղ նա բարձր է գնահատում կուսակցության առաջնորդներից ոմանց անձնական որակները: Օրինակ՝ Զեմալ փաշշան նրա հուշերում հանդես է զալիս որպես «Սիրիայի պահպան», «աքսորյալ հայերի հովանավոր»<sup>88</sup>: Հալիդէ Էղիփի պնդմամբ Արանայի նահանգապետ եղած տարիներին ևս Զեմալը վայելել է հայերի համակրանքը: Փաշայի «արդարամտության» պացուցն էլ, ըստ Հ. Էղիփի, հայտնի ոճրազործ Զերքեզ Ահմեթի մահապատճեն էր:

Հալիդէ Էղիփը ակտիվորեն ներգրավված է եղել Սիրիայում և Լիբանանում որք հայ երեխաների բոնի իսլամացնելու գործին, ինչի համար էլ երիտրուրք պարագուի Զեմալ փաշայի կողմից Ստամբուլից հրավիրվել էր Լիբանան: Երեխաներին թուրքացնելու համար պատասխանատու այս տիկինը հետագայում պատմել է, որ Զեմալ փաշան հայ երեխաներին տեղափորում էր թուրքական որբանոցում, այնուհետև՝ փոխում նրանց կրոնն ու անունները՝ տալով թուրքական ու մուսուլմանական անձնանուններ<sup>89</sup>: Նա փոխանցում է Զեմալ փաշայի հետ իր զրոյցից մի հատված. «...Դուք հայերի նկատմամբ այնքան բարյացակամ եք եղել, ինչքան միայն հնարավոր եք լինել այս օրերում: Ինչո՞ւ եք թոյլ տալիս նրանց հայկական անունները փոխել մուսուլմանականով»<sup>90</sup>: Ի պատասխան նրան՝ Զեմալն ասում է. «Դուք իդեալիստ եք: Եվ բոլոր իդեալիստների պես իրականության զգացման պակաս ունեք: Սի՞թե դուք կարծում եք, որ մի քանի հարյուր հայ տղա ու

աղջիկ իսլամացնելով՝ ես իմ ազգի մասին եմ մտածում: Դուք տեսաք Դամասկոսում հայերի կողմից կառավարվող հայկական որբանոցները: Այնտեղ այլևս սենյակ չկա, այլևս գումար էլ չկա նոր հայկական որբանց բացելու համար: Սա մուսուլմանական որբանց է, ուր միայն մուսուլման որբերի մուտքն է արտոնված: Բայց ես ուղարկում եմ այստեղ ցանկացած թափառող անտուն երեխայի, որը հասնում է Սիրիա ողբերգության կիզակետից»<sup>91</sup>: Ըստունելով երեխաներին փրկելու համար նրանց խլամ պարտադրելու անհրաժեշտությունը՝ Հալիդէ Էղիփը հարցնում է Զեմալին պատերազմի ավարտից հետո երեխաների ճակատազրի մասին: Փաշան պատասխանում է. «Պատերազմից հետո նրանք կզնան հետ իրենց ժողովրդի մոտ: Ես հուսով եմ, որ ոչ մեկն այնքան փոքր չէ, որ մոռանա իր ազգը»<sup>92</sup>, ապա շարունակում. «Եթե դուք տեսնենք նրանց դժբախտությունն ու տառապանքը, ապա կզնաք նրանց մոտ և մի բոպե էլ չեք մտածի նրանց անունների ու կրոնի մասին»<sup>93</sup>:

1916 թ. ամունը արաբական վիլայեթներ կատարած ճամփորդությունը նկարագրելիս Հալիդէ Էղիփը գրում է. «Ես տեսա Զեմալ փաշայի հովանու ներքո գործող հայկական որբանոցներ Դամասկոսում: Հայկական աշխարհը Զեմալ փաշային համարում է Աստծո ընտրյալ, և կանայք ցոյց տվեցին ինձ նրա նկարով վզնոցներ»<sup>94</sup>: Առավել մանրամասն է Հալիդէ Էղիփը նկարագրում Լիբանանում գործող «Ային Թուրք» որբանոցը. «Սա հին ճիզվիտական քոլեզ էք՝ քարե սոլիդ շնորհելով ու շատ գեղեցիկ բակով: Այնտեղ աշխատում էին մի քանի կին և երկու տղամարդ, չնայած

<sup>87</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 266:

<sup>88</sup> Նոյն տեղում, էջ 407:

<sup>89</sup> Տե՛ս Özdemir H., Cemal Paşa ve Ermeni Göçmenler: 4. Ordu'nun İnsani Yardımları, İstanbul, 2009, s. 187, նոյնը տե՛ս նաև՝ Adıvar H., Mor Salkımlı Ev, İstanbul, 2008, s. 264:

<sup>90</sup> Halide Edib, Memoirs of Halide Edib, p. 428.

<sup>91</sup> Նոյն տեղում, էջ 429:

<sup>92</sup> Նոյն տեղում:

<sup>93</sup> Նոյն տեղում:

<sup>94</sup> Նոյն տեղում, էջ 406:

Երեխաների թիվը հասնում էր 400-ի»<sup>95</sup>: Որբանոցում երեխաների վիճակը նկարագրելիս Հալիդէ Էղիքը գրում է. «Դմացել էին, որ Զեմալ փաշան զալու է մի քանի հոգու հետ, և ամեն ինչ կարգի եր քերպել, սակայն երեխաները տանջված, դժբախտ և աննկարագրելի հիվանդ տեսք ունեին: Թուրք, քուրդ և հայ երեխաներից ամեն մեկը մի անձնական ողբերգության կրող էր, որի ծնողերին սպանել էին իր բախտակիցների ծնողները, և այժմ բոլորը հավասարապես դժբախտ էին: Երեխաներից ամեն մեկն ուներ թուրքական կամ մուսուլմանական անուն»<sup>96</sup>:

Լիբանանում գործող ու Զեմալ փաշայի հսկողության տակ գտնվող «Ային Թուրա» որբանոցում տիրած իրական վիճակի և այնտեղ հայ որբերի թուրքացման մասին խիստ արժեքավոր տվյալների ենք հանդիպում հենց այդ որբանոցի նախկին «սան» Թորոս Թադևոսյանի՝ պատմաբան Զոն Կիրակոսյանին 1983 թ. ուղղված նամակում: Նամակի հեղինակը մեկն է այն 1200 հայ երեխաներից, որոնք Զեմալ փաշայի հրամանով հավաքվել էին «Ային Թուրա» որբանոցում՝ խւամացվելու ու թուրքացվելու նպատակով: Այս արժեքավոր վկայության մեջ որբանոցի սարսափիները վերապրածի շուրթերով ներկայացվում են իրականությունը, և արժանիորեն հերքվում են թուրքական տեսակետները որբանոցի «հումանիստական» բնույթի վերաբերյալ: «Մեզ տեղ հասցենուց անմիջապես հետո թուրքացրին, անուններս փոխեցին, դասարանների բաժանեցին, Կ. Պոլսից հրավիրված դասաւունները սկսեցին մեզ հետ պարապել: Խստիվ արգելեցին հայերեն խոսել: Հատուկ դասարանների ավագներ նշանակեցին մեծահասակներից, որոնց պատվիրել էին հայերեն խոսողներին ցուցակազրել՝ պատժելու համար: Այս ավագները հավատարմությամբ կատարում էին իրենց պարտականությունները: Ամեն

երեկո, երբ ամբողջ երեխաներին հավաքում էին աշխատողների հետ միասին ԶԱՌՅԱ-ի, և բոլորը միատեղ երեք անգամ քազավորը երկար ապրի էին գոշում, այդ հանդիսավոր ժամին կարդում էին օրվա հայերեն (զյավուրջա) խոսողների ցուցակը և թուրքավարի պատժում ամեն օր, մինչև որ բոլոր երեխաները վերջ տվեցին հայերեն խոսելուն: Պատժի ձևը հետևյալն էր. մեջքի վրա պառկեցնում էին, երկու ոտքերը վերև բարձրացրած՝ երկու հոգի բռնում, իսկ ինքը՝ որբանոցի դեկավարը, անձամբ զավազանվ 100-200 հարված էր հասցնում ոտքերին: Վայ այն երեխային, որն այդ ծեծի ժամանակ կանչեր «մայրիկ», «մամա ջան», զազանը առավել կզազագեր ու կշարունակեր իր հարվածները, մինչև քիչ հանդարտվեին կրքերը: Ծեծի այդ ձևը թուրքերին ֆալախա քաշել էին անվանում: Շատ տղաներ ոտքերից վնասվածքներ ստացան և կադ մնացին»<sup>97</sup>:

Խոսելով որբանոցում հավաքված հայ երեխաների դաստիարակության մասին՝ Թ. Թադևոսյանը նշում է. «Մեզ դաստիարակում են մոլեռան թուրքեր, սովորեցնում թունդ շովինիստական ազգային երգեր՝ թուրք ազգի անցյալն ու ներկան գովերգող և պանթուրքիզմն ու պանխալամիզմը գովաբանող: Անցել է ավելի քան վաթուն տարի, և տակալին հիշում եմ այդ երգերից առանձին քայլակներ»<sup>98</sup>: Ցեղասպանությունը վերապրողի հուշերից նաև պարզ է դառնում, որ պարտությունից հետո, երբ թուրքերը փախչելիս են եղել, հանձնարարել են որբանոցի դեղագործ Ռիզա Բեյին ճաշը թունավորելու միջոցով սպանել որբանոցի բոլոր երեխաներին: Սակայն թուրքացած բուլղար Ռիզա Բեյը չի կատարել այդ ոճիրը, ինչի մասին հետազոտմ պատմել է որբանոցի սանե-

<sup>95</sup> Նույն տեղում, էջ 428:

<sup>96</sup> Նույն տեղում:

թից մեկին, որին պատահաբար հանդիպել է Ստամբուլում: Նշենք, սակայն, որ «Այն Թուրք» որբանցի շուրջ 300 որք հայեր տարատեսակ հիվանդությունների, սովոր հետևանքով մահանում են, և նրանց բոլորին միասին թաղում են որբանցի տարածում, եղբայրական գերեզմանատանը, որը միայն 1993 թ.՝ շինարարական աշխատանքների ժամանակ է ի հայտ գալիս, և որտեղ 2010 թ. կանգնեցվում է խաչքար<sup>99</sup>:

Չնայած այս և նմանատիպ այլ փաստերին՝ Հային Էդիփին իր հուշերի ամբողջ շարադրանքում շարունակ փորձում է ներկայացնել Զեմալ փաշայի՝ որպես հայ երեխաների փրկչի կերպարը: Հարկ է շեշտել նաև, որ Զեմալի փախուստից հետո էլ Էդիփիը շարունակում է նրա լավ բարեկամը մնալ, նույնիսկ փորձում է միջնորդել Սուլթանի Քեմալ փաշային բույլ տալ նրան Թուրքիա վերադառնալ ու մերժում ստանում: Այս մասին գրելիս Էդիփիը նաև շեշտում է, որ իր մտահոգությունները ճիշտ են, և «շուտով նա [Զեմալ փաշան] սպանվեց Թիֆլիսում մի բոլշևիկի կողմից»<sup>100</sup>:

Հային Էդիփի կերպարի ուսումնասիրությունը հատկապես շայոց ցեղասպանության խնդրի համատեքստում ցույց է տալիս, որ այն հակասական է, և շատ հաճախ նրա տարբեր տարիների կարծիքներն ու պահվածքը հակադրվում են իրար: Չնայած որ վերջին շրջանում որոշ ուսումնասիրողներ փորձ են անում ներկայացնելու, թե իբր Հային Էդիփը շայոց ցեղասպանության հարցում ունեցել է օբյեկտիվ և երիտրուրբերին քննադատող տեսակետ, սակայն հենց այդ նույն ուսումնասիրողներն իրենք բախվում են գրողի հակասականությանը և ստիպված են լինում ներկայացնել նրա կենսագրության ու գործունեության նաև այդ իրա-

րամերժ կողմերը: Նման ուսումնասիրություններից կարելի է առանձնացնել Հույյա Աղաքի գիրը: Ըստ հեղինակի՝ Հային Էդիփը մինչև 1913 թ. մտերիմ և լավ հարաբերություններ է ունեցել երիտրուրբերի հետ և հատկապես բարձր գնահատել նրանց կողմից կանաց տրված իրավունքները, սակայն 1915-1916 թթ. եղել են իթթիհաթականների հետ կապերը խզելու կարևոր շրջափուլ<sup>101</sup>: Հույյա Աղաքը իրավացիորեն հարց է բարձրացնում, թե ինչպես կարող էր Հային Էդիփը, մի կողմից, քննադատել թալեաթ փաշայի ցեղասպան քաղաքականությունը հայերի նկատմամբ, Բնիակեղին Շաքիրին բացահայտորեն անվանել մարդապան<sup>102</sup>, մյուս կողմից՝ համագործակցել նրանց հանցակից Զեմալ փաշայի հետ<sup>103</sup>:

Նկատենք նաև, որ Հային Էդիփի՝ երիտրուրբերի նկատմամբ հստակ քննադատական մոտեցումների առաջին քայլը եղել է դեռևս 1909 թ. Աղանայի կոտորածից հետո, երբ գրողը հանդես է եկել «Ներողության նամակով»<sup>104</sup>, որում կատարել է մի շարք կարևոր շեշտադրումներ՝ պահանջելով մեղավորների հայտնաբերում և պատժում: Այսպես, 1909 թ. մայիսի 18-ին բուրքական հայտնի «Թանին» թերթում նա հանդես է եկել հոդվածով, որում ներողություն է խնդրում հայերից՝ նրանց դիմելով «իմ խեղճ հայ քաղաքացիներ» ձևակերպմամբ: Էդիփը ներողություն է խնդրում «Համիլյան մղամանջի ամենաանպաշտպան զոհերից» իրակա-

<sup>99</sup> Քիրքձևն Ա., Խոլմաց(ու)ած հայեր. Թուրք, քիրտ, արար, Թորութո, 2014, էջ 9:

<sup>100</sup> Halide Edib, Memoirs of Halide Edib, p. 264.

<sup>101</sup> St. u Adak H., Halide Edib ve Siyasal Şiddet: Ermeni Kırımı, Diktatörlük ve Şiddetsizlik, İstanbul, 2016, s. 5:

<sup>102</sup> Ինչպես իր հուշերում նշել է արդեն հիշատակված Ֆալիհ Ռիֆքը Արայիր, նա է Հային Էդիփին ծանոթացրել Բնիակեղին Շաքիրի հետ զնացրում, և երբ Շաքիրը իշել է զնացրից, Հային Էդիփը հանդիմանելով Ռիֆքին ասել է. «Ինձ ստիպեցիր շիմանալով սեղմել մի մարդասպանի ձեռք», ուժ ու Falih Rıfki Atay, Zeytin Dağı, İstanbul, 1989, s. 73:

<sup>103</sup> St. u Adak H., նշվ. աշխ., էջ 33:

<sup>104</sup> Նամալի ամբողջական տեքստը ուժ ու Adak H., Halide Edib ve Siyasal Şiddet: Ermeni Kırımı, Diktatörlük ve Şiddetsizlik, s. 36:

նացված կոտորածի համար և անգամ նշում սպանվածների թիվը՝ 30 հազար<sup>105</sup>.

1919 թվականից հետո, սակայն երբ Էդիփը միանում է թեմալական ազգայնամոլական շարժմանը, նրա տեսակետները Հայոց ցեղասպանության ու թուրքերի պատասխանատվության հարցում էականորեն փոխվում են: Ավելին, հետազոյում հրատարակած հուշերում Հայիդէ Էդիփը լրջորեն սրբազրում է իր մտքերը և հրաժարվում նախկինում արած տարբեր հայտարարություններից: Մասնավորապես նա արդեն կասկածանքով է վերաբերվում այն հարցին, թե արյոք հայերի կոտորածները կազմակերպել են երիտթուրքերը, ինչի մասին «նշում են հայկական ու օսմար աղբյուրները»՝ մոռանալով, որ նշողներից էր նաև հենց ինքը: «Արյոք Ք հնարավոր է, որ երիտթուրքերը, որոնք գլուխները մտցնելու մի անցք էին փնտրում, նման կոտորած կազմակերպած լինեին»<sup>106</sup>: Իսկ անդրադառնալով 1909 թ. Ադանայի կոտորածին՝ այս արդեն որակում է որպես «երկուստեր հարձակումներ», այսինքն՝ իր «Ներողության նամակին» ճիշտ հակառակ ձևակերպումներ է տալիս: Էդիփը մասնավորապես նշում է. «Ես այն ժամանակ Հայկական հարցն այլ կերպ էի դիտարկում, քան այսօր: Ես զգիտեի հայերի կողմից իրականացված կոտորածի մասին և չի կարող ենթադրել, որ ուրիշները նման հանգամանքների պարագայում թուրքերից հարյուր անգամ ավելի վատ և դաժան կարող էին վարվել»<sup>107</sup>: Հայիդէ Էդիփի այս հակասական կերպարի ու տեսակետների վայրիվերումների մասին շատ դիպուկ է արտահայտվել խորհրդային գրականագետ Լ. Ալկաևան. «Հայիդէ Էդիփը ապշեցուցիչ հեշտությամբ փոխել է իր համոզմունքներն ու հայացքները»<sup>108</sup>:

<sup>105</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 36:

<sup>106</sup> Edip H., Mor Salkimli Ev, s. 159-160.

<sup>107</sup> Նոյն տեղում, էջ 387-388:

<sup>108</sup> Алъакеева Л., Очерки по истории турецкой литературы 1908-1939 гг., Москва, 1959, с. 181.

Թալեաթի մասին ձևակերպումներում ևս նկատվում էին որոշակի սրբազրումներ. Հայիդէ Էդիփը արդեն նրան որակում է որպես «փղեալիստ» և պատմում հայերի կոտորածների հետ կապված նրանց միջև տեղի ունեցած գրուցի մասին: «Հայերի տեղահանությունից հետո Թալեաթին հազվադեպ էի տեսնում: Շատ լավ հիշում եմ, որ մի օր այս թեմայի մասին խոսելիս իրեն գրեթե կորցրեց և շատ կոշտ ձևով հետևյալն ասաց. «Տես՛ք, տիկի՞ն Հայիդէ, ես էլ ձեր շափ խիղճ ունեմ և մարդկանց կրած տառապանքների հետևանքով գիշերները չեմ կարողանում քնել: Սակայն դա իմ անձնական խնդիրն է, և ես այս աշխարհ եմ եկել հոգալու ոչ թե իմ անձնականի, այլ իմ ժողովրդի մասին: Եթե մի մակեդոնացի կամ հայ դեկավարի ձեռքը նման հնարավորություն լիներ, և եթե պատրվակն էլ գտնվեր, ապա երբեք առիթը չեր կորցնի: Բալկանյան պատերազմի ժամանակ նոյնքան թուրք ու մուսուլման կոտորվեց, սակայն աշխարհը հանցագրծի նման բերանը շրացեց: Ես հավատացած եմ, որ եթե այս ժողովուրդը (թուրքերը – Ո. Ս., Ն. Պ.) իր շահերի համար անի անհրաժեշտ քայլը և եթե դրանում հաջողի, ապա աշխարհը դրան հավանություն կտա և բարոյական կիամարի: Ես պատրաստ եմ իմ արարքների համար մեռնել և զիտեմ, որ այդ պատճառով էլ մեռնելու եմ»<sup>109</sup>:

Հայիդէ Էդիփին իր հուշերում բավական ընդարձակ անդրադաներ ունի նաև Կոմիտաս Վարդապետի մասին, որոնցում փորձ է արել լինելու չեզոք և անգամ դրական, սակայն շատ հաճախ սուրբ է տվել կեղծիքին ու ազգայնականությանը: Հայտնի է, որ Հայիդէ Էդիփը եղել է Կոմիտասի արվեստի մեծ երկրպագու. «... Կոմիտասը շատ հայտնի էր դարձել անառողիական երգերով և իին առաքելական շարականներով, որոնք հավաքել էր Կոստանդնուպոլսում ու Անտոլիայում համբերատար աշխատան-

<sup>109</sup> Adak H., նշվ. աշխ., էջ 59, նոյնը տես նաև Edip H., Mor Salkimli Ev, s. 387:

թի երկար տարիների ընթացքում: Նա հայտնի էր որպես հայերի մեծ առաջնորդ»<sup>110</sup>. Վարդապետի հետ ծանոթությունը Էղիփս այսպես է նկարագրում. «...Երբ նա հայտնվեց հոգևորականի երկար սև վեղարով, բոլոր սովորական անատոլիացիներին հատուկ միամիտ թուխ դեմքով, պարոսով լի աշքերով, ձայնի մաքուր ուժեղ նոտաներով, ես նրան համարեցի անատոլիական բանահյուսության ու երաժշտության մարմնացում: Մեղեդիներն այն նույնն էին, որ ես լսել էին քեմախցի ու երգորումցի մեր ծառաներից: Նա պարզապես բառերը դարձրել էր հայերեն: Բայց ես ուշադրություն չհարձրի լեզվին, ես միայն զգացի Անատոլիայի միայնակ տափաստաններից եկող այդ նուրբ և տիտոր մեղեդին»<sup>111</sup>: Տարօրինակ է, որ Հայիդէ Էղիփը Կոմիտասի ծագման հարցում ևս դրսնորում է իրեն քնորոշ հակասականությունը. նախ նշում է, որ նա հայ հոգևորական և երաժիշտ է, ավելին՝ «հայ ազգայնական է», սակայն միևնույն ժամանակ անհեթեթ կարծիք է հայտնում, թե իբր նրա ընտանիքն ունի թուրքական ծագում և հետո է քրիստոնեության ընդունել<sup>112</sup>:

Հեղինակը շեշտում է, որ բարեկամացել է Կոմիտասի հետ և նա հաճախ է այցելել իրենց տուն անզամ հայերի կոտորածների ընթացքում. «Մենք երկուս լուր տառապում էինք, բայց ցույց չէինք տալիս»<sup>113</sup>, – գրում է Հ. Էղիփը: Նա անդրադառնում է նաև Կոմիտասին աքսորից փրկելուն և նրա հոգեկան հիվանդություն ձեռք բերելուն. «Նա աքսորից փրկվեց, բայց մեկ տարի անց ահավոր ժամանակի բեռին չղիմանալով՝ նա լուրջ խնդիրներ ունեցավ: Բժիշկ Աղնանը (Հայիդէ Էղիփի ամուսինը – Ռ.Ս., Ն.Պ.) թալեաթ փաշայից թույլտվություն ստացավ Կոմիտասին ուղարկել

Փարիզ՝ բուժման»<sup>114</sup>: Գրքի անզերեն տարբերակում ասված է. «Նա դեռ հոգերուժարանում է»<sup>115</sup>, իսկ թուրքական տարբերակում նշվում է. «Նա հավանաբար մահացավ հոգերուժարանում»<sup>116</sup>:

<sup>110</sup> Halide Edib, Memoirs of Halide Edib, p. 371.

<sup>111</sup> Նոյն տեղում:

<sup>112</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 372:

<sup>113</sup> Նոյն տեղում, էջ 371:

<sup>114</sup> Edip H., Mor Salkımlı Ev, s. 374.

<sup>115</sup> Halide Edib, Memoirs of Halide Edib, p. 374.

<sup>116</sup> Halide Edip Adıvar, Mor Salkımlı Ev, s. 86.

ՕՍՄԱՆՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԳՏՆՎԱԾ ՕՏԱՐՄԱԶԳԻՆԵՐԻ ՀՈՒՇԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

*5.1. Մարշալ Լիման ֆոն Սանդերսի հուշերը*

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ՝ 1913 թ., Օսմանյան կայսրության բանակը արդիականացնելու համար որպես գերմանական ռազմական պատվիրակության դեկավար կայսրություն է եկել գեներալ Լիման ֆոն Սանդերսը, որը կարծ ժամանակ անց ստացել է մարշալի աստիճան: Նա, լինելով օսմանյան բանակի հրամանատարներից ու պատասխանատուներից, իրականացրել է որոշ բարեփոխումներ բանակի արդիականացման համար: Ֆոն Սանդերսը եղել է 1915 թ. Դարդանելի 5-րդ բանակի հրամանատարը, 1917-1918 թթ. ծառայել պահեստինյան ճակատում՝ լինելով 4-րդ, 7-րդ, 8-րդ բանակներից կազմված «Կայծակնային բանակի» հրամանատար: Պատերազմի ավարտից հետո ձերբակալվել է Ստամբուլում, ապա՝ ուղարկվել Մալթա որպես պատերազմական հանցագործ: 1919 թ. վերադարձել է Գերմանիա և մինչև իր մահը՝ 1929 թվականը, զրի է առել հուշերը: Ահա ինեց այդ հուշերում, որոնք վերաբերում են Օսմանյան կայսրությունում նրա անցկացրած հինգ տարիներին, գերմանացի մարշալը շատ կարծ՝ ընդամենը կես էջի սահմաններում, անդրադառնում է նաև հայկական թեմատիկային: Մասնավորապես խոսելով հայերի աքսորի, տեղահանության մասին՝ նա նշում է: «Թուրքերի կողմից հայերին արսորելու պատճառների

մասին քննարկում բացելը այս զրի խնդիրը չե»<sup>117</sup>: Այնուամենայնիվ, անդրադառնալով «թուրք դեկավարներին ուղղված մեղադրանքներին»՝ Լիման ֆոն Սանդերսը գրում է: «Թուրքիայի հայկական քաղաքականությունը ձևավորողները այս դեկավարները չեն: Նրանք դաստիարակվել ու ձևավորվել են այդ գաղափարի ծիրում և այդ պատճառով կարծում են, որ պետությանը թշնամի տարրերին հեռացնելու պարագայում իրենց երկրի համար հայրենասիրական մի ծառայություն մատուցած կլինեն»<sup>118</sup>: Այսինքն՝ գերմանացի մարշալը խոստովանում է, որ նախ ցեղասպանության ծրագիրը եղել է նաև ավելի վաղ, և բացի այդ՝ հակահայկական քաղաքականությունն ու դիրքորոշումը վերածվել են պետական մտածողության ու անկախ իշխանության դեկին գտնվողներից՝ շարունակվում են: Սակայն դրանով հանդերձ պատերազմական հանցագործ ու ցեղասպանների հանցակից Լիման ֆոն Սանդերսը չի մոռանում շեշտել, որ «աքսորի համար պատճառները լիովի առկա են ամենուր, որովհետև հայերը, սահմանը անցնելով, համագործակցում են թուրքական հողերը զավթած ոուսների հետ և մուտուման բնակչության նկատմամբ տարատեսակ բռնություններ են իրականացնում»<sup>119</sup>: Այսինքն՝ այստեղ էլ նա կրկնում է թուրքական պաշտոնական ու անհիմն թեզերը: Այնուամենայնիվ, Ֆոն Սանդերսը ընդունում է, որ հայերի հանդեպ եղել են «որոշ սխալ քայլեր», որոնք հանգեցրել են «չնախատեսված հետևանքների», սակայն «որևէ կասկած չկա», որ դրանք իրականացվել են «ոչ թե բարձրագույն իշխանությունների հրամաններով, այլ իշխանության ցածր օդակների մեղրով»<sup>120</sup>:

<sup>117</sup> Liman von Sanders, *Türkiye'de Beş Sene: Bir Alman Paşasının Çanakkale ve Filistin Hataları Askeri Tarih Encümeni'nin Cevaplarıyla*, İstanbul, 2013, 6. Baskı, s. 193.

<sup>118</sup> Նոյն տեղում:

<sup>119</sup> Նոյն տեղում:

<sup>120</sup> Նոյն տեղում:

## 5.2. Ռաֆայել դե Նոգալեսն ու «Կիսալուսնի տակ չորս տարի» գիրքը

Ռաֆայել Ինքառուսպէ դե Նոգալես Մենդեսը ծնվել է 1879 թ. Վենետիկայի Սան Կրիստոբալ քաղաքում, մասնակցել է 1898 թ. Կուրայում իսպանա-ամերիկյան պատերազմին, 1902 թ. վենետիկական հեղափոխությանը, 1904 թ. չին-ճապոնական պատերազմին: Առաջին համաշխարհային պատերազմում Անտանտի երկրների բանակների կազմում ընդգրկվելու դիմումների մերժումից հետ զինվորագրվել է օսմանյան բանակին: Թուրքական զինված ուժերի շարքերում մասնակցել է մարտական գործողությունների Կովկասում, Սիրիայում, Պաղեստինում: Պատերազմի ավարտին մեկնել է Գերմանիա, ապա՝ ԱՄՆ: Դե Նոգալեսն իր կյանքը ներկայացրել է «Ճակատագրի զինվորի հուշերը» (Memorias de un soldado de fortuna, 1932) և «Կիսալուսնի տակ չորս տարի» (Cuatro años bajo la media luna, 1936) ինքնակենսագրական գրքերում: Այդ հուշերը նրա ճամփորդությունների, ռազմական գործողությունների ու արկածների մասին պատմություններ են:

Օսմանյան բանակում Նոգալեսի կյանքը նկարագրող «Կիսալուսնի տակ չորս տարի» գիրքն առաջին անգամ հրատարակվել է 1924 թ. իսպաներեն: 1925 թ. և 1926 թ. լույս են տեսել գրքի գերմաներեն ու անգլերեն տարբերակները: 2006 թ. հրատարակվել է գրքի ռուսերեն տարբերակը: Իրեն համարելով եվրոպական կամ, ավելի ճիշտ, արևմտյան քաղաքակիրք մենքալիտետի կրող՝ Նոգալեսը զաղութատիրական մեծամտությամբ է վերաբերվում օսմանահպատակ բոլոր ժողովուրդներին: Նրա այս օրիենտալիստական կողմնորոշումը շեշտում են նույնիսկ իսպանացի վերլուծաբանները: Ուստի զարմանալի չե, որ հայերի մասին էլ վենետիկացի զինվորականի կարծիքը հեռու է հիացական կամ գոնեական լինելուց:

Նախ հետեւելով պաշտոնական թուրքական տեսակետներին՝ նա իր զրոյում հայերին մեղադրում է ոռւսներին աջակցելու, թուրքերին դավաճանելու, ինտրիգներ կազմակերպելու մեջ<sup>121</sup>: Հայերի մասին սովորաբար հավաքական գնահատականներ տալով՝ Նոգալեսը առանձնացնում է զորավար Անդրանիկին՝ նրան պիտակելով «դաժան մարդասպան և ֆիդայիների հանդուզն առաջնորդ», Արամին [Մանուկյան] անվանում է «տաղանդավոր գինվորական», իսկ Նուլքար փաշային՝ «հայ քաղաքական գործիչների շարքում միակ կարգին մարդ»<sup>122</sup>:

Ռաֆայել դե Նոգալեսը թուրքական բանակում իր ծառայության տարիներին առնչություն է ունեցել օսմանյան ռազմական և քաղաքական էջտայի կարևոր դեմքերի՝ Զեմալի, Էնվերի, Հայի փաշաների, Զևեր բեյի և ուրիշների հետ: Օրագրում նա մանրամասն ներկայացնում է նրանց հետ շփումներից ստացած տպավորությունները՝ արտաքինից ու հագուկապից մինչև քնավորության գծեր ու խոսելառը: Համարելով, որ մինչ պատերազմը երիտրուրբերի մեծ մասը ազնիվ մարդիկ են եղել՝ Նոգալեսը բացասական գոյններով առանձնացնում է հայկական ունեցվածքի թալանը, որը տարածված է եղել օսմանյան իշխանությունների տարբեր օղակներում՝ նահանգային ու զավառական դեկավարներից մինչ ամենաբարձր էշելոն։ «...Ուսկին, որը գետի պես հնատում էր նրանց ձեռքը, այնքան էր մշուշել նրանց ուղեղը, որ հայերից հեշտությամբ ստացածով չբավարարվելով՝ նրանք սկսեցին գողանալ ամեն ինչ»<sup>123</sup>:

Էնվեր և Զեմալ փաշաների հետ անձամբ ծանոթ լինելով՝ վենետիկացի սպան մանրամասն անդրադառնում է նրանց անձնական ու մասնագիտական որակներին: Զեմալի մասին գրում

<sup>121</sup> Տե Խորակ Բ., Չետыре года под полумесяцем, Մոսկվա, 2006, с. 24.

<sup>122</sup> Նույն տեղում, էջ 31:

<sup>123</sup> Նույն տեղում, էջ 126:

է. «1915 թ. հուլիսի 4-ին հասա Հայեավ: Հաջորդ օրը գնացի Զեմալի մոտ, որը չորրորդ բանակի հրամանատարն էր, ուղարկածովային նախարար ու Սիրիայի ու Պաղեստինի գեներալ-նահանգապետ: Ես գուա նրան վառ գույների մետաքսյա իրերով լի աշխատասենյակում: Դրանք նա իր գույներից առգրավում ու նվիրում էր իր հրաշալի հարեմի կանաց ու հարձերին: Զեմալն այն ժամանակ 55-56 տարեկան էր: Նա միջահասակ էր, սև սուր մորուրով իսկական դահճի էր նման: Նույնիսկ կատվի ժպիտը չէր կարող թաքցնել արյունաբրու վախկոտի բնույթը: Իրականում չորրորդ բանակի հրամանատարությունը Ֆոն Քրեսս բեյի ձեռքում էր, որը հետո դարձավ Ֆոն Քրեսս փաշա»<sup>124</sup>: Անդրադառնալով հայերի նկատմամբ Զեմալի վերաբերմունքին՝ Նոզալեսը շեշտում է, որ Զեմալի նպատակը կարծես թե Սիրիայի բոլոր քրիստոնյաներին սովամահ անելն էր<sup>125</sup>:

Թեև իր օրագրի սկզբում Նոզալեսը թուրքերի գործողությունները համարում է հայերի «դավաճանությանը» համաշափ պատասխան, սակայն դեպքերի զարգացմանը գուգահեռ նա սկսում է հասկանալ, որ օսմանյան իշխանությունների քաղաքականությունը պարզապես հայերի ֆիզիկական ոչնչացմանն է միտված: Կոտորածի պատճառներից խոսելով՝ Նոզալեսը գրում է, «Մոռայ, արյունաբրու ռեժիմին սովոր թուրքերը կարծում էին, որ տաղանդավոր հայերը, որոնց հետ հատկապես արդյունաբերության ոլորտում համեմատվելն իսկապես անհնար էր, երիտրուրքերի համար իրական վտանգ են ներկայացնում: Անշուշտ, սպանություններն ու աքտոր Թալեբաք փաշայի դեկավարած ռեակցիոն կուսակցության ու նրան ենթարկվող քաղաքացիական իշխանությունների լավ մշակված ծրագրի մասն էին: Այս ծրագրով նա

պատրաստվում էր ազատվել նախ հայերից, ապա՝ հույներից ու կայսրության մյուս քրիստոնյաներից»<sup>126</sup>:

Հայերի կոտորածների առնչությամբ թուրքական իշխանությունների սառնասիրտ ստախոսությունն իսկապես ցնում է Նոզալեսին. «[Աղիլջնազ, ապրիլի 21] Ես արթանացա կրակոցներից ու հրետանու արկերի պայթյուններից: Հայերը հարձակվել էին: Ես ձի նստեցի ու մի քանի զինված մարդկանց հետ գնացի՝ իրավիճակը հասկանալու: Բայց ինչքան էի զարմացել, երբ տեսա, որ ոչ թե հայերն են կոտորում, այլ քաղաքային իշխանությունները: Քրոյերի ու տեղի բնակչության աջակցությամբ նրանք շրջափակել ու կողոպտում էին հայկական թաղամասը, իսկ 300-400 քրիստոնյա արհեստավորներ փորձում էին պաշտպանվել կատաղած ամբողից: Ի վերջո ես կարողացա հասնել քաղաքապետին, որպեսզի հրամայեմ նրան վերջ տալ այս ամենին: Ի զարմանս ինձ՝ նա ասաց, որ սոսկ կատարում է նահանգապետի՝ 12 տարեկանից բարձր բոլոր հայ տղամարդկանց ոչնչացնելու հրամանը: Որպես զինվորական՝ ես չէի կարող արգելք հանդիսանալ քաղաքացիական իշխանությունների այս որոշմանը, ուստի հրամայեցի ժանդարմներին շխառնվել ու սպասեցի կոտորածի ավարտին: Պետք է ասեմ, որ փողոցներում կամ իրենց տների տանիքներին սփինքսների պես անշարժ նստած թուրք ու քուրդ կանայք նայում էին այս ամենին: 1.5 ժամ անց Աղիլջնազի հայերից կենդանի մնաց յոթ մարդ, որոնց ես կարողացա զենքով սպանուալով փրկել դահիճների ձեռքից: Եթե ես ձիուց իջա քաղաքապետարանի շենքի առաջ, ինձ դիմավորեց գավառապետն ու շնորհակալություն հայտնեց հայերի հարձակումից քաղաքը պաշտպանելու համար: Նման չլսված ամբարտավանությունից ապշած՝ չիմացա, ինչ պատասխանել: Հետո խնդրեցի իմ գերիների նկատմամբ ներողա-

<sup>124</sup> Նույն տեղում, էջ 116:

<sup>125</sup> Նույն տեղում, էջ 140:

<sup>126</sup> Նույն տեղում, էջ 102:

միտ լինել: Նա ձեռքը սրտին դրած՝ ինձ ազնիվ խոսք տվեց, նոյնիսկ շատ հանդիսավոր կերպով հայտարարեց, որ իր զիսով է պատասխանատու նրանց կյանքի համար: Սակայն նույն օրը երեկոյան հրամայեց գիշատել այս մարդկանց: Նրանց մարմինները գցեցին լիճը ևս 43 հայերի մարմինների հետ, որոնք մինչ այդ չգիտեմ, թե որտեղ էին թաքցրել: Այսպես են արեւելում սուլթանական իշխանությունները խոստումներ պահում...»<sup>127</sup>:

Դե Նոգալեսի գրքում ներկայացված նրա օրագրային գրառումներում բազմաթիվ են փաստեր հայերի սպանդի մասին, որոնց նա անձամբ ականատես է եղել: «[Բիթլիս, հունիսի 25] Զեղեթը բեր հրամայեց կախել Քարիջյան էֆենդիին և 200 առավել պատվելի հայերի, որոնցից նախօրոք մոտ 5000 ֆունտ էր վերցրել ոսկով: Հետազայում այս գումարը նա կիսեց Հալիլի հետ: Չբավարարվելով դրանով՝ Զեղեթը հրամայեց Բիթլիսի բոլոր տղամարդկանց 50-հոգանոց իմրեռով տանել մոտակա լեռների ամայի տարածքներ ու սպանել: Հայերին թաղեցին իրենց իսկ փորած ընդհանուր փոսերում: Երիտասարդ կանանց տվեցին խուժանին, պառավներին ու երեխաներին աքսորեցին: Այսպիսով՝ մեկ օրվա մեջ Բիթլիսում ու շրջակայրում 15000 հայ սպանվեց: Այն փորբաթիվ հայերը, որոնց հաջողվեց փրկվել, ապաստան գտան Մուշում, մասամբ է Սիլվանի ու Բիշերիի փախստականների մոտ: Նրանց հետապնդում էին քրդերը Բելեից, Բերքանից ու Շեղոյից ու ճնշում դեպի Սասուն ու Անդոկ լեռներ»<sup>128</sup>:

«[Էրզրումում] Ճամփեզրերին ու գյուղերի մոտ շատ էին թարմ փորած գերեզմանները, դիակները քրդերի շների ուտելիք էին դարձել: Բացի այդ՝ քաղաքում համաձարակ էր<sup>129</sup>: ...1915 թ. ապրիլի 20-ին ճամփեզրին [Խլաթի մոտ] մենք տեսանք հայերի

բազմաթիվ խոշտանգված դիակներ<sup>130</sup>: ...[հունիսի 18, Սղերթ] ճանապարհին հազարավոր կիսամերկ արյունու մարմիններ էին: Ոմանք դեռ ողջ էին: Հայրեր, եղբայրներ, որդիներ ու բոռներ այս եղանակով էին փամփուշտներից ու յաթաղաններից: Այստեղ այստեղ երևում էին ոտքեր ու ձեռքեր, որ շարժվում էին հոգեվարքում: Ազուակները կտցահարում էին արդեն մեռածների ու դեռ մեռնողների աչքերը: Հոգեվարքում գտնվողների քարացած հայացքներում մահվան տանջանքի ողջ սարսափն էր: Լեշակեր շները հոշոտում էին դեռ տաք մարմինները»<sup>131</sup>:

Ուշագրավ է, որ Նոգալեսը՝ որպես ականատես և իշխանության ներկայացուցիչ, անընդհատ ինքն իրեն արդարացնելով, ասում է, որ ինքը ոչինչ չէր կարող անել կամ արել է ամեն հնարավոր բան՝ դրա տակ հասկանալով մի աքսորյալի ջուր տալլ կամ անձնական պահեստից մի փոքր հաց հատկացնելը: Գրքի հետագա էջերում տեսնում ենք, որ իրենից աջակցություն, բարեգործություն հայցող հայերին Նոգալեսը հանձնում է թուրքական իշխանություններին՝ այս մարդկանց լավ վերաբերվելու բանավոր խոստմանը վստահելով, ապա ինքն էլ փաստում, որ «ազնիվ խոսքը» թուրք պաշտոնյայի համար ոչինչ է:

Նոգալեսի նոթերում թիջ շեն նաև հայ բնակչության՝ դեպի Սիրիայի անապատներ տեղահանության պատկերները: Նա սարսափով է նկարագրում հայերի տանջանքները: Արա հետ մեկտեղ պատերազմական իրավիճակում մարդկային զոհերն ու վիշտը կարծես սովորական են դառնում, իսկ ճոխ ճաշի սեղանի շուրջ ընթրելիս հայկական քարավանի անցնելը տիած մանրութ, որին դեմ դուրս գալը Նոգալեսն իր ուժերից վեր է համարում: «Նույն օրը՝ ճաշի ժամանակ, ես կարողացա համայնքապետի տան պատուհանից տեսնել մի բանի հարյուր քրիստոնյաների՝

<sup>127</sup> Նոյն տեղում, էջ 53-54:

<sup>128</sup> Նոյն տեղում, էջ 100:

<sup>129</sup> Նոյն տեղում, էջ 42:

<sup>130</sup> Նոյն տեղում, էջ 52:

<sup>131</sup> Նոյն տեղում, էջ 94:

կանաց ու երեխաների, որոնք տեղավորվել էին շուկայի հրապարակում: Նրանց նիհար այտերին ու փոս ընկած աչքերին արդեն երևում էր մահվան դրոշմը: Մի կին օրորում էր նորածին երեխայի կիսաքայքայված դին: Մեկ այլ կին անշարժ ընկած էր գետնին: Նա մահացել էր: Երկու որբերը, կարծելով, թե նա քնած է, լալով փորձում էին արթնացնել: Երբ հնչեց մեկնելու ազդանշանը, այդ կեղտոտ, ցնցոտիներ հագած կմախքները իրար ետևից սկսեցին վեր կենալ: Նահանգապետարանի ծառայողը, որին ես վաղուց էի ճանաչում, զաղտնի ասաց ինձ, որ անցյալ շաբաթ արդեն մի քանի նման շարայուն է շարժվել դեպի Սինան, բայց նրանցից և ոչ մեկը տեղ չի հասել: Երբ ես հարցրի, թե ինչու, նա պատասխանեց «որովհետև Ալլահը մեծ է ու բարեգույ»<sup>132</sup>: Իսկ մեկ այլ նկարագրության մեջ Նոզալեսը գրում է: «Աքսորյալներն անասունների պես քնում էին բաց երկնքի տակ: Հիշում եմ մի դեպք. բորենիները հոշոտեցին մոր կողքին քնած երեխային: Երբ մայրն արթնացավ ու տեսավ եղելությունը, վշտից խելազարված, լալով հոսպիտալի մոտ էր բերել երեխայի պատառոտված մարմնի մասերն ու պահանջում էր բուժել նրան»<sup>133</sup>:

Վանի ինքնապաշտպանության նկարագրությունը հատուկ տեղ է զբաղեցնում Նոզալեսի հուշերում, քանի որ, ըստ Էռլյան, Վանի պաշարումը նրա դեկավարած ամենամաշտարային և ամենակարևոր գործողությունն էր: «Մընշային հասանք Աղթամար փոքրիկ կղզի, ուր գեղեցիկ, իին եկեղեցուց բացի՝ կարծես բան չկար: Եկեղեցու շեմին ու բակում վանականների ու եպիսկոպոսի մարմիններն էին: Տպավորություն ստեղծվեց, որ կղզու վրա այս խեղձերին սպանած բուրք ժանդարմներից բացի՝ կենդանի շունչ չկար»: Հայերի սպանության այս տեսարանը որևիցե կերպ չմեկնաբանելով՝ Նոզալեսը նշում է, որ կղզուց երևացող Վանի

հարուստ վաճառականների ամառանոցային թաղամասի՝ Արտամելի այրվող եկեղեցու կրակը դեպի քաղաք ուղղորդող փարոս էր թվում<sup>134</sup>: Աղթամարից նախ քաղաքի այս արվարձան հասնելով՝ Նոզալեսը հետևյալ կերպ է նկարագրում դրությունը. «Հրապարակի» ...Կողքի տների պատուհաններից երեսում էին պատրոնաշներով զարդարված մեր բաշիբոզուկների կողրիտային կերպարները: Նրանք օգտագործում էին ավտոմատ հրացաններ, գոտուց կապում լայն դանակներ կամ մառուցերների փողեր: Նրանց թվում ես տեսա նաև մի քանի քրդի, որոնք մտնում էին այն խմբի մեջ, որը վաղը լուսադեմին պետք է զար և օգներ մեզ սպանել դեռ որոշ դիրքեր ու տներ պահել կարողացող հայերին: Ես տեսա, որ հրաձգությունն ուժեղանում է: Այլև անհնար էր շնչել եկեղեցու ծխացող ավերակներում վառվող հայերի դիակներից եկող մասի հոտը»<sup>135</sup>: «Սարսափելի զիշերվան հաջորդած առավուն է ոչ պակաս ահավոր է. ես արթնացա ահավոր գոռողից, որին հետևեց կրակահերթը...: Քրդերը մտել էին քաղաք ու թիկունքից հարձակվել հայերի վրա: Այս ամենը տեսեց քառորդ ժամ: Մինչ ես նախաճաշում էի ինձ այցի եկած քրդերի հետ, մեր աշք առաջ ահավոր տեսարան էր: Հայերը վազում էին, ինչպես ծուղակն ընկած ճագարներ...: Շատերը գետնին էին նստում ու սպասում մահվան, ինչպես զոհասեղանի վրա դրված գառներ: Միայն մի խումբ երիտասարդներ շարունակում էին պաշտպանվել մինչ ուժերը սպառվելը: Մեկը մյուսի ետևից ընկնում էին երիտասարդները զանակների ու հրացանակործերի հարվածներից. գնդակներ խնայելու համար քրդերը նախընտրում էին սառը զենք օգտագործել: Այս ընթացքում այլ զինյալներ մուտքմանների տներում ու նկուղներում թաքնված հայերին էին փնտրում, գտնելուն պես զրուխները յաթաղանով կտրում էին կամ դանակը

<sup>132</sup> Նոյն տեղում, էջ 98-99:

<sup>133</sup> Նոյն տեղում, էջ 129:

կուրծքը մտցնում: Ավելորդ է ասել, թե ինչքան բարդ էր ժպիտով հետևել այս զազանություններին՝ տեսնել, թե ինչպես են մարդիկ ցավից զալարվում մահվան ճիրաններում, և լսել նրանց սարսափելի աղաղակները. այդ տեսարանները մինչ օրս ել հետապնդում են ինձ»<sup>136</sup>:

Ռազմական գործողությունների բուն ընթացքին անդրադառնալով՝ վենետուելացին շեշտում է հայերի հերոսությունը. «[ապրիլի 24] ...Հայերը հուսահատ դիմադրում են, նրանց խիզախությունն ամենաբարձր գովեստի է արժանի: Ամեն տուն վերածվում է ամրոցի, որ պետք է առաձին գրավել: Հայերը վայրկենական հայտնվում էին այն շինության մոտ, որ ես ուզում էի գրավել: Ես նույնիսկ սկսեցի կարծել, թե նրանք կարդում են իմ մտքերը...: Ես հազվադեպ եմ տեսել, որ մարդիկ այնպես կատաղի կովեն, ինպես Կանի պաշարման ժամանակ: Դա անվերջանալի մարտ էր, որ երբեմն վերածվում էր ձեռնամարտի: Այստեղ ոչ որ գքություն չէր խնդրում, և ոչ որ ուրիշին չէր խնդում: Այսպես վառված մազերով, վառողից ու ծխից կեղտուս դեմքերով, հրետանու արկերի պայյօթուններից ու անդադար կրակոցներից կիսախլացած՝ մենք կարող էինք դանդաղ, չլսված զոհերի գնով առաջանալ այս համար քաղաքի կենտրոն, ուր հայերը շարունակում էին իրենց տների վառվոր ավերակների վրա պաշտպանվել՝ մինչև վերջին շունչը կովելով ազատ Հայաստանի ու քրիստոնյա հավատքի հաղթանակի համար: Իսկ ես անհծում էի այն ժամը, որ չար ճակատագիրն ինձ դարձեց իմ հավատակիցների դահիճ»<sup>137</sup>:

Նոզալեսի գրքում կարմիր թելով անցնող, բայց չբարձրաձայնվող ինդիք է նաև օսմանյան բանակում ծառայող եվրոպացիների վերաբերմունքը Հայոց ցեղասպանությանը: Անձամբ հեղինակի օրինակով տեսնում ենք կարեկցող անտարբերության

վառ դրսնորում, որը երևի թե հատուկ է եղել շատերին: Պետք է նշենք, որ ինքը՝ Նոզալեսը, առանձնահատուկ շեշտում է ամերիկացի, դանիացի միսիոներունիների, ինչպես նաև որոշ դիվանագետների հայանպաստ գործունեությունը, նաև բուրքական իշխանությունների՝ դա ամեն գնով կանխելու, չեզոքացնելու պատրաստակամությունը:

<sup>136</sup> Նույն տեղում, էջ 56-57:

<sup>137</sup> Նույն տեղում, էջ 61:

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

### ՀԱՄԲԱԴԵՏԱԿԱՆ ՇՐՋԱԾԻ ԹՈՒՐՃ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀՈՒՇԵՐԸ

#### 6.1. Պանթերքիզմի «հոգևոր հայրերից» Որգա Նուրի հուշերը Հայկական հարցի և հայության մասին

XX դարի առաջին կեսի թուրքական քաղաքական դաշտի կարևոր դեմքերից, օսմանյան խորհրդարանի պատգամավոր Որգա Նուրը, որն արդեն քեմալականների կառավարման վաղ շրջանում գրադեցրել է կրթության նախարարի պաշտոնը, ակտիվությունը ընդունված է եղել 1920-ական թթ. միջազգային-դիվանագիտական գործընթացներում, որտեղ քննարկվում էր ինչպես հայ-թուրքական սահմանների, այնպես էլ Թուրքիայում գոյատևած քրիստոնյա փոքրամասնությունների խնդիրը: Որգա Նուրը նաև թուրքական ազգայնամոլության, պանթերքիզմի ակտիվ քարոզիչներից և դեկավարներից է, ուստի բնական է նրա ատելությունը Հայկական հարցի, Հայաստանի ու հայության նկատմամբ:

Որգա Նուրն իր հուշերում նախ անդրադառնում է օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորներին, որոնց հետ անձնապես ծանոթ է եղել, և նա առանձնացնում է նրանցից Գրիգոր Զոհրապին, Վարդգեսին, Գարեգին Փասթըրմաջյանին՝ երբեմն սխալ նշելով նրանց անունները: Իսկ ինչակյան պատգամավորներից հիշատակում է Մուրադ Բոյաջյանին, դոկտոր Տաղավարյանին՝ նշելով, որ վերջինս «շատ լավ մարդ էր, իրար շատ էինք սիրում»<sup>138</sup>: Որգա Նուրը, շեշտելով, որ դաշնակցականները «օգնում

էին իթթիաթականներին», իսկ ինչակյանները «ընդդիմադիր էին», անդրադառնում է առանձին հայ պատգամավորների գործունեությանը: Այսպես, ըստ Նուրի՝ «Վարդգեսը ամեն նիստին (երիտրուքերի) օգտին և ընդդիմության դեմ կոմիտեականի ոճով, կատաղի, այնպիսի ծանր ու վիրավորական բառեր էր ասում, ավագակի նման հարձակվում էր ընդդիմության վրա: Նա առանց այդ էլ ավագակային անցյալ ուներ: Ես նրանց, հատկապես Փասթըրմաջյանին շատ էի ասում: «Սիսալ եք անում: Իթթիաթականներին մի՛ ծառայեք»: Չլեցին ինձ, սակայն հետո պատիժը այն էլ իրենց մաշկի վրա սարսափելի ձևով զգացին: Այսինքն՝ իթթիաթականների կողմից կոտորվեցին»<sup>139</sup>: Այնուհետև ավելացնում է, որ դաշնակցական հայ պատգամավորներից «միայն Փասթըրմաջյանը փրկվեց Թալեաթի կոտորածից»<sup>140</sup>: Այս արտահայտություններում հստակորեն դրսուրվում է Հայոց ցեղասպանության մի դրվագ՝ հայկական էլիտայի մշակված սպանությունը ու այդ ամենի կազմակերպիչը՝ Թալեաթը:

Իր հուշերում Որգա Նուրը անդրադառնում է արդեն քեմալական շարժման տարիներին թուրք-ռուսական հարաբերություններին և դրանցում հայկական քաղաքիչին, ավելին՝ ուսների կողմից հայկական տարածքների հանդեպ վերաբերմունքներին: Այսպես, նա, խոսելով Բեքիր Սամիի զիսավորած պատվիրակության՝ Սոսկվա այցի մասին, փոխանցում է Յուսուֆ Քեմալի խոսքերը՝ կապված թուրք-ռուսական պայմանագրի քննարկումների հետ: «Մուսները առաջարկում են, որ մենք Վանը հանձնենք հայերին: Հատկապես Զիշերինը պնդում է այդ կետի վրա: Վանում ի՞նչ կա որ. պետք է տալ և այս հարցը փակել»<sup>141</sup>: Յուսուֆ Քեմալը Անկարայում Թուրքիայի Ազգային մեծ ժողովում հայտա-

<sup>138</sup> Լոյն տեղում:

<sup>139</sup> Լոյն տեղում, էջ 331-332:

<sup>140</sup> Dr. Riza Nur, Hayat ve Hatıratım, İstanbul, III Cild, 1967, s. 678.

բարում է, որ ոռւսների հետ հնարավոր չէ համաձայնության հասնել, պայմանագիր կնքել, քանի որ ունեն նման դիրքորոշում. «Պայմանագիր կնքելու համար պետք է Վանը հանձնել հայերին. դա ոռւսներն են ուզում: Այլ կերպ հնարավոր չէ»<sup>142</sup>. Մըզա Նուրը նկարագրում է այդ հայտարարությունից հետո թուրքական խորհրդարանի՝ մեջլիսի արձագանքը. «Մեջլիսում փոթորիկ բարձրացավ: Այս մեջլիսը կրթյալ չէ, սակայն հայրենասեր է...: Հարձակվեցին Յուսուփ Քեմալի վրա: Վերջինս զիտեր, թե ինչպես իջներ ամբիոնից, վախեցավ և փախավ: Փառք Աստծո, զոնե հասցրեց ասել, որ ինքն էլ միակարծիք է մեջլիսի հետ (այսինքն՝ դեմ է Վանը հանձնելուն – Ռ.Ս., Ն.Պ.)»<sup>143</sup>:

Ըստհանրապես Մըզա Նուրի հուշերում XX դարի սկզբին հայերի, Հայաստանի համար կարևոր տարբեր հարցերի ու այդ ամենում բացասական դեր խաղացած թուրք գործիչների մասին բավական շատ անդրադարձներ կան: Այսպես, օրինակ, նա, ինսելով տիրահոչակ գորավար Քյազըմ Քարաքերիրից, նախ գովեստով է արտահայտվում նրա մասին և կանգ առնում Ալեքսանդրապոլի պայմանագրի վրա. «Նա (Քարաքերիր) մտավ Գյումրի: Հայերին պարտադրեց ստորագրել շատ ծանր մի պայմանագիր՝ «Գյումրիի (Ալեքսանդրապոլի) պայմանագիրը»: Դրա շնորհիվ մեր մեջքից մի ծանր թեր ընկավ: Լիաթոք շունչ քաշեցինք: Այս պայմանագիրը հայերի համար շատ ծանր էր: Նրանք զինաթափվեցին»<sup>144</sup>: Մըզա Նուրը խոսում է իրենց օկուպացրած հայկական տարածքների տեղանունների մասին, ինչպես նաև հանդես է զալիս առաջարկություններով՝ այդ տեղանունները փոխելու թուրքացնելու հետ կապված, ինչը տարիներ անց իրագործվելու էր թուրքական տարբեր իշխանությունների կողմից:

Այսպես, նկարագրելով իրենց այցը Գյումրի՝ նա նշում է. «Եկանը Գյումրի: Ժամանակին, եթե ոռւսները զավթել էին այս քաղաքը, անունը դրել էին Ալեքսանդրապոլ: Մոսկվայից մինչև Ղրիմ ու Կովկաս հազարավոր քաղաքների և վայրերի անունները այսպես փոխել են: Մեր աշխարհագրագետները պետք է գտնեն իին թուրքական անունները և պատրաստեն քարտեզներ: Սա որպես առաջնահերթ խնդիր պետք է դիտարկել»<sup>145</sup>:

Մըզա Նուրը խոսում է նաև Փարիզում «այն ժամանակվա Հայաստանի ուազմական նախարար» Ռուբեն Տեր-Մինասյանի հետ իր հանդիպման մասին՝ նրա ազգանունը սխալ կիրարելով՝ Դերմին Ասյան: Ըստ Նուրի՝ Տեր-Մինասյանն է ցանկություն հայտնել հանդիպելու իր հետ: «Հանդիպեցինք, նա շատ տարօրինակ մարդ էր: Երեսիս նայելով՝ վիրավորում էր թուրքերին: «Զեզ մոտ միայն զինվորական գործն է զարգացած, լավ զինվոր եք»,՝ ասում էր նա: Ես ժպտացի և մտքումս ասացի: «Ուրեմն զինին կերած հարվածը դեռ չի մոռացել»: Եվ նայելով նրան՝ ասացի: «Այս, դուք 30 հազար զինվոր էիր, մենք՝ 6 հազար»: Զկարողացավ ժխտել: Սակայն մեկնաբանեց հետևյալ կերպ, թե մտավախություն ունեին, որ ոռւսները կհարձակվեն իրենց վրա, դրա համար իրենց ուժերի մի մասը այնտեղ էին թողել, և այդ պատճառով էր այդպես եղել»<sup>146</sup>: Ենթադրաբար իտուրը 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ու Կարսի կորստի մասին է եղել:

Հետաքրքիր են նաև Մըզա Նուրի հուշերն ու դիտարկումները հայ վրիժառուների կողմից ոչնչացված թուրք ու կովկասյան թաթար (հետագայում աղբբեջանցի անվանված) ցեղասպանների մասին: Խոսելով աղբբեջանցի ոճագործ Զիվանշիրի մասին՝ Մըզա Նուրը գովում է նրան՝ նշելով, թե «այդպիսի խելացի, խելամիտ, հայրենասեր ազերի թուրք հաստատ չեմ տեսել», ապա՝ հա-

<sup>142</sup> Նույն տեղում, էջ 679:

<sup>143</sup> Նույն տեղում:

<sup>144</sup> Նույն տեղում, էջ 685:

<sup>145</sup> Նույն տեղում, էջ 732:

<sup>146</sup> Նույն տեղում, էջ 685:

վելում, որ հայերը նրան սպանել են, ու դա իրականացնողը ուզմական դատարանի կողմից արդարացվել է այն հիմնավորմամբ, որ «իբրև թե երբ Զիվանշիրը Բարքում եղել է նախարար, կազմակերպել է հայերի կոտորածը»: Սա է արադարացման պատճառը: Ծիծաղելի է...: Սա կոչվում է ոչ թե արդարադատություն, այլ լկտիություն»<sup>147</sup>: Շարունակելով հայկական վրիժառության թեման՝ Նուրը նշում է. «Ահավասիկ ընդունակ աղրբեջանցի պետական գործիչներին հայերը հերթով սպանում են: Զիվանշիրի հետ միասին այդ սպանվածների թիվը հասավ վեցի: Հետո էլ այդ նույն թվով Թուրքիայի պետական գործիչների սպանեցին՝ Թալեաթին և այլոց: Վերջինը Զեմալ փաշան էր: Մինչդեռ այդ մարդը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գրեթե 50 հազար հայի ստույգ մահից անձամբ է փրկել: Ուստաները հայերի միջոցով սպանեցին Զեմալին»<sup>148</sup>: Այս ամենից հետո ազգայնամոլ Նուրը նկատում է, որ թուրքերն էլ իրենց հերթին պետք է վրեժինդիր լինեն հայերից. «Եթե հայերը այս կերպ շարունակեն, ապա թուրք երիտասարդությունը նույն բանը հայերի հանդեպ պետք է իրականացնի: Եթե չանի, ուրեմն կնշանակի, որ թուրքական ազգային ոգին մեռել է, մենք ապրելու իրավունք չունենք, դարձել ենք անարժան ազգ: Այս պահի դրությամբ մենք իրավունք ունենք 12 հայ երևելի մարդ սպանելու»<sup>149</sup>:

Ուշագրավ են նաև Ռըզա Նուրի հիշողությունները՝ կապված քեմալականների կողմից որպես դավաճան և իբրև հայամետ որակված թուրք գործիչների սպանությունների հետ: Այս առումով առանձնացնենք նախկինում Օսմանյան կայսրության, ներքին գործերի նախարար, քաղաքական գործիչ ու իրա-

պարակախոս Ալի Քեմալի<sup>150</sup> դեմ քեմալականների քարոզության և, ի վերջո, նրան լինչի դատաստանի ենթարկելու դեպքը: Ալի Քեմալն ունեցել է ընդդիմադիր դիրքորոշում երիտրուրքական կուսակցության նկատմամբ և իր հրապարակախոսական հոդվածներում անդրադարձել է նաև Հայոց ցեղասպանությանը, այդ պատճառով թուրքական հասարակական-քաղաքական շրջանակում մինչ օրս նա ընկալվում է որպես «հայամետ գործիչ»: 1922 թ. նոյեմբերին նա քեմալականների կողմից առևանգվել է Ստամբուլում, որպես տեղափոխվի Անկարա, որտեղ պետք է կանգներ՝ «Անկախության դատարանի» առջև: Ճանապարհին՝ Իզմիրում, սակայն, Ալի Քեմալին հանձնում են Այդընի նահանգապետու կորպուսի հրամանատար Նուրեթին փաշային, որի հրամանով էլ նա փողոցում ամբոխի կողմից լինչի դատաստանի է ենթարկվում: Ռըզա Նուրը իր հուշերում նկարագրում է, որ Իզմիրում նոյեմբերի սկզբին (6-ին կամ 7-ին) նա հանդիպել է Նուրեթին փաշային և հարցրել Ալի Քեմալի մասին: Ռըզա Նուրը ցանկություն է հայտնել տեսնելու Ալի Քեմալին և հարցեր տալու, ինչին ի պատասխան՝ Նուրեթինը ասել է. «Հիմա կտեսնեք»: Այնուհետ Նուրին ուղեկցել է մի հրապարակ, որտեղ տեղադրված է եղել կառափնարան, և պարանի վրա՝ կախված մեկը: Դա եղել է Ալի Քեմալը, որին ծեծելով սպանելուց հետո կախաղան են բարձրացրել, և արդեն կախվածի կրծքին մեծ տառերով գրված է եղել «Արքին<sup>151</sup> Քեմալ»<sup>152</sup>: Ռըզա Նուրը նկարագրում է դիակը՝ եզրա-

<sup>147</sup> Նույն տեղում, էջ 747:

<sup>148</sup> Նույն տեղում, էջ 747-748:

<sup>149</sup> Նույն տեղում, էջ 748:

<sup>150</sup> Ի դեպ, Ալի Քեմալը Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Բորիս Չուստնի մեծ պատճեն:

<sup>151</sup> «Արքինը» հայկական «Հարություն» բառի թուրքերեն արտասանության տարբերակն է: Այսինքն՝ Ալի Քեմալին անվանելով Արքին՝ նրան նույնացրել են հավաքական թշնամու կերպարի խորհրդանշից հայի և նրա գործունեությունը որպես «հայկական», այս է՝ դավաճանական: Ուշագրավ է, որ Արքին Քեմալ ձևակերպում այսօր էլ թուրքական հասարակական-քաղաքական հուտորաբանության մեջ շարունակում է խորհրդանշել դավաճանի:

<sup>152</sup> Dr. Riza Nur, Hayat ve Hatıratım, III Cild, s. 974.

կացնելով. «Երևում էր, որ սպանել են մահակներով ու քարերով, գլուխը փշրել են: Սպանելուց հետո էլ կախել են»<sup>153</sup>: Նուրբ իբրև քարկացած հարցրել է Նուրեթիին փաշային, թե ինչպես է եղել, և նա էլ մանրամասնորեն նկարագրել է սպանությունը. «Նրան (Ալի Քեմալին) բերեցին Իզմիր: Վերցրի ինձ մոտ, հարցաքննեցի: Նրան վիրավորելով ամոթանք տվեցի, հետո էլ հրամայեցի, որ զինվորներից և բնակիչներից բառկացած մի ամբոխ հավաքվի, ու սպասեն: Ասացի, որ երբ ես Ալի Քեմալին դուրս կհանեմ, անմիջապես թող վրան հարձակվեն և մահակներով, քարերով, բռունքներով սատկացնեն: Այդպես էլ արեցին: Դրանից հետո էլ հրապարակում կախեցի»<sup>154</sup>:

Հատկապես Լոզանի բանակցություններն ու պայմանագրի ստորագրումը, ինչպես նաև դրանցում հայկական թեմատիկայի քննարկումը առանձնահատուկ նշանակություն ունեին Ռեզա Նուրի համար: Լոզանի բանակցությունների ժամանակ ամենակարևոր ու խնդրահարույց հարցերից մեկը Թուրքիայի տարածքում հայերի և հույների ցեղասպանություններից հետո գոյատևած քրիստոնյաների խնդիրն էր, որը քեմալականների համար առաջնային կարևորություն ուներ: Այս խնդիրն իր հերթին ուներ ածանցյալ այլ բաղադրիչներ ևս, որոնք վերաբերում էին ինչպես թուրքական իշխանություններին, այնպես էլ արևմտյան տարբեր պետություններին և նրանց տված խոստումներին ու ստանձնած պարտավորություններին: Ինչպես նշում է Ռեզա Նուրը, քրիստոնյա ժողովուրդների հարցը «Թուրքիային դարեր շարունակ կործանման տանող ամենակարևոր հոգսն էր»<sup>155</sup>: Նա նկատում է, որ «ամենաբուռն բանավեճերը» տեղի էին ունենում փոքրամասնությունների խնդիրները քննարկող հանձնաժողովի նիստերում,

որոնք վերածվել էին. «...մի մեծ ճակատամարտի...: Դրա համար աշխարհի բոլոր անկյուններից քահանաներ, քրիստոնյաներ, կոմիտեականներ, քաղաքական գործիչներ հավաքվել, լցվել էին Լոզան»<sup>156</sup>:

Հարկ է նկատել, որ բացի քրիստոնյա բնիկ ժողովուրդների, առավել կոնկրետ՝ հայերի ու հուների հարցից՝ ինքնին խնդրահարույց էր ընդհանրապես փոքրամասնությունների հարցը, քանի որ Թուրքիայի պարագայում այդ եզրույթի ընկալումը, սահմանումն ու տարաբաժանումը բախվում էին բազմաթիվ խնդիրների: Այսպես, Ռեզա Նուրը, իր հուշերում խոսելով Լոզանի բանակցությունների ժամանակ «փոքրամասնություն» տերմինի սահմանման մասին՝ անդրադառնում է դրա հիմնական բաղադրիչներին՝ ռասայական, լեզվական, կրոնական, և դա համարում է Թուրքիայի համար մեծագույն վտանգ. «Մա մեզ համար լուրջ վտանգ էր: Մեր դեմ աշխատող այս մարդիկ ինչքան խորը և ինչքան լավ էին մտածել»<sup>157</sup>: Այնուհետև նա բացատրում է իր մտահոգությունը հետևյալ կերպ. Եթե Լոզանի բանակցությունների ժամանակ առաջնորդվեին փոքրամասնությունների ռասայական բաժանմամբ, ապա չերքեզները, արխազները, բոսնիացիները, քրդերը պետք է համարվեին փոքրամասնություն: Եթե հիմք ընդունեին լեզվական բաժանման դրույթը, ապա Թուրքիայում քնակվող այլալեզու մուսուլմանները նույնպես պետք է համարվեին փոքրամասնություն: Իսկ կրոնական դրույթի կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ դաշնանքայինի մասին խոսելիս նա նշում է. «Երկու միջին շիաներին (քրդլրաշներ), որոնք զտարյուն թուրքեր են, նույնպես սարքելու էին փոքրամասնություն»<sup>158</sup>: Տարվելով ինքնազնվեստով՝ Ռեզա Նուրը պատմում է, որ բանակցու-

<sup>153</sup> Նույն տեղում:

<sup>154</sup> Նույն տեղում, էջ 975:

<sup>155</sup> Նույն տեղում, էջ 995:

<sup>156</sup> Նույն տեղում, էջ 996:

<sup>157</sup> Նույն տեղում, էջ 1044:

<sup>158</sup> Նույն տեղում:

թյունների ժամանակ այդ առաջարկը լսելով՝ «ուղղակի սարսափել ե» Թուրքիայի համար դրա կործանարար հեռանկարից և «ամբողջ ուժերը լարելով՝ պայքարել է բաժանման այդ չափորոշիչի դեմ՝ հասնելով նրան, որ ռասայական, լեզվական, կրոնական փոքրամասնություններ սահմանող դրույթը հանվել է, ու արձանագրվել է միայն «ոչ մուտուման փոքրամասնություն» ձևակերպումը: Այնուհետ ազգայնամոլ գործիչն անդրադառնում է նաև այդ պոտենցիալ վտանգից քաղաք «գասերին», որոնցից կարևորը, ըստ նրա, հետևյալն է. «Մեր հիմնական, ամենաարդար, ամենակենսական հարցը մեր հայրենիք այլ ռասայի, այլալեզու, այլակրոն մարդ չթողնելն է»<sup>159</sup>: Շարունակելով իր վերլուծությունը՝ Ռոզա Նուրը բացահայտ նշում է, որ այդ վտանգները չեղորացնելու, այսինքն՝ միատարր Թուրքիա ձևավորելու համար «ամենաճիշտը թուրքական ծայրահեղ նացիոնալիզմն է»<sup>160</sup>:

Թուրքական պատվիրակությունն ընդհանրապես սկզբունքային էր՝ չմասնակցել որևէ բանակցության կամ նիստի, որտեղ կխոսվեր Հայկական հարցի մասին: Ավելին՝ Ռոզա Նուրը սկանդալային կերպով լրում է բանակցությունների դասինքը և դրանով, ըստ եւրյան, տապալում քննարկումը՝ չնայած եվրոպական պատվիրակների բանավոր հավաստիացումներին, թե ընդամենը հայտարարություններ պետք է անեն հայկական թեմայով: Ռոզա Նուրը իր այդ քայլը ներկայացնում է որպես անձնական մեծ ներդրում թուրքական շահերի պաշտպանության գործում: Ըստ նրա՝ նիստերը բոյկոտելու քայլը նա արել է հանկարծակի, նախօրոք չի տեղեկացրել մյուս երկրների ներկայացուցիչներին, որպեսզի եվրոպական երկրները չհասցնեն ճնշումներ գործադրել Թուրքիայի պատվիրակության դեկանար Իսմերի վրա<sup>161</sup>: Նա իր քայլը չի հա-

մածայնեցրել նաև Իսմերի հետ և նիստը տապալելուց հետո է միայն այդ մասին զեկուցել պատվիրակության դեկանարին, որը, համբուրելով Ռոզա Նուրին, ասել է. «Քեզ հազար անգամ շնորհավորում եմ. դու Հայկական հարցը վերջնականապես թաղեցիր»<sup>162</sup>:

«Հայկական ազգային օջախ» ստեղծելու հարցին նույնապես իր հուշերում բավական մեծ տեղ է տվել Ռոզա Նուրը և կիրառել այնպիսի հետառաբանություն, որը պետք է ավանդական դառնար Թուրքիայի համար և դրսերպեր նաև հետազայում ու հատկապես այն դեպքերում, երբ խոսքը վերաբերել է հայկական տարածքների վերադարձին: Այսպես, երբ ամերիկյան պատվիրակն իր ելույթում հայերի համար պահանջել է «Հայկական օջախ» և դա հիմնավորել նաև հումանիստական նկատառումներով, Նուրը պատասխանել է, որ եթե ամերիկացիներն անհանգստանում են հայերի համար՝ շեշտելով հումանիզմի պարագան, թող «նրանց Ամերիկայում հող տան», քանի որ Թուրքիայում վիճակն անհամեմատ ավելի վատ է, քան ԱՄՆ-ում, և այդ հարուստ երկրում հայերը «իրենց շատ հանգիստ կզան»<sup>163</sup>: Գրեթե նոյն միտքն ավելի ուշ՝ 1945 թ., ասելու էին թուրք պաշտոնաները՝ ի պատասխան ԽՍՀՄ հողային պահանջների՝ կապված Կարսի ու Արդահանի նահանգների հետ. այդ ժամանակ Թուրքիայի պաշտոնական հայտարարության մեջ շեշտվելու էր, որ եթե ԽՍՀՄ դեկանար վերաբերությունը մտահոգ է հայերի հողային խնդիրներով, թող Ռուսաստանի անձայրածիր տարածքներում նրանց հող տա:

Լոգանում, ցավոք, Հայկական հարցը, մի կողմից, դառնալով համաշխարհային քաղաքական գործընթացների ու առևտուրի մաս, մյուս կողմից, բախվելով մեծ տերությունների անտարբերությանը, ըստ եւրյան, փակվեց: Թուրքերը նոյնապես գնահա-

<sup>159</sup> Նոյն տեղում, էջ 1045:

<sup>160</sup> Նոյն տեղում:

<sup>161</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 1059-1065:

<sup>162</sup> Նոյն տեղում, էջ 1064:

<sup>163</sup> Նոյն տեղում, էջ 1058-1059:

տական են տալիս Լոզանի պայմանագրին, մասնավորապես բանակցությունների հայկական բաղադրիչին: Ռըզա Նուրը ծայրահեղ ազգայնամոլական ու այլատյաց շեշտադրումներով նշում է. «Իրոք, Հայկական հարցը փակվեց, և այլս բանակցությունների ժամանակ հայ բառը չլսվեց: Սա, մի կողմից, հայերին լավ դաս էր, բանի որ եվրոպացիները նրանց իրենց շահերի համար առաջ էին մղում, թույլ տալիս, որ կործանվեն, իետո նրանց ոչինչ չէին տալիս: Եվ այսպես եղել է ոչ թե մեկ, այլ շատ անգամ: Համաշխարհյան պատերազմի ժամանակ հայերի ապրած ողբերգության ծավալները մեծ են: Դրա պատճառը Անգլիան, Ռուսաստանն ու Ֆրանսիան են: Այսքան կործանումներից ու աղետներից հետո այդ երեք պետություններն անպայման նրանց պետք է հող տային: Մինչեռ նրանք զբաղված էին բացառապես իրենց շահերով և բավարարվեցին՝ լոկ բանավոր «հայերին տարածք է պետք» ասելով ու վերջ: Կարող եմ ասել, որ փաստացի Հայկական օջախի գաղափարը մենք եվրոպական դիվանագետների հետ միասին բաղեցինք»<sup>164</sup>: Ռըզա Նուրը նաև բավական վիրավորական կերպով հայերին համեմատում է լաբորատորիաների նապատակների հետ, որոնց վրա փորձարկումներ են անում, և այդպես է պատկերում եվրոպացիների վերաբերմունքը հայերի ու Հայկական հարցի նկատմամբ՝ հավելելով. «Սակայն այդ ազգը մինչ օրս այնքան անհեռատեսություն է դրսուրում, որ դեռևս չի հասկանում այս ամենը»<sup>165</sup>:

## 6.2. Քեմալ Աթաթուրրի «զաղտնընկեր» Քըլը Ալին հայերի մասին

Ռազմական ու բաղարական գործիչ Քըլը Ալին, որը եղել է երիտրուրք պարագուի Էնվեր փաշայի եղբոր՝ Նուրի փաշայի համարզը և մասնակցել նաև օսմանյան բանակի գործողություններին Բարվում, Թուրքիայի հիմնադիր-նախագահ Քեմալ Աթաթյուրրի ամենամտերիմ գինակիցներից է, մարդ, որի հետ վերջինս կիսել է իր գաղտնիքները, ասել է թե՝ զաղտնընկերը: Երկար տարիներ լինելով Թուրքիայի բաղարական կյանքի կենտրոնում, զբաղեցնելով պատգամավորի պաշտոն՝ Քըլը Ալին հետազոյում գրի է առել իր հուշերը, որոնք վերաբերում են քեմալական շարժմանը և Քեմալի նախագահության տարիներին: Իր հուշերում Քըլը Ալին նշում է, թե Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերը «օգնում էին թշնամական ուժերին», իսկ պատերազմից հետո «Անատոլիայի մի շարք շրջաններում ապստամբել էին՝ թուրքերից վրեժ լուծելու նպատակով»<sup>166</sup>: Հարկ է հատուկ շեշտել, որ ինչքան էլ թուրք պաշտոնյաները փորձում են խեղաթյուրել դեպքերը, այնուամենայնիվ նրանցից շատերի հուշերում հստակորեն նշվում է, որ հայերը «ցանկանում էին վրեժինդիր լինել», ինչն անմիջապես առաջ է բերում պատասխան չպահանջող հարցը, թե ինչ պատճառով էին ուզում վրեժինդիր լինել:

Քըլը Ալին անդրադառնում է 1919 թ. գեներալ Հարբորդի դեկավարած ամերիկյան պատվիրակության այցին Օսմանյան կայսրության որոշ նահանգներ, որի նպատակն էր տեսնել, թե ինչ է կատարվել այնտեղ: Պատմական հայկական նահանգներում տեղի ունեցածը թուրքերը լիովին խեղաթյուրված էին ներկայացնում՝ առաջ քաշելով այն թեզը, թե իբրև հայերը այդ տա-

<sup>164</sup> Rıza Nur, նշվ. աշխ., էջ 1065-1066.

<sup>165</sup> Նուրին տեղում, էջ 1066:

<sup>166</sup> Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, (derleyen: Hulusi Turgut), İstanbul, 15. Basım, 2016, s. 28.

բածքներում իրականացրել են մուսուլմանների զանգվածային կոտորածներ: Մուսթաֆա Քեմալի հետ գեներալ Հարբորդի հանդիպելուց հետո ամերիկյան բազմամարդ հանձնախումբը պետք է այցելեր Էրզրում, որը, ըստ Քըլըշ Ալիի, «այն վայրն էր, որտեղ տեղի էր ունեցել հայերի իրականացրած զազանությունը»: Այդ մասին տեղյակ գեներալ Քյազըմ Քարաբեքիրը Քըլըշ Ալիին հանձնարարել է ուղեկցել ամերիկյան հանձնախմբին<sup>167</sup>: Պատմելով ամերիկյան հանձնախմբի այցի մասին՝ Քըլըշ Ալին գրում է. «Բազմամարդ ամերիկյան պատվիրակությունը դանդաղ էր ընթանում, մենք էլ գոհ էինք դրանից, քանի որ անզամ ծայրամասային ցյուղերը գերծ չեն մնացել հայկական վայրագություններից»<sup>168</sup>: Սակայն Քըլըշ Ալիի այս խոսքերը կասկածի հիմք են ստեղծում առ այն, որ թուրքերը մինչև ամերիկյան պատվիրակության այցը փորձել են իրենց կեղծիքը հիմնավորելու համար խեղաթյուրված պատկեր ստեղծել, և դրա համար նրանց ժամանակ էր պետք: Թուրք գործիչը իրականությունը խեղաթյուրելու իր ջանքերում երբեմն դուրս է զայխ տրամաբանության սահմաններից և երեխ թե կոտորված հայերի դիակների առկայությունը հիմնավորելու համար ամերիկյան պատվիրակությանը ասում է. «Հայերը երբեմն-երբեմն իրենք իրենց վրա էլ էին հարձակվել»<sup>169</sup>:

Հայ գործիչներից Քըլըշ Ալին հիշատակում է օսմանյան խորհրդարանի պատգամավոր Գարեգին Փասթըրմաշյանին (Արման Գարո) և զորավար Անդրանիկին, որոնք էլ իրը թե «Էրզրումում դաժանություն չի մնացել, որ արած չլինեն...», Անդրանիկի բռնություններից տուժել են նաև այն հայերը, որոնք իրեն չեն միացել: Շրջակայքի լեռներում, մեկուսի վայրերում թարնված այդ հայերը իրենց թարսուցներից դուրս են եկել միայն այն ժա-

մանակ, երբ թուրքական բանակը ետ է վերցրել քաղաքը»<sup>170</sup>: Իհարկե, դժվար է հավատալ, որ ցեղասպան թուրքական զորքը պետք է փրկեր իրը թե Անդրանիկից թաքնված էրզրումցի հայերին, սակայն այդ ամենը թուրքերը կազմակերպել են ամերիկյան պատվիրակությանը և գեներալ Հարբորդին ցույց տալու համար: Այդ մասին ևս պատկերացում կարելի է կազմել Քըլըշ Ալիի հուշերում առկա անզգույշ արած որոշ նկարագրություններից: Այսպես, նկարագրելով իրենց այցը, այցի կետերը և ամերիկյան պատվիրակությանը իրամցրած «Ճշմարտությունը»՝ Քըլըշ Ալին նշում է. «Պատվիրակությունից առանձնանալով՝ նրանցից առաջ հասած քաղաք (Էրզրում) և Մուսթաֆա Քեմալի հատուկ նամակը փոխանցեցի Քյազըմ Քարաբեքիր փաշային»: Նամակը կարդալուց հետո Քարաբեքիրը մի քանի լրացուցիչ հարց է տվել և ասել, որ գեներալ Հարբորդը «իրականությունը այստեղ՝ տեղում, կտեսնի...»<sup>171</sup>: Նկարագրվածից արդեն պարզ է, թե ինչ բովանդակություն է ունեցել Մուսթաֆա Քեմալի ուղարկած նամակը, և որն է եղել դրա նպատակը, ինչն էլ Քարաբեքիրը իրականացրել է գործին ներգրավելով «Անդրանիկի վայրագություններից փրկված և թուրքերի մոտ ապաստանած» հայերի, որոնք ամերիկյան պատվիրակությանը պատմել են «հայերի վայրագությունների մասին»<sup>172</sup>:

Քըլըշ Ալին նկարագրում է, թե իրը այդ շրջանների թուրքական մուսուլմանական սրբավայրերը, դպրոցները, մզկիթները, թաղամասերը ավերված էին, իսկ «դրա փոխարեն հայկական եկեղեցիները, դպրոցները, գերեզմաննոցները անվնաս էին»<sup>173</sup>: Նա նա նշում է, թե ամերիկյան պատվիրակության անդամները տե-

<sup>167</sup> Նոյն տեղում, էջ 73:

<sup>168</sup> Նոյն տեղում:

<sup>169</sup> Նոյն տեղում:

սան, որ այն տարածքները, որոնք Ամերիկան, Անգլիան ու Ֆրանսիան ծրագրել էին հանձնել հայերին, իրականում «թուրքի հարազատ հայրենիքն է» և ամեն ինչով թուրքական է, իսկ այն, ինչ նրանց պատմել են հայերը, վարպետորեն մատուցված կեղծիքներ են. «Ոչ թե հայերն են ոչնչացվել, այլ, ընդհակառակը, ցանկացել են ոչնչացնել թուրքերին»<sup>174</sup>:

Հատ Քըլը Ալիի՝ գեներալ Հարբորդը հեռանալիս սեղմել է Քարաբերիքի ձեռքը և բարձրածայն ասել. «Ես իրականությունը տեղում տեսա»: Իրականացնելով իրենց միսիան ու խաբելով ամերիկյան գեներալին՝ Քարաբերիքը փոխադարձ նամակ է հանձնել Քըլը Ալիին, որպեսզի նա փոխանցի Մուսթաֆա Քեմալին, և ասել. «Դմ փոխարեն գրկեք նրան: Մեր իրավունքները արդեն մեր ուժերով կարող ենք պաշտպանել...»<sup>175</sup>:

Դրանից հետո Քըլը Ալին՝ արդեն որպես Մուսթաֆա Քեմալի հավատարիմ գինակից, նրա կողմից գործուղվել է Կիլիկիա, մասնակցել այդ տարածքի օկուպացիային և հայերի հանդեպ ցեղասպանական գործողությունների շարունակությանը: Պատմելով Այնթափի ու Մարաշի դեպքերի կամ իր ձևակերպմամբ այդ «տարածքները ազատագրելու» մասին՝ Քըլը Ալին նշում է, թե իր համար զարմանալի էր հայերի թշնամանքը թուրքերի հանդեպ, և պատմում է, որ իրենք Ստամբուլում ունեցել են հայ հարևաններ, որոնց հետ շատ լավ հարաբերություններ են ունեցել. «Նույնիսկ մի հայ քահանա ինձ ֆրանսերեն դասեր է տվել»: Հայերի մոտ հակառական տրամադրությունների հիմքը և կիլիկիահայության դիմադրության շարժադիթները հասկանալու նպատակով նա հանդիպել է մարաշցի երկու հայ քահանաների հետ, որոնք, «անգամ մեկը մյուսից ամաչելով», ասել են. «Մրանք մեր հայերը չեն...: Մրանք ոռւսահայեր են...: Աստված նրանց պատիժը թող

տա....: Ուղեղները լվացված են: Չգիտեն, թե ինչ են անում և ինչ են ուզում»<sup>176</sup>:

Քըլը Ալին, կրկին խոսելով իրեն մտահոգող հայ-թուրքական թշնամանքի մասին, անդրադառնում է Այնթափի հայության քեմալական գորքին ցուցաբերած դիմադրությանը. «Այնթափի պաշտպանության առաջին օրերն էին: Ի՞նչ եղավ այս մարդկանց, որոնց հետ դարերով եղբոր պես ենք ապրել, խաղաղության և բարորության մեջ եղած այս մարդկանց ո՞վ այսպիսի զազանի վերածեց»<sup>177</sup>: Եվ կրկին խոսում է մարաշցի հայ երկու քահանաների մասին ու ասում. «Կարծելով, որ նրանք իրողությունները այստեղ ավելի ազատ կարող են բացատրել, նրանց Այնթափ բերել տվեցի»: Նա այդ քահանաներին ուղարկում է թուրքական գորքերի և հայ ինքնապաշտպանական ուժերի շիման գիծ կամ չեզոք գոտի. «Նրանք սպիտակ դրոշներով այնտեղ գնացին և, իրոք, ինչպես և մեզ խոստացել էին, սկսեցին խրատ տալ. «Այստեղից եթե նույնիսկ թուրքերը գնան են, մենք ինքներս մեզ կուտենք: Դրսից իբրև թե հայ կոչվող այդ եկածների և մեր միջու ի՞նչ ընդհանրություն կա: Մրանք մեզնից չեն: Մեր նախնիները այստեղ հանգիստ են ապրել: Թուրքը այստեղից չի գնա, և հնարավոր չէ նրան վոնդել: Եկեք ինելքներս գլուխերս հավաքենք, որ հետո չգոշանք»<sup>178</sup>: Հայ քահանաների այս դավաճանական ելույթը ինքնապաշտպանության դիմած հայերի կողմից ոչ միայն չի ընդունվել, այլև, ինչպես փոխանցում է Քըլը Ալին, «հարձակվեցին նրանց վրա և քիչ մնաց սպանեին»<sup>179</sup>:

<sup>176</sup> Նոյն տեղում, էջ 116:

<sup>177</sup> Նոյն տեղում, էջ 117:

<sup>178</sup> Նոյն տեղում:

<sup>179</sup> Նոյն տեղում:

### **6.3. Հայկական հարցը և հայերը Քյազըմ Քարաբերիրի հուշերում**

Օսմանյան բանակի հայտնի զինվորականներից գեներալ Քյազըմ Քարաբերիրը բացասական իմաստով շատ մեծ դեր ունի XX դարասկզբի հայոց պատմության մեջ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին բանակում տարբեր դեկավար պաշտոններ գրադաւուց հետո՝ 1917 թ., Քարաբերիրը տեղափոխվել է Դիարբեքիրում գտնվող շտաբ՝ ստանձնելով Երկրորդ բանակի հրամանատարությունը Վանի, Բիթլիսի, Խարբերդի ճակատներում: 1918 թ. Քարաբերիրի դեկավարությամբ թուրքական զորքերը զավթել են Երզնկան, Էրզրումը, ապա՝ նաև Սարիղամիշը, Կարսը, Գյումրին ու Վանաձորը (Ղարաբիլիսա): Պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո Քարաբերիրը միացել է քեմալական շարժմանը և, փաստորեն, կանգնել նոր պետության ստեղծման ակունքներում: Որպես Արևելյան ճակատի հրամանատար՝ նա դեկավարել է թուրքական զորքերի 1920 թ. հարձակումը Հայաստանի Հանրապետության վրա և կազմակերպել ավելի քան 200 000 հայի կոտորած: Թուրքիայի Հանրապետության հոչակումից հետո ընտրվել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր: Նախագահ Մուսթաֆա Քեմալի հետ բաղարական ու զաղափարական մի շարք հակասությունների պատճառով նախ անցել է ընդդմադիր թև, ապա՝ հեռացել բաղարականությունից: Միայն Աթաթյուրքի մահից հետո հնարավորություն է ստացել կրկին գրադաւուր բաղարական զործունեությամբ և 1939 թ. ընտրվել է ԹԱՄԾ Ստամբուլի պատգամավոր, ապա՝ 1946 թ., դարձել է ԹԱՄԾ նախագահ:

Քյազըմ Քարաբերիրի փաշան թողել է բավականին հարուստ գրական ժառանգություն, այդ թվում՝ հուշեր, օրագրեր, որոնցում նա անդրադառնում է իր ժամանակաշրջանի Թուրքիայի ներքին

ու արտաքին բաղարական խնդիրներին, ներկայացնում տարբեր հարցերի վերաբերյալ սեփական տեսակետները: Մեր ուսումնասիրության առարկա հանդիսացող օրագրերը տասնամյակներով կորած են համարվել և պատահաբար են գտնվել: Երեսունինը ընդհանուր տետրերում, 6898 էջում ամփոփված օրագրերը ներկայացնում են Քարաբերիրի առօրյան ու գրառումները 1902-1948 թթ., սակայն 1908, 1912, 1915, 1928, 1929, 1930, 1933, 1934, 1935, 1936, 1937, 1946 թվականները բացակայում են: Բացառությամբ 1939 թ. առաջին օրերին վերաբերող լատինատառ գրված գրառումների՝ արաբատառ՝ օսմաներեն տետրերի տառադարձված տարբերակը հրատարակվել է 2009 թ. պատմաբան Յուզել Դեմիրելի խմբագրությամբ: Մեր ուսումնասիրության ընթացքում հատկապես կարևոր ենք Քարաբերիրի՝ որպես Արևելյան ճակատի հրամանատարի անդրադառները հայաբնակ տարածքների խնդիրներին, հայ որբերի հավաքագրման հարցին, ինչպես նաև 1918 թ. մայիսյան հերոսամարտերին ու 1920 թ. թուրք-հայկական պատերազմին:

Քյազըմ Քարաբերիրի օրագրում հայերի մասին բազմաթիվ հիշատակումները տեղափորվում են թուրքական հակահայկականության ու Ժխտողականության զաղափարների շրջանակում: Ըստհանրապես Առաջին համաշխարհայինի ավարտին Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթներում ու Անդրկովկասում ստեղծված իրավիճակը յուրահատուկ տեղ ունի Քարաբերիրի օրագրում: Նա ներկայացնում է տարածաշրջանում ուժերի դասավորվածությունը, հայ-վրացա-աղբբեշանական հակասությունները, Շուսաստանում ընթացող պայքարը, Անտանտի բաղարականությունը և այդ ամենի համատեքսում պարտված ու մասնատման եզրին կանգնած թուրքական պետության փրկության համար իր տեսականը: Գրեթե ամենօրյա գրառումներում ցույց տալով զարգացումները՝ Քարաբերիրը մանրամասն նկա-

բազրում է հայերի դեմ իր տարած հաղթանակները, թուրքական բանակի գործողությունները: Այսպէս, 1918 թ. օրագրային գրառումների մեջ կարդում ենք. «[1918 թ. փետրվարի 1] Ուժահիդենում ենք: Վերջին 10 օրում հայերի դաժանությունն անսահման է: 650 մուտուլման են տարել՝ ճանապարհ սարքելու համար, դեռ նորություն չկա: Հարձակվում են կանանց ու ծերերի վրա: Մզկիթներն ու տները վառում են<sup>180</sup>: ...Մուտուլմանները պատմում են Մամահարունում հայերի արած կոտորածի մասին<sup>181</sup>: ...[ 1918 թ. մարտի 9] Թագեզյուլում 180 տուն էր, հարյուրը հայերը հետ քաշվելուց վառել են<sup>182</sup>: [1918 թ. մարտի 17] 15 օրվա ընթացքում հայերը 1616 մուտուլման են սպանել: Էրզրումի կոհվներում հայերը մոտ 500 վիրավոր ունեն<sup>183</sup>:»:

Քարաքերիրի օրագրային գրառումներից պարզ է դառնում, որ 1918 թ. ապրիլին թուրքական գորքերի կողմից Կարսի գրավումը հատկապես կարևոր տեղ ունի նրա համար: Իր օրագրում նա գրում է. «Մարտի 11/12-ին երազում էնվեր փաշային տեսա: Ասաց՝ Կարսը գրավեք»<sup>184</sup>: Ապրիլի 21-ի գրառման մեջ ևս Քարաքերիր անկեղծանում է. «Երազում Կարսի հանձնումը տեսա: Մեծ օսմանյան դրոշը բացեցինք: Ժողովուրդն ալիք-ալիք ծփում էր»<sup>185</sup>: Իսկ ապրիլի 25-ով թվագրված գրառման մեջ ասված է. «Առավոտյան եղանակը մատախապատ էր և անձրևոտ, հետո լավացավ: Կարսի գրավում: Պաշտոնյանները եկան: Ասացին, որ արևելյան ճակատը կեսօրին հանձնել դժվար կլինի: Չընդունեցի:

<sup>180</sup> Karabekir K., Günlükler (1906-1948), (1-2.Cilt), hazırlayan Y. Demirel, İstanbul, 2009, s. 465.

<sup>181</sup> Նոյն տեղում, էջ 467:

<sup>182</sup> Նոյն տեղում, էջ 472:

<sup>183</sup> Նոյն տեղում, էջ 477:

<sup>184</sup> Նոյն տեղում, էջ 473:

<sup>185</sup> Նոյն տեղում, էջ 491:

Ստիպված համաձայնեցին<sup>186</sup>: ...Շատ դրոշներ են կախված: Բոլորն ուրախ են: 5:30-ի կողմերը եկավ պատվիրակ Միխայիլ Արգումանովն իր մերձավորների հետ: Նա մի անգամ էլ էր եկել: Հստակ է, որ կովկասից հայ է: Ինձ վրա շատ լավ տպավորություն թողեց: Պարզվում է՝ Կարսի զինվորական կոմիսարն է: Խարսյաց, կարձահասակ: Ասաց. «Կարսը ձեր իշխանության տակ է: Ներսում մի հուսական գունդ և ոռուսական ջոկատ կա»: Բերդի հրամանատար գեներալ Դեյեֆն էլ էր այստեղ: Ժամը 9:00-ին երրորդ խումբը հասավ Կարսի հրամատարության գրասենյակ: Վերջին շատ հարուստ հայկական զնացքը մեր աշքի առաջ մեկնեց: ...Զեռքներս ոչ մի զնացք չմնաց»<sup>187</sup>:

Քաղաքի գրավմանը հետևում է տիրող ընդհանուր իրավիճակի նկարագրությունը. «[1918 թ. ապրիլի 26] ...Առավոտյան 9-ին մերենայով Կարս մեկնեցինք: 10-ին հասանք: Շատ ցեխոտ ու կեղտոտ թաղամաս է: Կատվում է: Նպատակուղղված հրդեհ էր, սակայն ավանի ներսը անվնաս է: 300 մուտուլման գերի կա<sup>188</sup>: ...Հրամանատարի հետ հանդիպեցի: Համեստ կերպար է: Ասում է՝ ես բոլշևիկ եմ: Հարցի, թե բերդում ինչքան զնդակ կա: Հստակ թիվը հարցրի: Ասաց՝ չեմ հիշում: Ասացի՝ ինչպես կլինի, որ հրամանատարը չիիշի: Ասաց՝ իմ նման վատ հրամանատարը որտեղից իմանա: Իսկապես, 55-ամյա մուժիկի չափ կրթություն ունի: Ամենավերջում ասացի, որ հայ հայդուկների հրամանատարություն է արել ու շատ դժբախտության, ցավի ականատես դարձել<sup>189</sup>: [1918 թ. ապրիլի 29] Կարսի բերդով գրունեցինք: Սարսափելի ճանապարհ է: Լավ երեսում են Անիի ավերակները: Մի շարք եկեղեցիներ: Նախկինում հայկական մայրաքաղաքն է եկել: Երե-

<sup>186</sup> Նոյն տեղում, էջ 494:

<sup>187</sup> Նոյն տեղում:

<sup>188</sup> Նոյն տեղում:

<sup>189</sup> Նոյն տեղում, էջ 495:

կոյան կողմ հասանք կայարան: Ամբողջ տարածքը հնձված է: Կայարանի շենքերը գեղեցիկ են, բայց շատ ցուրտ ե»<sup>190</sup>:

1918 թ. մայիսյան հերոսամարտի օրերն էլ են մանրամասն նկարագրված Քարաբերիրի հուշերում: Նա ներկայացնում է թուրքական ու հայկական բանակների դիրքերը, մեծ ու փոքր բախումները. «[ 1918 թ. 14 մայիսի] Գյումրու ճակատամարտ: Ժամը երեք չեղած՝ Արփաշայն անցնելու հրաման եկավ: Կեսգիշերին նորից հրաման եկավ: 3:30-ին հանձնվելու առաջարկ է արվելու: Թիհնիսի թերդից մոտ 300 մետր արևելք գտնվող դիտակետ հասանք: Ակսեցինք անցումը բոլոր ուղղություններով: Հայերն ամենակատաղին Ղարաբիլսայում են դիմադրում...: Թեև ժամը 5-ից հետո հայերը առաջարկեցին Գյումրին հանձնել, սակայն 5:30-ից հետո դրսից մոտ 500 զինյալ հայ ճակատի արևմուտքում հարձակում սկսեցին: Այսօրվա [մայիսի 21] գործողության ընթացքում 9-րդ գորաբանակի հեծելազորի և 28-րդ զնդի դեկավար բատալիոնը Վարդաներ գյուղում պատահաբար ճակատամարտել է 300-հոգանոց հետևակի և 100-հոգանոց հեծալազորի հետ: 20 ավազակ սպանվել է, 80-ը գերի ընկել: Երևան-Իմամլը/Համամլը մայրուղու երկայնքով դեպի Իմամլը զնացող 200 հետևակային և 100 հեծելազորային ավազակից 5-ը սպանվել է 29-րդ զնդի կողմից»<sup>191</sup>:

Ուշագրավ է, որ սեփական բանակի պարտությունները Քարաբերիրը փորձում է հնարավորինս մեղմ ներկայացնել: Այսպես, Սարդարապատի ճակատամարտի մասին գրում է. «[1918 թ. մայիսի 22] Հեծելազորի գունդը և 108-րդ գունդը, երեկ 600 հոգի հետևակից և 250 հեծելազորայինից կազմված հայկական խմբի հետ մարտի մտնելով, Սարդարապատ կայարանը գրավեցին: Ավազակները 150 զնի ունեն: Մեզնից երկուսը՝ ծանր, յոթը թեթև

վիրավոր են: ...Այսօր ավազակներն ավելի ուժեղ են թվում, նույնիսկ 6 տանկ են օգտագործել: Խումբը ստիպված էր Սարդարապատը թողնել և 4 կիլոմետր դեպի հյուսիս քաշվել»<sup>192</sup>: Մայիսի 27-ին Գյումրի-Համամլու ուղղությամբ Քարաբերիրն անձամբ է հայտնվում հայերի հարձակման կիզակետում: Սանրամասն նկարագրելով գործողությունների ընթացքը՝ Քարաբերիրը խիստ դժգոհություն է հայտնում սեփական բանակից, որն իր խոսքերով հազիվ է դիմակայում «ավազակներին» դժվար պայքարում<sup>193</sup>:

Ղարաբիլսայի հերոսամարտին անդրադառնալով՝ նշում է, որ [1918 թ. մայիսի 26, կիրակի] Ղարաբիլսայի ճակատում 11-րդ բատալիոնը հայերի հարձակումից հետո ստիպված է եղել հետ զնալ մոտ 4 կմ: «[1918 թ. մայիսի 28] 9-րդ բատալիոնը, ժամը 10-ը չեղած, տիրեց Ղարաբիլսային: Ավազակները երեկ զիշեր մի հարձակում են ձեռնարկել 800 հոգով, բայց 200 զնի են թողել: 9-րդ բատալիոնում 800 զնի կա: Անտառներում դեռ պարզ չի վիճակը: Ղարաբիլսայի ճակատը հայերի համար սարսափելի է: Հայերը հարավից Բաշապարանի կողմից հարձակվեցին, սակայն չկարողացան գրավել»<sup>194</sup>: Քարաբերիրը մանրամասնորեն ներկայացնում է նաև Բաշապարանում կովի ընթացքը՝ նշելով, որ թուրքերը մարտի արդյունքում նախ ստիպված են եղել քաղաքի հյուսիսային հատված հետ քաշվել, ապա պատասխան հարձակումով հին դիրքերն են գրավել<sup>195</sup>:

Ամբողջ տերասում Քարաբերիրը հայց բանակի զինվորներին անվանում է ավազակներ և նրանց փորձում է հակադրել խաղաղ հայ բնակչությանն ու ցույց տալ, որ բնակչությունը փորձում էր խաղաղության հասնել. «[ 1918 թ. մայիսի 6] Հայերը երկու

<sup>190</sup> Նոյն տեղում, էջ 497:

<sup>191</sup> Նոյն տեղում, էջ 501:

<sup>192</sup> Նոյն տեղում, էջ 504:

<sup>193</sup> Նոյն տեղում, էջ 507:

<sup>194</sup> Նոյն տեղում, էջ 506:

<sup>195</sup> Նոյն տեղում, էջ 507:

տեղում՝ Արփաշայում, մեր զորամիավորման մոտ են եկել սպիտակ դրոշակով, սպաներին հրավիրել են միասին տոնելու: Խնդրել են, որ տեղացի հայերը վերադառնան: Նրանց պատասխան տրվեց, որ նման իրավասություն չկա...<sup>196</sup>: [1918 թ. մայիսի 17, ուրբաթ] Ղարաբիլսայում՝ Գյումրու ճակատի մոտ այսօրվա գործողության ժամանակ, ժողովուրդն ամեն տեղ սպիտակ դրոշ էր կախել: Միայն Անիի կայարանում թերև կոլով մի ավազակ հանձնվեց»<sup>197</sup>: Գյումրի ներխուժելուց հետո Քարաբերիրը շարունակում է նույն ոճի գրառումներ անել՝ փորձելով ցույց տալ, որ քաղաքացիական անձինք կողմ են հաշտության և չեն պայքարում. «[ 1918 թ. մայիսի 24, ուրբաթ] Ճաշից հետո քայլեցինք բերդով, հիվանդանոցներով, քաղաքով: Մտանք քաղաքապետարան: Քաղաքապետարանի պատվիրակներից երկուսը մուտքման են, երկուսը՝ իրեա, երկուսը՝ ոռու, մնացածները՝ հայ: Քաղաքապետն ասաց, որ թուրքական բանակը իրենց մարդավարի է վերաբերվում: Խնդիրներն առաջացնողը մի շարք հայ ավազակներն են, և նրանց անիծում են»<sup>198</sup>: Բայց թուրք գեներալն անզամ իր գրառումներում չի կարողանում զավել ատելությունը օկուպանտ թուրքական բանակի դեմ պայքարողների հանդեպ, լինեն նրանք զինվորականներ, թե քաղաքացիական անձինք: Օրինակ՝ մայիսի 29-ի գրառման մեջ Քարաբերիրը նշում է. «Պայքարի դուրս եկած զուղերին պետք է անիրաժեշտ դաս տալ»<sup>199</sup>:

Տեղակայվելով Գյումրիում՝ Քարաբերիրն իր օրագրում գրառումներ է անում նաև քաղաքի մասին և բացահայտ հիացմունքով է խոսում. «Գյումրու գորանցները հրաշալի են: Ամրոցով քայլեցինք: Փողոցները կարգին են: Շուաբը տեղափոխեցի Գյում-

րի: ...Գյումրու մեր շտաբը քաղաքից մոտ երկու կիլոմետր հարավում պավիլյոններում է գտնվում: Հրաշալի է: Մինչ այժմ մեր ունեցած ամենալավ շտաբն է»<sup>200</sup>:

Իր օրագրերում զարմանալիորեն շանդրադառնալով 1918 թ. երեք անդրկովկայայն պետությունների անկախացման հարցին՝ Քարաբերիրը բավարարվում է՝ միայն փաստելով, որ հայերն ու վրացիները ունեն գերմանացիների աջակցությունը պետություն ունենալու հարցում, ապա՝ հունիսի 1-ով թվագրված գրառման մեջ նշում, որ հայերի հետ հաշտություն է կնքվել:

Զափազանց կարևոր է այն փաստը, որ դրանից հետո էլ թուրք գեներալի մոտ Հայաստանի հանդեպ ծավալապաշտական մտքերն ու նպատակները շարունակել են կենտրոնական տեղ գրադեցնել, և 1919-1920 թթ. իր օրագրերում դա ապացուցող բազմաթիվ գրառումներ կան: Հատկանշական է այն, որ Քարաբերիրը չի կարողանում թաքցնել հայերի հետ կապված իր ամենասարսափելի մղձավանջը՝ անկախ Հայաստանի ստեղծումը. «[1919 թ. մայիս 31] Հայաստանի երազանքը եթե իրականություն դառնա, մեր ժողովրդի ապրելու իրավունքի դեմ մահացու հարված կինի»<sup>201</sup>: Նույն՝ 1919 թ. մայիսի մեկ այլ գրառման մեջ Քարաբերիրը գրում է կրկին իր մտասներման մասին. «...Մեր տված հողերը հետ ենք վերցնելու և լավ խաղաղություն ենք կնքելու: Շատ պարզ բան՝ Հայաստանը գրավելու ենք: Անշուշտ, ոչ այսօր, բայց առաջին խև հնարավորության դեպքում: Սա է ամբողջ հայրենիքում խաղաղության հաստատման բանալին»<sup>202</sup>: 1919 թ. ապրիլի 19-ով թվագրված գրառման մեջ կարդում ենք հետևյալ միտքը. «Ես և բանակս հանուն սրա կմեռնենք և ուժով մեր ժողովրդի հա-

<sup>196</sup> Նոյն տեղում, էջ 499:

<sup>197</sup> Նոյն տեղում, էջ 503:

<sup>198</sup> Նոյն տեղում, էջ 505:

<sup>199</sup> Նոյն տեղում, էջ 507:

<sup>200</sup> Նոյն տեղում, էջ 503-504:

<sup>201</sup> Նոյն տեղում, էջ 582:

<sup>202</sup> Նոյն տեղում:

սանելիքը կվերցնենք: ...Իսկ հայերին մի հարվածով ոչնչացնելուց հեշտ բան չկա»<sup>203</sup>:

Ավելին, Քարաբերիրին բարկացնում է, որ իր զինակիցները կարծեն չեն հասկանում հայկական հողերի գրավման կարևորությունը. «[1920 թ. հունվարի 21] Հունվարի 20-ին Ազգային պլանը սկսեց կողավորված զալ (15-ին էր սկսել զալ: Այսօր վերջին հատվածը եկավ)... Պլանում հայերի մասին խոսք չկա: Մինչդեռ էրզրումում պատմել էի, որ հայերը պետք է մեր ազգային շարժման առաջին նպատակակետը լինեն: Մեր փրկության բանալին Արևելում է: Հետո հսկա ձնագնդի պես կգլորվենք դեպի արևմուտը»<sup>204</sup>:

Անկասկած, Քյազը Քարաբերիրի օրագրային գրառումները 1920 թ. թուրք-հայկական պատերազմի մասին ունեն հատուկ կարևորություն: Ռազմական գործողությունների ընթացքի նկարգրությունը ոչ թե պարզապես ականատեսի, այլ ակտիվ մասնակցի ու դեկազրի մոտեցումները պատկերացնելու, այս շրջանի թուրքական իշխանական էլիտայի զաղափարները հասկանալու տեսանկյունից օրագիրն ունի աղբյուրագիտական արժեքավոր նշանակություն: Քարաբերիրը չի էլ թաքցնում իր գերնպատակը՝ Հայաստանի Հանրապետությունը զավթելը, և դրա համար հատուկ ուշադրություն է դարձնում տարածաշրջանում, հատկապես Ռուսաստանում տեղի ունեցող գործընթացներին:

1920 թ. գարնանից Քարաբերիրը, ինչպես ինքն է նշում օրագրում, սկսում է քարոզչական միջոցներով հայերի վրա հարձակման հոդ պատրաստել, զուգահեռ գիտակցելով, որ բոլշևիկները զնալով ուժեղանում են՝ նա իր կառավարությանն առաջարկում է խորացնել նրանց հետ համագործակցությունը: Օրագրից պարզ է դառնում, որ Քարաբերիրը շարունակում էր իր կապը փախուս-

տի մեջ գտնվող երիտրուքական պարագուխներից Էնվեր Փաշայի հետ. «[1920 թ. հոկտեմբեր 23] Էնվերից նամակ ստացա: Հարցնում է՝ արդյոք Վրանգելը կարող է օգնել մեր երկրին: Մեզ փող ու գենք է պետք»<sup>205</sup>:

Հայաստանի Հանրապետության դեմ լայնածավալ հարձակման համար արվում էին նաև որոշ սաղրիչ քայլեր, և դրանց մեջ կարևոր է Օլթիում տեղի ունեցած իբրև թե հայերի հարձակումը, ինչի կապակցությամբ քեմալականները մարտի 22-ին Երևան են ուղարկում բողոքի նոտա «Օլթիում տեղի ունեցող կոտորածը» դադարեցնելու կոչով և հակառակ պարագայում սպառնալով «վատ հետևանքներով»<sup>206</sup>: Չնայած մարտ-ապրիլ ամիսների հայթուրքական բախումներին, որոնք օր օր նշված են Քարաբերիրի օրագրում, այդ ժամանակ լայնածավալ գործողություն թուրքերը չեն սկսում: Նրանք կարծեն սպասում են առավել հարմար պահի: Հայաստանի հետ բախումներն ուժեղանում են հունիս-հուլիս ամիսներին, սակայն հունիսի 9-ի գրառման մեջ էլ Քարաբերիրը նշում է, որ մի անտեսանելի ձեռք թույլ չի տալիս լայնածավալ գործողության անցնել<sup>207</sup>: Սրա հետ մեկտեղ տարբեր ուղղություններով հայ-թուրքական մարտերի, զոհերի, վիրավորների, գերիների, տեխնիկայի ձեռքբերման կամ կորստի մասին տվյալները հունիս-հուլիս ամսվա օրագրային գրառումների մեջ մասն են կազմում:

1920 թ. սեպտեմբերի 23-ին թուրքական գորքերը սկսում են լայնածավալ պատերազմական գործողություններ Հայաստանի Հանրապետության դեմ: Նկարագրելով պատերազմի սկզբնական փուլը՝ Քարաբերիրն անթաքոյց հպարտությամբ է պատմում հայերին խաբող հնարքների մասին. «Մեպտեմբերի 30-ին հայե-

<sup>203</sup> Նոյն տեղում, էջ 570:

<sup>204</sup> Նոյն տեղում, էջ 606:

<sup>205</sup> Տեղին տեղում, էջ 616:

<sup>206</sup> Տեղին տեղում, էջ 627:

թին լրտեսների միջոցով փոխանցեցինք՝ «ավելի առաջ չենք կարողանալու գևալ, մեր ուժը բավարար չէ»<sup>208</sup>: Նման ձեռվ հայկական կողմի զգնությունը թուլացնելով՝ թուրքերն անցնում են լայնածավալ հարձակման ու գրավում նախ Կարսը, ապա՝ Ալեքսանդրյապոլը՝ Գյումրին:

Քարաբերիրն ընդգծված սնապարծությամբ է ներկայացնում Կարսի գրավումը. «[1920 թ. նոյեմբերի 30] Ժամը 8-ին Կարսի արևելյան ճակատում հայկական բանակի վրա հարձակում: 11:30-ին 9-րդ բանակը մտավ հյուսիս-արևելքում գտնվող միջնաբերդ: 3 ժամ տևած մարտում հայկական բանակը ցաքուցրիվ եղավ: 3:30-ին մտանք Կարս: Միայն հարավային ճակատում՝ Չիմենքարյայում, դեռ դիմադրություն կար: Այդ էլ ավարտվեց»<sup>209</sup>:

Շարունակելով գրառումները Քարաբերիրն անդրադառնում է Գյումրու գրավմանը. «[1920 թ. նոյեմբերի 2] Զորքը Կարսից շարժվում է Գյումրու ուղղությամբ<sup>210</sup>: ...հայկական կառավարության խաղաղության առաջարկն ու Գյումրու խմբի հրամանատարի հրադադարի առաջարկը եկան: Երեկ երեկոյան են տվել մեր գինվորներին: Գրեցի, որ հայկական հրադադարը կընդունեմ միայն Գյումրին մեզ հանձնելու պայմանով: ...[1920 թ. նոյեմբերի 7] հայկական բանակի գեներալը ժամը 2-ի կողմերը առաջարկու ընդունեց: Գրել է կառավարությանը: Կառավարությունը հրամայել է մինչև ժամը 6-ը հանձնել Գյումրին: 11:20 այս մասին ոռուսերեն նամակ ստացա»<sup>211</sup>:

Քաղաքի հանձնումից հետո սկսված խաղաղության բանակցությունները նկարագրելիս Քարաբերիր գրում է. «[1920 թ. նոյեմբերի 8] ...Հայերին ամս ի 8-ով թվագրված խաղաղության

առաջարկը տվեցինք... [1920 թ. նոյեմբերի 9] Հայաստանի արտգործնախարարը երեկոյան գևացրով մի սպա է ուղարկել, իրադադարի պայմանները առավոտյան են ստացել, ուսումնասիրելու ու պատասխանելու համար խնդրեց 24 ժամ: Համաձայնեցի... [1920 թ. նոյեմբերի 10] ժամը 7:15-ին գևացրով Էմամլից եկած հայ սպան հայտնեց, որ արտզործ նախարարությունն ընդունում է մեր պայմանները»<sup>212</sup>: Խատիսյանի դեկավարած հայկական պատվիրակության հետ նոյեմբերի 25-ին սկսած բանակցությունները Քարաբերիրն իր օրագրում այսպես է նկարագրում. «Ասացի, որ հայ և թուրք ժողովուրդներին անկեղծ կյանքի մաղթանքով եմ սկսում նիստը... Մեր առաջին գրավոր առաջարկը Սևրի պայմանագրից հրաժարումն էր: Նա [Խատիսյանը] ասաց, որ իրենց զալն առանց այդ էլ դրա ապացույցն է: Մի քիչ բանակցելուց հետո համաձայնեցին»<sup>213</sup>: Բանակցությունների երրորդ օրը՝ նոյեմբերի 27-ը ներկայացնող գրառման մեջ ասվում է. «Տոնում ենք Սևրի պայմանագրի ոչնչացումը...»<sup>214</sup>: Ավարտելով իր կործանիչ ռազմական ու դիվանագիտական գործունեությունը Հայաստանի Հանրապետության դեմ՝ Քարաբերիրը օրագրում հակիրճ անդրադառնում է Հայաստանի խորհրդայնացմանն ու ուսկոմի պատվիրակության՝ Գյումրի մուտքին և նշում, որ դեկտեմբերի 13-ին շտաբը Գյումրուց Կարս են տեղափոխել»<sup>215</sup>:

Ամփոփելով Հայաստանի և հայության ճակատագրում ընդգծված բացասական դերակատարում ունեցած թուրք գեներալ Քյազըր Քարաբերիրի օրագրի և հուշերի քննությունը՝ կարևոր ենք համարում նշել, որ նրան մինչև իր կյանքի վերջ թուրքիայում ընկալել են որպես «Հայաստանի նվաճող»: Դա յուրահատուկ տիտղոս է եղել, որը, կարելի է ասել, համընդհանուր ճանաչում ու

<sup>208</sup> Նույն տեղում, էջ 652:

<sup>209</sup> Նույն տեղում, էջ 657:

<sup>210</sup> Նույն տեղում, էջ 658:

<sup>211</sup> Նույն տեղում, էջ 660:

<sup>212</sup> Նույն տեղում:

<sup>213</sup> Նույն տեղում, էջ 662:

<sup>214</sup> Նույն տեղում, էջ 663:

<sup>215</sup> Նույն տեղում, էջ 668:

ընդունելություն է ստացել Թուրքիայի և՝ քաղաքական, և՝ հասարակական շրջանակներում: Հենց ինքը՝ Քարաքեքիրը, ավելի ուշ շրջանի իր օրագրային գրառումներում անդրադառնում է դրան: օրինակ՝ Նկարագրելով 1923 թ. նոյեմբերի 24-ին իր այցը Էղիոնե՝ նշում է, որ կայարանում ժողովուրդն իրեն զերմ ողջունել է, և նրանց մեջ են եղել նաև դպրոցականներ, որոնցից մի աղջիկ իր կրծքին փակցրել է լայն ժապավեն, որի վրա զրված է եղել «Կեցե Հայաստանի նվաճողը»<sup>216</sup>: Հետագայում էլ Քարաքեքիրը Թուրքիայի տարբեր դպրոցներում, համալսարաններում, ուսումնական ուսումնարաններում հաճախ հանդես է եղել դասախոսություններով՝ պատմելով իր հուշերը Հայաստանը նվաճելու մասին, որը վերնագրել է «Այն մասին, թե ինչպես ոչնչացրի Հայաստանը»: Կյանքի վերջում էլ Քարաքեքիրը Հայաստանի դեմ իր դեկավարած պատերազմների ու պարտադրած պայմանագրերի հիշողության նկատմամբ պահպանել է հատուկ վերաբերմունք և անգամ ուշադրություն դարձրել խորհրդանշական իրերին: Դրա վկայություններից է այն, որ 1945 թ. նոյեմբերի 21-ին օրագրում հատուկ նշում է արել, որ այդ օրը «Գյումրիի (Ալեքսանդրապոլի – Ռ.Ս.), Մոսկվայի, Կարսի պայմանագրերը ստորագրած երեք գրիչները ուղեկցող մի նամակով նվիրեցի Հեղափոխության ինստիտուտին»<sup>217</sup>:

#### **6.4. Թուրքիայի երկրորդ նախագահը Հայաստանի և Հայկական հարցի մասին**

Թուրքիայի Հանրապետության պատմության ամենաառաջային դեմքերից մեկը՝ զեներալ Իսմեթ Ինյոնյուն, որը ուսումնական գործունեությունը դադարեցնելուց հետո երկար տարիներ եղել է

Թուրքիայի վարչապետը, իսկ 1938-1950 թթ.<sup>218</sup> նախագահը, նույնպես զրի է առել և հրատարակել իր հուշերը: Թուրքիայի ու տարածաշրջանի աշխարհաքաղաքական, ուսումնական, քաղաքական և այլ խնդիրներին վերաբերող հուշերում ու օրագրերում Իսմեթ Ինյոնյուն անդրադառնում է ինչպես Հայաստանի Հանրապետության դեմ պատերազմին, այնպես էլ Լոզանի բանակցությունների ժամանակ Հայկական հարցի մի բաղկացուցիչ հատված հանդիսացող՝ Թուրքիայում «Հայկական ազգային օջախ» ստեղծելու հարցի տապալմանը:

1920 թ. Հայաստանի Հանրապետության վրա հարձակվելուց առաջ, քեմալականներն ակտիվորեն հարաբերվում են Ռուսաստանում իշխանությանը տիրացած բոլշևիկների հետ և կարողացել են ձևափորել դրական, անզամ բարեկամական հարաբերություններ: Հայաստանի վրա հարձակումը նույնպես քննարկվել է թուրք-ռուսական բանակցություններում, և այդ մասին իր հուշերում անդրադարձել է նաև Իսմեթ Ինյոնյուն՝ բացելով որոշ փակագծեր: «Քանի որ ռուսները դաշնակցական (Հայաստանի Հանրապետության – Ռ.Ս.) կառավարությանը դեմ են և բացահայտ հավանություն չեն տալիս հայերի կողմից մեր արևելյան նահանգներն օկուպացնելու հարցին, ուստի այդ հանգամանքը մեզ համարձակություն էր տալիս և հայկական կառավարության թույլ կողմն էր»<sup>219</sup>: Խոսելով իրենց նպատակների մասին՝ Ինյոնյուն հստակ նշում է. «Մեր իրական նպատակն էր ոչնչացնել հայկական զինված ուժերը»<sup>220</sup>:

Իսմեթ Ինյոնյուն իր հուշերում մեծ տեղ է տալիս Լոզանի բանակցությունների նկարագրությանը. լինելով թուրքական պատվիրակությանը դեկավարը՝ Ինյոնյուն երկար տարիներ թուրքական պաշտոնական քարոզության կողմից ներկայացվել է որպես

<sup>216</sup> Նոյն տեղում, էջ 889-890:

<sup>217</sup> Նոյն տեղում, էջ 1407:

<sup>218</sup> İsmet İnönü, Hatıralar, Ankara, 2014, s. 211.

<sup>219</sup> Նոյն տեղում, էջ 212-213:

«Լոգանում Թուրքիայի դիվանազիտական հաղթանակի կերտող»: Լոգանի բանակցությունների ժամանակ ամենալարևոր և խնդրահարուց հարցերից մեկը Թուրքիայի տարածքում հայերի ու հովսերի ցեղասպանություններից հետո գոյատևած քրիստոնյաների խնդիրն էր, որը քեմալականների համար առաջնային կարևորություն ուներ: Այս խնդիրն իր հերթին ուներ ածանցյալ այլ բաղադրիչներ ևս, որոնք վերաբերում էին ինչպես թուրքական իշխանություններին, այնպես էլ արևմտյան տարբեր պետություններին և նրանց տված խոստումներին ու ստանձնած պարտավորություններին: Լոգանում փոքրամասնությունների հարցով երկարատև բանակցությունների ու բանավեճերի ժամանակ թուրքական պատվիրակության դեկավար Իսմեթ Փաշան բազմից հայտարարել է, որ Թուրքիան կճանաչի այն բոլոր իրավունքները, որոնք տարբեր երկրներում ունեն փոքրամասնությունները և որևէ բացառություն չեն ընդունի, որևէ վերահսկողության համաձայն չեն լինի և կընդունեն Առաջին համաշխարհային պատերազմից հետո կնքած պայմանագրերում փոքրամասնությունների վերաբերյալ սահմանված բոլոր կետերը<sup>220</sup>: Իսմեթ Փաշային անհանգստացրել է անգամ «փոքրամասնությունների պաշտպանություն» հաճախ կրկնվող արտահայտությունը, և նա ռեպիկի կարգով հայտարարել է, թե հովս ունի, որ այդ արտահայտության կիրառմամբ նպատակ չունեն վիրավորելու Թուրքիայի ամբողջականությունը և միասնականությունը: Ի վերջո, Լոգանի պայմանագրում տեղ էն գտել ոչ մուսուլման փոքրամասնությունների և նրանց իրավունքների վերաբերյալ դրույթներ, սահմանումներ (37-44-րդ հոդվածներ), սակայն որևէ շեշտադրում չկա «հատուկ, առանձնակի» կարգավիճակի վերաբերյալ,

ինչը, փաստորեն, թուրքական կողմի սկզբունքային պահանջներ:

Լոգանի բանակցությունների ժամանակ առաջ է քաշվել Թուրքիայի տարածքում «Հայկական ազգային օջախ» ստեղծելու հարցը, որը պաշտպանել են արևմտյան տերությունների ներկայացուցիչներ. նրանցից ոմանք քանից հրապարակավ մեղադրել են թուրքական իշխանություններին ու ընդհարվել թուրքական պատվիրակության հետ: Ի սկզբանե թուրքական պատվիրակությունը և անձամբ Իսմեթ Փաշան, հենվելով ԹԱՄԾ-ի պատրաստած ուղեցույցի վրա, կտրականապես չեն ընդունում Թուրքիայում «Հայկական ազգային օջախ» ստեղծելու գաղափարը, իսկ եթե այլ պետություններ շարունակեին պնդել այդ հարցը, ապա անհրաժեշտության դեպքում նա լիազորված էր ընդհատել բանակցություններն առանց նույնիսկ նախօրոք տեղյակ պահելու Անկարային: Իր հուշերում Իսմեթ Ինյոնյուն նկարագրում է Լոգանի բանակցությունների ժամանակ շվեյցարացի մի պրոֆեսորի հետ ունեցած բանավեճը: Ի պատասխան շվեյցարացու Հայկական հարցի ու Թուրքիայում «Հայկական ազգային օջախ» ստեղծելու մասին հայտարարությունների՝ Իսմեթը նշել է. «Մեզ համար «Հայկական հարց» չկա: Մենք նոր պետություն ենք, ուրիշ պետություն ենք: Ես գիտեմ, որ Համաշխարհային պատերազմի ժամանակ շատ բաներ են տեղի ունեցել: Համաշխարհային պատերազմն ամբողջ աշխարհի համար չորս տարի է տևել, իսկ մեզ համար՝ ութ տարի: Տեղի են ունեցել ավելի շատ բաներ, քան թե դուք գիտեք»: Դրանից հետո Իսմեթն ավելի կոշտ շեշտադրում հայտարարել է, որ շվեյցարացի պրոֆեսորի ներկայացրած պահանջներն անընդունելի են, և իրենք չեն կարող համաձայնել «Թուրքիայի մասնատմանը»<sup>221</sup>: Թուրքական պատվիրակությունն

<sup>220</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 356:

<sup>221</sup> Նոյն տեղում, էջ 352:

ընդհանրապես սկզբունքային էր՝ շմասնակցել որևէ բանակցության կամ նիստի, որտեղ կխոսվեր Հայկական հարցի մասին:

Իսմեր Ինյոնյուն իր հուշերում որոշ մանրամասներ է ներկայացնում Լոգանի բանակցությունների ժամանակ «Հայկական ազգային օջախի» ստեղծման հարցի շուրջ տեղի ունեցած կուլտուրային զարգացումներից: Այսպես, ըստ Ինյոնյուի, բանակցությունների ժամանակ նրա մոտ է եկել «Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախկին նախարարներից Նորատունլյան<sup>222</sup> Էֆենդին Փաշայան ազգանունով մեկի հետ», որը, ըստ Ինյոնյուի, «հայ իին հեղափոխականներից էր»: Իսմերը նշում է, որ ինքը համաձայնել է հանդիպել նրանց հետ՝ ենթադրելով, որ «պետության ամենաբարձր պաշտոններից մեկը վարած» անձը պետք է որ լավ ծանոթ լիներ «թուրքերի մոտեցումներին» ու փոքրամասնությունների վերաբերյալ դիրքորոշմանը: Հանդիպման ընթացքում ի պատասխան Նորատունլյանի այն մտքին, թե «թուրքերի և հայերի միջև շատ բաներ են տեղի ունեցել», Իսմերը պատասխանել է, թե իրենք ո՞չ նախկինում, ո՞չ էլ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի ու թուրքերի միջև տեղի ունեցած դեպքերի հետ «որևէ կերպ կապ չունեցող մարդիկ են», քննարկվող դեպքերից «լրիվ հեռու», «նոր մարդիկ են», իսկ իրենց պետությունն էլ «լիովին նոր պետություն է»<sup>223</sup>: Այնուհետ Նորատունլյանն ուղղակի հայտարարել է. «Մենք պահանջում ենք հայկական օջախ: Թուրքիայի որևէ հատված պետք է առանձնացներ և հանձնեք մեզ: Դրան հետևել են Իսմերի բացահայտ ծաղրանքով և թույլ քողարկված հեզնանքով հարցերը. «Որտե՞ղ եք ուզում. արևելքո՞ւմ, հարավո՞ւմ, արևմուտքո՞ւմ»: Նորատունլյանը պատասխանել է. «Որտեղ ուզում եք, թող լինի, մեզ մի տեղ տվեք որ-

պես հայկական օջախ, մենք այնտեղ հավաքվենք, այնտեղ ապրենք»<sup>224</sup>: Իսմերը, բնականարար, մերժել է այդ պահանջը և կրկին ծաղրանքով հարցը, թե ինչպես պետք է հայերը հավաքվեն իրենց շպատկանող տարածքում և այնտեղ պետություն ստեղծեն: Նորատունլյանը դրանից հետո, ըստ Իսմերի, սկսել է խոսել սպառնալիքներով՝ նշելով, թե իրենց ձեռքի եկածն անելու են, և դրանց հետևել են թուրքական պատվիրակության ղեկավարի հետևյալ խոսքերը. «Լսի՞ ր, իսկ իիմա արդեն լուրջ եմ խոսում: Ես լուրջ մոտեցած ձեր՝ ինձ հետ հանդիպելու ցանկությանը..., սակայն ձեր խոսքերը հիասթափեցրին ինձ: Չատ հստակ հայտարարում եմ. մենք ձեր պահանջները չենք ընդունում... Դուք եք ուզում եք, կարող եք մինչև վերջ պայքարել պայքարե՞ք: Ավարտելով խոսակցությունը՝ Իսմերը հայտարարել է, որ այս ցանկություն չունի հանդիպել նրանց հետ, և հաջորդող օրերին իբրև թե Նորատունլյանը քանից փորձել է հանդիպել նրան, սակայն նա մերժել է<sup>225</sup>: Իհարկե, այս դրվագում Իսմեր Ինյոնյուն դեպքերը նկարագրում է իրեն ցանկալի ձևով, և չենք կարծում, որ Գարբիել Նորատունլյանը, որը ոչ միայն գրադեցրել է Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարի պաշտոնը, այլև խորությամբ տեղյակ է եղել օսմանյան/թուրքական քաղաքական մտածողությանը, կարող էր քեմալականների ներկայացուցիչների հետ շփվելիս նման դյուրահավատ վերաբերմունք դրսերել: Սակայն միննոյն ժամանակ չենք կարող ժխտել, որ ինչպես նախկինում, այնպես էլ այդ շրջանում հայ հասարակական-քաղաքական միտքը հաճախ չարդարացված վստահություն և հավատ ուներ հատկապես արևմտյան պետությունների տված խոստումների հանդեպ. Լոգանի բանակցությունները ևս, ցավոք սրտի, բացառություն չին:

<sup>222</sup> Ակատի ունի 1912 թ. Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Գարբիել Նորատունլյանին:

<sup>223</sup> Ismet İnönü, Աշվ. աշխ., էջ 350:

<sup>224</sup> Առյևս տեղում:

<sup>225</sup> Տե՛ս Առյևս տեղում, էջ 351:

Բավական հետաքրքիր և միևնույն ժամանակ ցավալի են այն մանրամասները, որոնք ներկայացրել են Լոզանի բանակցությունների մասնակիցները՝ կապված արևմտյան երկրների և հատկապես բրիտանական պատվիրակության պահվածքի հետ, մասնավորապես դրանց հակասական բնույթը, որը ցայտուն դրսերպել է հրապարակային ու կուլտուրային քննարկումներում։ Այսպես, բաց քննարկումներում անզիացիները բավական շատ և ակտիվորեն անդրադարձել են Թուրքիայում փոքրամասնությունների խնդիրներին, հանդես եկել նրանց իրավունքների «անխոնջ պաշտպանի» դիրքերից։ Այդ պահվածքն առաջացրել է նաև Իսմեր փաշայի անհանգստությունը։ Ինչպես ինքն է նշում, նա մի օր հրավիրել է անզիական պատվիրակությունից «շատ լավ աշխատող, խելքը զլիխն և փորձառու մի դիվանագետի», որին հարցըրել է, թե ինչու են անզիացիները փոքրամասնությունների հարցում նման պահվածք որդեգրել, արդյոք ուզում են բանակցությունները դադարեցնել։ Դրան ի պատասխան՝ փորձառու դիվանագետը Իսմերին վստահեցրել է, որ ամեն ինչ նորմալ է, և խորհուրդ տվել քնական համարել փոքրամասնությունների խնդիրների վերաբերյալ ցուցադրական ելույթներն ու բարձրացած աղմուկը։ «Իսմեր թ փաշա, տարիներով շատ բաներ ենք ասել, շատ բաներ ենք խոստացել։ Աշխարհով մեկ շատ պարտավորություններ ենք ստանձնել։ Հիմա, երբ դրանց վերջ է տրվում, ինչո՞ւ ես զարմանում այս ձևականությունների վրա, որոնք արվում են»<sup>226</sup>։

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՔՅՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

### *ա) ԽՈՂԱՋԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՕՐԱԳՐԵՐ*

1. Ağaoğlu A., Mütareke ve Sürgün Hatıraları (Yayına Hazırlayan: Ertan Eğribel, Ufuk Özcan), İstanbul, Doğu Kitabevi, 2010.
2. Ahmed Refik (Altınay), Kafkas Yollarında (Hatıralar ve Tahassüsler), İstanbul, Milli Eğitim Bakanlığı Yayınları, 2001.
3. Altınay R. A., İki Komite İki Kitâl, (ed. Haluk Dursun), İstanbul, 1999.
4. Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, (derleyen: Hulusi Turgut), İstanbul, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 15. Basım, 2016.
5. Bardakçı M., Talât Paşa'nın Evrak-ı Metrûkesi: Sadrazam Talât Paşa'nın özel arşivinde bulunan Ermeni tehciri konusundaki belgeler ve hususî yazışmalar, İstanbul, Everest Yayınları, 4. Basım, 2009.
6. Barutçu F. A., Siyasi Anılar 1939-1954, İstanbul, Milliyet Yayınları, 1977.
7. Bleda M. Ş., İmparatorluğun çöküşü, İstanbul, 1973.
8. Celal Bayar, Kayseri Cezaevi Günlüğü (Hazırlayan: Yücel Demirel), İstanbul, Yapı Kredi Yayınları, 2-inci Baskı, 1999.
9. Dr. Rıza Nur, Hayat ve Hatıratım, İstanbul, Altındağ Yayınevi, II Cild, 1967.
10. Dr. Rıza Nur, Hayat ve Hatıratım, İstanbul, Altındağ Yayınevi, III Cild, 1967.
11. Falih Rıfkı Atay, Zeytin Dağı, İstanbul, Milli Eğitim Bakanlığı Yayınları, 1989.
12. Halide Edib, Memoirs of Halide Edib, NY, The Century Co., 1926.
13. Halide Edib, The Turkish Ordeal, NY, The Century Co., 1928.

<sup>226</sup> Նոյն տեղում, էջ 354-355։

14. Halide Edip Adıvar, *Mor Salkımlı Ev*, İstanbul, Can Yayıncıları, 2007.

15. Halide Edip Adıvar, *Türk'ün Ateşle İmtihanı*, İstanbul, Can Yayıncıları, 2016.

16. Hülagü M., *Sultan Abdülhamid'in sürgün günleri. Hususi doktoru Atif Hüsein beyin hatıraları*, İstanbul, 2007.

17. Hüseyin Cahit Yalçın, *Siyasal Anılar*, İstanbul, Türkiye İş Bankası Kültür Yayıncıları, 1976.

18. İsmet Bozdağ, *Sultan Abdülhamid'in Hatıra Defteri*, İstanbul, 1985.

19. İsmet İnönü, *Defterler (1919-1973)*, 1. Cilt (Hazırlayan Ahmet Demirel), İstanbul, Yapı Kredi Yayıncıları, 3. baskı, 2008.

20. İsmet İnönü, *Hatıralar*, Ankara, Bilgi Yayınevi, 4. Basım, 2014.

21. Kabacalı A., Cemal Paşa: *Hatıralar*, İstanbul, 2015.

22. Karabekir K., *Günlükler (1906-1948)*, 1-2. Cilt, (Hazırlayan Y. Demirel), İstanbul, 2009.

23. Liman von Sanders, *Türkiye'de Beş Sene: Bir Alman Paşasının Çanakkale ve Filistin Hatıraları Askeri Tarih Encümeni'nin Cevaplarıyla*, İstanbul, Yeditepe Yayınevi, 2013, 6. Baskı.

24. Mareşal Fevzi Çakmak, *Birinci Dünya Savaşı'nda Doğu Cephesi*, Ankara, Genelkurmay Basım Evi, 2005.

25. Morgenthau H., *Ambassador Morgenthau's Story*, New York, 1918.

26. Osmanoğlu A., *Babam Sultan Abdülhamid*, İstanbul, 2013.

27. Refik A., *Two Committees Two Massacres*, Firodil Publishing House, 2006.

28. Sürgünden İntihara: Dr. Reşid Bey'in Hatıraları, (Hazırlayan Ahmet Mehmetefendioğlu), İzmir, Tükelmat, 1992.

29. Tahsin Paşa, *Yıldız Hatıraları*, (Hazırlayan: A. Z. İzgöer), İstanbul, 2015.

30. Ногалес Р., Четыре года под полумесяцем, Москва, 2006.

*թ) Մեհագրություններ*

1. Ալյաջնայ Ա. Ռ., Երկու կոմիտե՝ երկու ոճիր, Երևան, 1997:
2. Անումյան Ս., Ճանաչում և դատապարտում. երիտրուրթերի դատապարտությունները (1919-1921 թթ. և 1926 թ.), Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013:
3. Եազրձեան Գ., Ապտիւ Համիտ Բ. կարմիր սուլթանը, Պեյրութ, 1980:
4. Դողոսյան Վ., Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիրական պատմագրության հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ), Երկրորդ հրատարակություն, Երևան, 2011:
5. Սարգսյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափնյութմբ թուրք պատմագրության մեջ, Երևան, Հայաստանի պետական հրատարակչություն, 1963:
6. Սաքրաստյան Ռ., Սուսրաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Երևան, «Տիր» հրատարակչություն, 2019:
7. Özdemir H., Cemal Paşa ve Ermeni Göçmenler: 4. Ordu'nun İnsani Yardımları, İstanbul, 2009.
8. Adak H., Halide Edib ve Siyasal Şiddet: Ermeni Kırımı, Diktatörlük ve Şiddetsizlik, İstanbul, 2016.
9. Алькаева Л., Очерки по истории турецкой литературы 1908-1939 гг., Москва, 1959.
10. Зулалян М., Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии, Ереван, Издательство Академии наук Армянской ССР, 1970.

### **գ)Հոդվածներ**

1. Birinci A., Sultan Abdülhamid'in Hatıra Defteri, DÎVÂN İlmi Araştırmaları, sy. 19 (2005/2), s. 177-194.
2. Müezzinoğlu E., İzmir Suikasti ve Ahmet Şükrü Bey, International Journal of Social Science, 2015, N: 38, p. 155-176.
3. Talat Bey'in gelecekteki Alman-Türk ilişkileri konusunda açıklamalar, Berliner Tageblatt, 19, 01, 1916; Alman Basınında Atatürk ve Türkiye Cumhuriyeti (1910-1944) (hazırlayan S. Eriş Ülger), Ankara, TBMM Vakfı Yayınları, 1995, s. 66.
4. Աբդուլ Համիդի յիշողությունները, «Հորիզոն», 1913, 21, 23, 24, 27 թիվ 41-44:
5. Հակոբյան Տ., Աբդուլ Համիդ II-ի աքսորի տարիները ժամանակակիցների հուշերում, «Հայագիտության հարցեր», 2018, 3 (15), էջ 97-107:
6. Հակոբյան Տ., Հայկական թեմատիկան Աբդուլ Համիդ 2-րդի հուշագրություններում, «Արևելագիտության հարցեր», հասոր 9, Երևան, 2015, էջ 137-149:
7. Մելքոնյան Ռ., Հայոց Ցեղասպանության կազմակերպիչների և իրականացնողների հերոսացման գործընթացը Թուրքայում (1920-ական թվականներ), «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2015, թիվ 2 (199), էջ 61-71:
8. Փափազյան Ա., Թուրքական պետական և քաղաքական գործիչները արևմտահայության մասին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 1985, Հասոր 12, էջ 80-97:

### **Բովանդակություն**

ԱՌԱՋԱԲԱՆ	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ ԵՐԿՐՈՐԴԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ	
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ	7
1.1. Գահընկեց սուլթանի կամ նրան վերագրվող հուշերը	7
1.2. Աբդուլ Համիդ Երկրորդի անձնական գրագիր Թահսին փաշայի հուշերը	9
1.3. Աբդուլ Համիդ Երկրորդի անձնական բժիշկ Աբդֆ Հուսեյն բեյի հուշերը	11
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ԵՐԻՏԹՈՒՐՔ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆՑԱՆԵՐԻ ՀՈՒՇԵՐԸ	17
2.1. Զեմալ փաշայի հուշերը	17
2.2. Դիարբերի նահանգապետ դոկտոր Ռեշիդի բանտային օրագիրը	24
2.3. Հայկական հարցը Միղհարթ Շյուլլը Բլեղայի հուշերում	28
2.4. Երիտթուրք լրագրող և պատզամակոր Հուսեյն Զահիր Յալշընի հուշերը	34
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔ ՊԱՏՍԱԲԱՆ ԱՀՄԵԹ ՌԵՖԻՔ ԱԼԹԸՆԱՅԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ	38
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ	
ՀԱՅԵՐՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԹՈՒՐՔ ԿԻՆ ԳՐՈՂ ՀԱԼԻԴԵ ԷԴԻՓ ԱԴՐՎԱՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ	44
ԳԼՈՒԽ ՀԻՎԵՐՈՐԴ	
ՕՍՄԱՆՑԱՆ ՄԱՍԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԳՏՆՎԱԾ ՕՏԱՐԱԶԳԻՆԵՐԻ ՀՈՒՇԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ	56
5.1. Մարշալ Լիման ֆոն Սանդերսի հուշերը	56

<b>5.2. Ուսմայել դե նոզալեսն ու «Կիսալուսնի տակ չորս տարի»</b>	
<b>գիրքը.....</b>	<b>58</b>
<b>ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ</b>	
<b>ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԹՈՒՐՔ ՈԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ</b>	
<b>ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀՈՒՇԵՐԸ .....</b>	<b>68</b>
<b>6.1. Պակապուրքիզմի «հոգևոր հայրերից» Ծրզա Նուրի հուշերը</b>	
<b>Հայկական հարցի և հայության մասին.....</b>	<b>68</b>
<b>6.2. Քեմալ Աթաթուրքի «զաղտննելեր»</b>	
<b>Քըլը Ալին հայերի մասին .....</b>	<b>79</b>
<b>6.3. Հայկական հարցը և հայերը Քյազըմ Քարաքերիքի</b>	
<b>հուշերում .....</b>	<b>84</b>
<b>6.4. Թուրքիայի երկրորդ նախագահը Հայաստանի և</b>	
<b>Հայկական հարցի մասին .....</b>	<b>96</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ</b>	
<b>ԱՐԵՅՈՒՐՆԵՐԻ ՑԱՆԿ.....</b>	<b>103</b>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ